ԱՇՆԱՆ ԱՐԵՎ

Մոսկվայից, Ծմակուտի վրայով, Երևան են հասնում մի 100 րոպեում, իսկ Ծմակուտից Երևան հասնելու համար պետք է գնալ մի ցերեկ ու մի գիշեր:

– Մեր գյուղը, խնամի ջան, հեռո՜ւ, հեռու…

– Էնպես էս ասում հեռու, կարծես Հայաստանից դուրս է:

– Հայաստանից դուրս է, աշխարհից էլ դուրս է:

Այնտեղ օրերով ու տարիներով բազեն անում է նույն շրջանը գյուղի ու հավերի գլխին, բլուրների արանքից կարկուտը փախս է ընկնում՝ ջարդելու արտ ու լոր, քամին շպրտում է փեթակների տանիքները և փեթակների մեջ անձրև է լցվում, ձին բերելու գնացած երեխան ձորի այս լանջին մոլորվում է, մյուս լանջին կանգնել է թաց ձին, իսկ ձորը լցվել է սև հեղեղի վշշոցով, հարյուր տարի է՝ ճաք է տվել մեծ ժայռը և չի փլվում ու չի փլվում, և մարդ չգիտի՝ տունը ժայռատակի տափարակի՞ն սարքի, թե Սիմոնի տնից վերև, բացատի եզրին: Իսկ եթե ոչ այնտեղ, ոչ էլ այնտեղ, այլ, հազիվ առիթ է, չեղած բեռները կապի ու քոչի Երևա՞ն: Սիմոնի գործերը լավ դասավորվեցին, Երևան տղա ունի, իսկ շոգերից փախչելու հարցն էլ՝ Ծմակուտը քեզ պատրաստի ամառանոց: Աղունը նպատակին հասավ. հարս գալու օրից՝ քաղաք, քաղաք, քաղաք, ուզածն էլ ընդամենը Մանացի պես մի բան էր, իսկ ահա քսանհինգ տարեկան տղա ունի Երևանի պես տեղը:

– Սերո՜:

Փառանձեմին պարտք մնաց երեսուն ձու: Էն անգամ որդին ասաց. «Չուն տասը կոպեկ է, շուկան քթերիս տակ է»: Չի հասկանում, քեռուն է քաշել, երբեք էլ լավ չի ապրի, փող հաշվել չգիտի, բուռ-բուռ ստանում է, բուռ-բուռ էլ ծախսում: Նրա կինը պիտի տնտես լինի:

– Սերո, հինգ հարյուր ձուն տասը կոպեկով ինչքա՞ն փող է անում:

– Որ ինձ հետդ չես տանում՝ ես էլ չեմ ասի:

– Թվաբանությունդ սովորեցի՞ր: Էդ ի՞նչ էս կարդում:

– Որ ինձ հետդ չես տանում՝ քո գործը չի:

– Մի թղթի վրա գրիր երեսուն ձու Փառանձեմին:

– Որ ինձ հետդ չես տանում՝ ես էլ չեմ գրի:

– Վեր թռիր տեղիցդ… Գնա տես էն ձին արածո՞ւմ է, թե խճճվել է:

Թվաբանությունից որդին էլ թույլ էր: Քննության էր գնալու, փայտ էր ջարդում, ոտքը կտրեց: Խոր չէր կտրել, բայց որ քննության էր գնալու՝ լաց եղավ. «ցավում է, ցավում է, ցավում է»: Սիրանույշն ասաց՝ «Աղավնի, տուժած կին ես, նշանակում եմ, բայց առանց թվաբանության երեխադ ապագա չի ունենա»: Ինքն ասաց՝ «Եթե Վանքերի կողմին է քաշել՝ չի կորչի, իսկ եթե, Սիրանույշ ջան, ծմակուտեցի է՝ թեկուզ հանրահաշվից էլ ուժեղ լինի»: Սիրանույշը տեսնես կարդո՞ւմ է նրա հոդվածները: Վազգենը կարդում է ու չի հավանում. «Եթե գրեմ, ես նրանից լավ կգրեմ»: Փսփսան, թանաք էլ ունենք, գրիչ էլ, գրի…

– Սերո:

– Ի՞նչ է:

– Պրոֆեսոր Սերո ջան, գրեցի՞ր երեսուն ձու Փառանձեմին:

– Որ ինձ հետդ չես տանում՝ ես պրոֆեսոր չեմ:

– Ես էլ եմ ասում: Հարյուր ձու, հիսուն էլ՝ հարյուր հիսո՞ւն ձու:

– Դու ի՞նչ ես ասում:

– Ասում եմ՝ դու ոչխարած Սերոն ես:– Երբ ութերորդ դասարանում էլ հանրահաշվից կտրվեց, Սիմոնն ասաց. «Կարգին աշխօր ու փող է գալիս, բեր, այ կնիկ, թող գնա գառնարած»: Թող գնա գառնարած… Կռիվ չկա, կամք չկա, լավ ապրելու ցանկություն չկա, կարտոլ է՝ կարտոլ էլ կեր:– Վեր կաց… Ես Արմենակ եմ բանեցրել… Մի հին գիրք գտիր, թուղթը պրծավ:

Երեխան գնաց կանգնեց պահարանի դեմ, նայեց, հետո գնաց աթոռ բերելու:

– Էդտեղ անպետք գիրք չկա, բարձրացիր վերև:

– Որ ինձ չես տանում՝ ես էլ ձվերը կջարդեմ:

– Չէ՜-չէ…

– Կջարդեմ:

– Ուրիշ լավ բան կարո՞ղ ես:

– Որ ինձ չես տանո՜ւմ…

Արտաշը կոլխոզը կողոպտեց, կողոպտեց, իսկ տղայի բաժինքը մի գորգ էր ու մի անկողին: Բարձին ձեռք էիր տալիս՝ ինչպես փետել էնպես էլ աստառի մեջ էր լցրել նրա փնթին:

– Դե լավ, Սերոյին հետս տարա, հետո՞. կովն եկավ՝ հորթը չեկավ. հերդ հանդից եկավ՝ տանը կրակ չկա, ջուր չկա… Հերդ էլ սովա՜ծ սոված, ծարա՜վ ծարավ… Խոզը հանդից չեկավ, ուրուրը հավերը տարավ, Մուրադենց Ռխաբացը հանդ գնալիս տանձենուն

փետը քաշեց. հավերը ծու ածին, ծուն վերցնող չեղավ՝ կատուն կերավ… Երևանից եկանք տեսանք տուն չի, գոմ է – լա՞վ է…

– Իմ ի՞նչ գործն է:

– Էս տանը ինչ որ կա՝ քոնն է, տունն էլ հետը, ես ու քո հերն էլ քո ճորտերն ենք, այսինքն՝ քո ծառաները:

– Պետք չեք:

– Ախպերդ էլ էր ասում: Իսկ հիմա տես, նրա համար մի ծմեռվա ուտելիք է ուղարկում նրա Սերոն: Գիտե՞ս ինչու է ուղարկում… Փաթաթիր, ասում եմ. ուղարկում է, որպեսզի համալսարանի ժամանակը գա թե չէ՝ իր Սերոյին համալսարան ընդունի… Այ, էսպես մեկ-մեկ փաթաթիր, դիր էստեղ:– Հարսը տեսնես ինչ ցեղ է լինելու. ֆշշան օձի մի տեսակ կա, շեք է անում մարդի վրա՝ «էս մարդը իմն է». էդ մարդուն մայր չի ծնել, հենց էդպես պատրաստ եղել է: Փնթիների մի տեսակ կա – դու բեր, դու բեր, դու բեր՝ տունդ դատարկ է: Շեկ լիներ, բարձր լիներ, երկար ծանր մազ ունենար, ծներ առողջ երեխաներ…– էգուց էն ճաշը կտաքացնեք, էգուց չէ մյուս օրվա ճաշը Նազիկը կգա կեփի, չթողնես յուղը շատ գցի: էգուց չէ մյուս օրը հերդ որ գործից գա, կասես «այ հեր, ամեն օր պետակա՞ն, պետական, ուրիշներն իրենց խոտերը բերել են, մեր խոտը մնաց սարում, բա որ ձյուն դրեց, դժվար կլինի, չէ՞, այ հեր»: էն ռադիոյի ձենը գնա բարձրացրու, լավ երգ է երգում: Ամբողջ կյանքում մի երգող տղա ուզեցի՝ խուլ ծնվեցիք:

– Ախպերը բա լավ չի երգո՞ւմ:

– Ախպերը… ախպոր ցավը տանեմ: Երգում էլ է, գրում էլ է, ծիծաղում էլ է, լավ-լավ ընկերներ էլ ունի… Ուֆ, մեջքս… Կմեծանաս, կգնաս անասնաբուժական համալսարան, կդառնաս անասնաբույժ, ճի՞շտ է, Սերո ջան, կդառնաս անասնաբույժ, և փաթաթիր և լսիր, կգաս գյուղ: Դու քաղաքում տուն կունենաս, ախպերդ գյուղում. ես էլ կլինեմ ձեր մայրը, կնստեմ մի լավ կիանգստանամ… ձեր հայրն էլ ձեզ համար մեղու կպահի: Իսկ եթե ձեր մայրը չլինի՝ չմոռանաք, կգաք կասեք գերեզմանիս. այ մեր, մենք էն ենք, ինչ որ դու ուզում էիր: Կլսե՞մ: Գրեցի՞ր Փառանձեմին երեսուն ձու: Հողի տակ հանգիստ չունենա քո պապ Իշխանը. աշխարհը լիքը տղա՝ գնա, Աղունիկ, Սիմոնից մարդ սարքիր, գոմից տուն սարքիր, Արմենակից Արմենակ սարքիր… Սարքիր, սարքիր, հետո էլ արդեն ոչ առողջություն կա, ոչ էլ խնդալու սիրտ: Ուրիշները պալատից պալատ գնան, ինձ համար աստված Ծմակուտն էր սահմանել ու Ծմակուտ՝ Սիմո-

նին: Ծաղիկ ես, ամեն գարնան ծաղկելու ես: Կգաս, Սերո ջան, կկանգնես գերեզմանիս գլխին. «այ մեր, Արմենակը լավ է, ես լավ եմ, քո գծած ճանապարհով գնացինք»:

– Էլի սկսեցի՞ր, հիմա ձուն կկոտրեմ, հա…

– Լաց մի եղիր, դու սրանց փափուկ ցեղից չես լինելու:

– Բա ինչո՞ւ ես դու լաց լինում:

– Ես իրավունք ունեմ: Քո լավ հորեղբայր Ադամը թևիցս բռնեց ու հունվարին դուրս գցեց՝ «գնա, դու էս տան համար չես». քո տատ Արուսը ամեն օր արյուն-արտասուք էր թափել տալիս, քո պապ Աբելը, խո՜ր գնա, հանդից գալիս էր ու՝ «դեռ էստեղ ե՞ս», քնից վեր էր կենում ու՝ «դեռ էստեղ ե՞ս. շան երես ունես, շան». իսկ քո էդ լավ հերը բերանը ծուռ կանգնած էր մոտները: Անուս Աղուն չէր, առնաուտ քուրդ էր, շա՜տ շատ էի ուտում իրենց չեղած հացը: Քո հորեղբոր Հրաչիկ որդին մի մատ երեխա էր, սովորեցրել էին, ասում էր առնաուտ ու քարով խփում էր: Հապա՜, Սերո ջան: Իսկ իմ հորաքույր Մանիշակը… իմ հորաքույր Մանիշակը… Վեր թռիր, վե՛ր թռիր տեղիցդ… Քամակդ ծա՜ևր նստում ես քո պապ Աբելի նման, աշխարհը հնձել բերել ես: Էն ձին հիմա խճճվել է, թռիր: Արագ, խոր գնա քո պապ Աբելը, շո՜ւտ…

– Լավ էին անում՝ որ ասում էին:

– Ի՞նչն էին լավ անում:

– Որ ասում էին առնաուտ:

– Ապրես:

– Բա ինչո՞ւ խփեցիր:

– Թռիր էն ձիուն նայելու, թե չէ որ վեր կացա…

«Աղունի՜կ»:

– Տես, էլ առնաուտ չեմ, անուն ունեմ, անունս Աղուն է: Աղավնի է, «Ա՛ունի՜կ»:

«Ա՛ղունի՜կ»:

– «Ա՛ունի՜կ»: Ասա՝ ի՞նչ է:

– Չեմ ասում:

– Քո նանն է, թող էնքան գոռա՜:

– Գոռում է գոռա:

«Ա՛ղունիկ, Աղունի՜կ»:

– Ասա՝ ի՞նչ է:

«Սերո, Սերո՜»:

– Ինչ է՜:

«Սերո՞»:

– Այտա, ի՞նչ է:

«Մերդ ի՞նչ բանի է»:

– Ասա՝ գնում է Երևան, ասա՝ պատրաստության մեջ է, ժամանակ չու-նի:

– Գնում է Երևան, պատրաստության մեջ է՞:

– Ասա՝ ժամանակ չունի:

«Երևան է գնո՞ւմ»:

– Հա՞:

«Թող մի աչքառ դուրս գա»:

– Ասա՝ ժամանակ չունի, զբաղված է: Հիմա պետք եմ, հիմա անուն ունեմ, հիմա անունս Աղուն է, էլ առնաուտ չեմ: Թռիր ձիուն: էս ռադիոն միացրած թողիր:

Քաղաքում մի բան են անում՝ ռադիոն երգում ու խոսում է, արդուկը տաքանում է, բոլոր սենյակների լույսերը վառվում են, վառարանը տաքացնում է, բայց հաշվիչը չի հաշվում, մի բան են անում՝ էդ բոլորը լինում է անփող: Լավ արաղից Երջոյին մի բաժակ պիտի խմեցնել՝ հաշվիչը դարձնի քաղաքի հաշվիչների պես: Ժուռնալիստների միությունը լավ տեղ է, էնտեղ տուն շուտ կտան: Բա իհարկե, մի Հայաստան է՝ մի ժուռնալիստների միություն, իսկ ինժեներ ու անասնաբույծ ինչքան ասես կա: Լավ արեց, որ գրողական ջիղը զարգացրեց: «Դուք իհարկե բյուրոկրատ չեք և հասկանում եք, որ այդպես միայն սյուիտի մեջ կլինի և չի լինի կյանքում, զի սյուիտն առանձին է, կյանքը՝ առանձին»:– Իբր էս ինչ է գրել, ով էլ ուզենա՝ էսպես կգրի,– ասաց Վազգենը, որովհետև չէր հասկացել նրա գրածի իմաստը: Սյուիտ և բյուրոկրատ: Դեռ դպրոցում էլ դժվար բառերը նա լավ էր ըմբռնում: Ինքը նրանից սովորեց համայնական բառը և օգտագործեց Սիմոնի վրա, քանզի Սիմոնն աշխատում, աշխատում, աշխատում է սրանրա համար, իսկ վարձը՝ էգուց, եկող տարի, երբեք: Ամբողջ աշխարհը Սիմոնին պարտք է: Չէ, կուսակցության գծով էր գնալու՝ բոլորը դողային ու հարգեին: Արզումանյանն իմանար Իշխանի թոռն է՝ կօգներ: Իշխանի Աղունիկ աղջկա տղան: Այո, ընկեր Արզումանյան, էն Աղունիկի, որ որբ էր, դպրոց չուղարկեցին, քո քույր Մարիամն ասաց՝ «լավ երեխա է, Իշխան, մերացվին մի թող էդքան տանջի»: Հետո վերցրին և ուղարկեցին Ծմակուտ մարդի: Կուսակցության գծով էր գնալու, Կենտրոնից զանգահարեր՝ մայրս ի՞նչպես է:

Այս կյանքը մի անգամ է լինում, էս մե՜ծ կանաչ աշխարհում արևի տակ մի ծաղիկ մի օր ծաղկում է ու՝ պրծավ, աշխարհը նրա համար այլևս չկա: Հող ու խավար: Աստված մարդուն որ անիծեց, ասաց. տեսնես ու չհասնես: Հորս պալատները և ամուսնուս գոմը – դա աստծո անեծքն է: Ու եթե դու էլ խոզարած լինեիր կարկուտի ու ցեխի հետ՝ կայծակը թող էդ օրն ինձ խփեր:

Նա հիմա խնձոր էր դասավորում հատ-հատ կողովի մեջ և որդուն հրահանգում էր քիչ ծխել, գրելիս խնձոր ուտել, գիշերները չգրել և կուշտ քնել: Մարդ եթե երջանիկ է ապրում՝ պիտի երկար ապրի: Կողովը ծանր էր, և նրա ռունգերում թրթռաց մղեղի հոտը, նա տեսավ դեղին կալերը և լիքը ջվալները, և հին ցավն օձի պես մի պահ շփշփաց փորում. պորտն ընկել էր:– Բեր բարձրացնենք,– ծիծաղելով ասաց գոդի Արտաշը:

Եվ մառանի դուռը ետևից վրա բերելով, նա մտածեց, որ ամեն մարդ ապրում է իր կյանքը: Որդու ուրախությունը որդունն է, իսկ իրենը պորտի ցավն էր, կռիվն է Սիմոնի հետ, գարունների հետ՝ կարտոլի հոգսը, ամառների հետ՝ կովերի հոգսը, աշունների հետ՝ ձմեռվա հոգսը: Իսկ որդին ստանում է բուռ-բուռ և ծախսում է բուռ-բուռ: Հարսը եթե մարդորդի եղավ՝ Արմենակը մերն էլ է, եթե չեղավ՝ այդ տղային ոչ ծնել ես, ոչ սնել:

Ձորից դուրս էր եկել, չափարի տակ թեքվում էր սկեսուրը: Մի քիչ տնքտնքաև, բայց քայլում էր թեթև՜ թեթև: Ութսուն տարեկան չի – վաթսուն տարեկան է: Տասնհինգ տարի առաջ ընկել է, մեջքը իբր ցավում է, տասնհինգ տարի առաջ քար է տաքացրել, շալի տակ կապել մեջքին – դեռ հին տնքտնքոցն է ու հին քարը: Լավերը շուտ են մեռնում, իսկ վատերը տնքտնքում են ու չեն մեռնում: Ինքը երբ հարս եկավ՝ նա այդպես էր, ինքն ահա հասել է նրա ետևից՝ նա դեռ այդպես է: Նրա աչքը ծանր է, որսի գնացողները եթե նրան տեսնում են՝ լուռ ետ են դառնում. խոտի գնացողները սայլը ճամփից հանում են, թեքվում գյուղամեջ՝ «աշխօրս տվեք Աբելի պառավին». լույս դառած Ասատուր հորեղբայրը դիվոտում էր՝ տո էլի՞ տնկվեցիր դեմս…

– Արի, խնդրեմ,– քմծիծաղ տվեց նա,– քո փետածեծը ինձ տակ չարեց, քո աչքն ինձ չբռնեց: Կա՛մ, արի:

Ձեռքերը կոնքերին՝ նա պառավին սպասեց, հետո հիշեց, որ ինքը նրան արհամարհելու էր: Եվ տուն մտնելիս նա մի կողմ նետեց դույլի ծածկոցը, որպեսզի պառավը գա տեսնի ղաուրման նույնպես: Եվ

ձեռքերը կոնքերին իր ապրուստի մեջ կանգնած՝ նա հիշեց տունն այնպես, ինչպես կար բաժանքի առաջին ձմռանը, անսվաղ պատերը դեռ ջուր էին տալիս, վառարանը տաքացնում էր ինքը իրեն ու իր խողովակները, իսկ պատերի տակ՝ սառնամանիք. թաց տակաշորերի մեջ երեխան թպրտում էր, և ինքը ծղրտաց.– Իշխա՜ն:– Քամին ծուխը ետ էր տալիս, Մուրադենց Սրբուհին տղամարդու հին շապիկներ բերեց, իսկ Սիմոնը գյուղամիջում ակումբն էր սարքում, սրախոսում էլ էր, սրանք սրախոս են, ծիծաղում էլ էին, և Սիմոնը գոհ էր, որ սրախոս է: Երեխան լաց էր լինում ու լաց էր լինում, և ինքը հասկացավ… Սրբուհու բերած շապիկների մեջ ոջիլ կար, երեխան բլթբլթոտել էր ու տաքություն էր տալիս: Եվ երեխային խլելով ոջլոտ խանճարուրի միջից, ինքը թռավ գյուղամեջ ու ծղրտաց հեռախոսով.– Իշխա՜ն:– Եվ ասելիքը չէր ասվում, որովհետև խեղդվում էր, և խպիպն առաջին անգամ կոկորդի վրա ուռավ պայթելու չափ: Իսկ Սիմոնը (ակումբին տանիք էր կապում) ուրագը ձեռքին լսում էր, թե ինչ է ասում ինքը և կակազում էր ակումբի գլխից. «Այտա, ամոթ է… այտա, ամոթ է, հեռախոսով ոջլից ես խոսում»: Գիշերը երեխան մնաց Սիմոնի թևերին, վառարանի մոտ, իսկ առավոտյան… Սամվելիս ցա՜վը տանեմ, առավոտ լույսի հետ դուրս քշած եկավ կարմի՜ր կարմրած, բեղատեղերը քրտնած, վարդագո՛ւյն… տասնվեց տարեկան էր Սամվելս, թևատակին քսան մետր կտոր… Սամվելիս ցավը տանեմ, լավերը շուտ են մեռնում:

Եվ մայրն ասաց որդուն Ծմակուտից Երևան.

– Կեր, խմիր, ծախսիր բուռ-բուռ, ծխիր, աղջիկ փոխիր, քո բաժին տանջանքը ես արդեն քաշել եմ:

Պառավը հասավ որդու դուռը՝ գոմը այնտեղ էր, խոզանոցը տեղում էր, փեթակները չորս զույգ ու մի կենտ էին, մի ամսվա փայտը ջարդած դարսած էր, բազրիքը ներկած էր կապույտ ներկով:– Սիմոնիս կռներին մատա՜ղ,– ասաց պառավը:

Աղունը լի էր արտասուքով ու Սամվելով, և մյուս եղբայրներով՝ խեղճ Վարդգեսով և խմող, կատաղած ու խեղճ Ոսկանով, Աղունը չուզեց պատասխանել, թե Սիմոնի արածն այդ տան վրա ոչինչ է, որ դրանք իր ջղերն ու կյանքն են, միայն ուզվեց ասվել լացով ու խղճահարությամբ, և ծիծաղով՝ ա՜յ նանի, պիտի գնայիր եղբորդ քառասունքին, մի երեսատեղի շոր չունեիր, Ասատուրի Մանիշակի շորը հագար, ու նա էլ չէր տալիս, ու դու էլ երեսդ դեմ էիր արել, հիշում ե՞ս. քո որդիները, ա՛յ, էդ են, ու քո մարդն էլ էդ էր:

Դույլը լիքը, հա էլի, ղաուրմա էր, կողովինը տանձ ու խնձոր էր, թղթով հատ-հատ փաթաթածը ձու էր, տակը տեսնես ինչ կլինի,– Աղունի՞կ,– գլուխ պահիրը՝ հինգ զույգ, էս ինչո՞ւ է էսքան հանել, էս կարա՞գն էս ինչու է էստեղ,– Ա՛ղունիկ,– էս ո՞ւր է դուրս տվել իր երեխայի ապրուստը: Քառասուն կիլո՝ մի կովի մի տարվա յուղ:– Ա՛ղունիկ:

– «Ա՛ունիկ»: Ի՞նչ է, նանի ջան,– հոգոցով, ծաղրով ու ներելով ասաց Աղունը:– Հա, նանի ջան,– ինչպես անհասկացողներին են բացատրում՝ բացատրեց Աղունը,– էս կարագ է, ուտելու համար է, նրանը գլխի աշխատանք է, նա փետ չի կրծում, պիտի ուտի, որ գլուխն ուժ ունենա: Գրում է, գրո՛ւմ,– բարձրաձայնեց Աղունը և ցույց էլ տվեց, թե որդին ինչ է անում:– էս ղաուրմա է, գործից որ ուշանալիս լինի՝ երկու կտոր պիտի ուտի ու գնա: էս ձու է, մի թանկ բան չի, հինգ հարյուր հատ. օրական տասը հատ՝ մի ամիս, հետո էլ՝ գնացողի հետ կուղարկեմ… Այո՛, նանի ջան… Հարսն էլ՝ բարձր, շեկ, առողջ, ինժեներ, ինձ համար խելքը թռցնում է, ասում է՝ կամ դու արի քաղաք, կամ ես եմ գյուղ գալիս…

Ինքը ջրից գալիս էր: Վանքի հին աղբյուրը դուրս է թռչում խեղդվելով, սառն ու մաքուր է, կեռասը հասնում էր, Վանքերի ուղիղ փողոցում Արզումանյանի եղբայրը հեծանիվ էր քշում, աղջամուղջ էր, ինքը կարմիր լիքը աղջիկ էր: Արզումանյաններից տան մոտ թեքվեց՝ իրենց դռանը իրիկնամուտի մեջ կանգնել էին երկու տղա. մեկը շարմաղ էր, ճակատը բարձր ու վիզը երկար. մյուսը սև էր ու մեծագլուխ. շարմաղը իր հորաքրոջ որդի Ներսեսն էր: Եվ ինքն զգաց, որ այդ մեծագլուխը այդտեղ պատահաբար չի: Մեծագլուխը Սիմոնն էր. գլուխն ուսին դրած կանգնել էր ու ճիպոտի ծայրով խաղում էր տրեխի քթի հետ: Ինքը վազեց տատի մոտ. «Չէ՛, տատի ջան, չեմ ուզում»: Իսկ Սիմոնը նայում էր ու խեղճ-խեղճ ժպտում: «Հավան ե՞ս, Աղունիկ, ուզում ե՞ս, Աղունիկ», սեղանի մոտ մի րոպե նստեց Իշխանը: «Ինչո՞ւ ես իրեն հարցնում, Իշխան,– ասաց դարպասեցի մերացուն,– իրեն որ հարցնես՝ միայն ջուր կբերի ու լվացք կանի, մարդն իր ինչին է պետք»: Ներսեսը դուրս եկավ ու պատուհանի մոտ քթերում ղնդղնդաց. «Դուրգար տղա է, աշխատող, խելոք, դե ինքն էլ արհեստավոր տղա է, էլի, փետի լավ գործ է անում… դե, Օմակուտ, հորաքրոջդ մոտ կլինես, ես էնտեղ եմ, ինքն էլ խելոք, աշխատող տղա է»: Սիմոնը նստել էր թիկունքը լայն ու ծնոտը ձեռքին, Իշխանը պատշգամբ ելավ. «Լավ տղա է, Աղունիկ, ուզիր»:

Իշխանի ետևից դարպասեցին դուրս եկավ ու Իշխանին համոզում էր. «Իրեն մի հարցրու, Իշխան ջան, էն տղի մոտ չուզեցի ասել, ինքը հիմար է, իրեն որ հարցնես՝ էն է ջուր է բերում, էլի, մարդի չի գնա», ու այդ ժամանակ այգու մթան միջից Ոսկանը մռնչոցով դուրս պրծավ. «էդ ո՞ւմ քույրն է հիմար, դա՛րպասեցի, տասնհինգ տարեկան է, էդ ո՞ւմ ես մարդի տալիս, ախչի»: Ոսկանը խմած էր, պատշգամբի աստիճաններին ընկավ ու ընկած էլ քնեց: Եվ ինքը որոշեց. կգնա Ներսեսի ու այդ տղայի հետ, որ էլ երբեք չտեսնի դարպասեցու և Իշխանի երեսը: Օժիտի կարպետը դարպասեցին էդ արանքներում տակվերոց արեց, Իշխանի տնից մի դատարկ օժիտակալ եկավ Ծմակուտ, դարպասեցին տակվերոց արեց նրա մորենական գորգը, որ եկել էր Շնողից, Շնող եկել էր Արճեշից. գետինը մտնես. մի օժիտակալ էր և Նարգիզ մորաքրոջ գործած սիրամարգ ու եղջերու կարպետները: Ծմակուտ դրանից էլ սկսեցին. «Կնյազ Իշխանի տանը էլ բան ես թողե՞լ, թե եղածը էս է սրբել բերել ես, ախչի», ասաց Աբել ապին: «Կնյազ Իշխանի տանը ես քոծ էի, ես էնտեղ մայր չունեի, ապի»,– ասաց ինքը: «Պահ, պահ, պահ,– ասաց Ադամը,– լեզուն էլ է բերել: Եսի՞մ, էնքան հանկարծ եկար՝ ասի լեզուդ էնտեղ մոռացած կլինես»: Իսկ Սիմոնը կանգնել էր մի կողմ և ամաչում էր ասել կինը ձերը չի, իմն է: Իսկ Մանե հարսը նրանց թաքուն քսի էր տալիս, երեսանց՝ մխիթարում Աղունին: Մի երկու ամսվա վրա որոշեցին, որ չբեր է: «Տասնվեց տարեկան եմ»,– ասաց ինքը:– Լեզո՛ւդ,– մառանի դռան մոտից կողպեքը շպրտեց սկեսուրը: Արցունքն աչքերում, ինքը տարավ ետ տվեց կողպեքը և ասաց. «Տուններդ պալատ է, հինգ սենյակ ունեք, միայն երեխայի պակասություն եք քաշում»: Որ այսպես աղյուսը դրել է մեջքին ու տնքտնքում է՝ այս սկեսուրը մազերից բռնեց ու կողպեքով աղաց կողերն ու մեջքը: Չորս պատի մեջ հաց էին ուտում, լվացք էին անում, քնում էին, տրեխները հանում էին, ոտքները լվանում էին ապին, նանը, Ադամը, Մանեն, Սիմոնը, Արփիկը, Արաքսին, Սիրանը, Հակոբը, Հրաչիկը, Սվետիկը, Ամալյան, Վազգենը, ինքը, Հովտի բարեկամները, Դսեղի բարեկամները, Խաչերի բարեկամները, միրգ ծախելու եկած ղազախեցիք: Մի հինգ կով ու մի քսան ոչխար ունեին, մի չորս գորգ ու մի երկու ձեռք անկողին, մի քանի փեթակ մեղու, մեղր քամելու մի մեքենա ու կաթի՝ մի. մի հատ էլ ինքնաեռ, որպեսզի իրիկունները թեյ խմեն ու գյուղին ծաղր անեն. ինչ որ էր, այդպես միատեղ՝ ապրուստ էր և ափսոս էր կտոր-կտոր անել, տալ

վանքերեցու ձեռքը. եթե վանքերեցին արժանի լիներ՝ այդպես չքի մի շորով չէր գա էն լի աշխարհից:

Սիմոնին ուղարկել էին Ղազախ ցորենի: Ներսեսը Մանաց էր գնում,– տար տուր հորը,– ասացին: Չէ, չասացին. այդքան լեզու առնաուտ Իշխանի դեմ՝ նրանք չունեին. սիրտ պատռելու չափ սարսափելի էր պատկերացնել, որ այդպես կարտոլ ու հաց են ուտելու և ծաղրելու են ուրիշներին՝ թե լա՛վ ապրողներին, թե վա՛տ ապրողներին, և ինքն էլ՝ նրանց հետ, և կյանքը զնգալու է հեռու Մանաց քաղաքում, իսկ ինքը պառավելու և թաղվելու է Ծմակուտ: Նրանք գնացել էին Խաչերից թե Հովտից Սիմոնի համար մի հանգիստ, անլեզու հաստլիկ անասուն բերելու, իսկ Սիմոնը սև ու քրտնած եկավ Վանքեր:– Եկել եմ քեզ տանեմ:– Ինքը ցույց տվեց կողերը և ասաց՝ տես:– Դե բա ես ի՞նչ անեմ,– ասաց Սիմոնը: Երկաթուղու Չորագէս կայարանում ինքն ասաց. «Էստեղ տուն սարքենք, դու երկաթգծում կաշխատես, ես էլ՝ հավաքարար»: Հիմա մեկ-մեկ ասում է. «Էն որ ասացիր՝ ճիշտ էիր ասում, Աղունիկ»: Երկաթուղու Չորագէս կայարանում ինքը նայեց լուսավոր խանութի առատ ցուցափեղկին, հետո նորից նայեց ցուցափեղկին, ապա նայեց Սիմոնին և դարձյալ նայեց ցուցափեղկին: Եվ Սիմոնը բարի, խեղճ ու հասկացող էր: Եվ Սիմոնն ասաց. «Վայ թե տրուսիկ ես ուզում, ախչի», և ինքը գլխով այո ասաց և ուրիշ կողմ էր նայում, և ուզում էր արտասվել: «Ինչու քոնը ո՞ւր է»,– ասաց Սիմոնը, և իր այդ շորը հագել էր նրա քույրերից Արաքսին: Եվ Սիմոնն աչքերը փակեց ու վաճառողին հարցրեց՝ ի՞նչ արժե, և մինչև վաճառողը կպատասխաներ թե ինչ արժե, Սիմոնի թուխ ճակատը քրտնեց, որովհետև բռան մեջ մի երկու կոպեկ փող ուներ՝ այդ էր: Եվ ինքը ուրիշ կողմ էր նայում ու լաց էր լինում Սիմոնի համար: Եթե մեր միջև սիրո պես մի բան եղել է՝ այդ եղել է Չորագէս կայարանի լուսավոր խանութում:

Հորաքույր Մանիշակը, Ծմակուտ, կանգնեց ճանապարհին. «Բարով եկար, քաղաքացի. ուր գնացիր, ուր եկար»: Հորաքույր Մանիշակը կանգնել էր այգու մոտ և տան մոտ՝ որ սարքել էր Համբոյի գողությամբ,– հորաքույր Մանիշակին դժվար էր պատասխանել: «Դռան տեղն էլ գիտի, պատուհանի տեղն էլ, մեկից դուրս ես գցում՝ մյուսով է մտնում»,– ասաց Աբել սկեսրայրը, և ինքը տեսավ, որ իզուր է ետ եկել. սրանք խեղճերին ծաղրում են ուզածների չափ, իսկ ուժեղների դեմ մոռանում են, որ լեզու ունեն: «Ասա… ասա,– ինքն արմունկեց Սիմոնին,– ասա որ կինը քոնն է, իրենցը չի»: Նրան

մի տարի տվել էին Դսեղ հյուսնի աշակերտ՝ «վրադ քրտի՞նք ենք թափել», նա կակազեց.– Ապի… ապի, եթե առանձին ապրեի, ապի, ի՞նչ կասեիր, կարո՞ղ էի ապրել:– Հա՛, ձեռքդ բերանիդ հասա՞վ… հա, դե եթե ձեռքդ բերանիդ է հասնում, ինչ կա որ:– Սիմոնին ուղարկեցին կոլխոզի կալերում կովանոց սարքելու, իսկ այս պառավը, որ այսպես աղյուս է շալակել ու տնքտնքում է, իրեն կանչեց գոմ, դուռը փակել տվեց… Ուրիշ բան չեմ ուզում, էդպես աղյուս շալակած ապրես երկու հարյուր տարի, նանի ջան: Շողերը… Շողերը դարպասեցի էր, գիտեր թե ինչ կլինի քաշած նա դարպասեցի մերացվի ձեռքին, Շողերը եկել էր ջրի, լսել էր նրա աղիողորմը, եկավ, գոմից հանեց, տարավ իրենց տուն: Եվ ինքը տեսավ, որ Ծմակուտ էլ կլինի ապրել Վանքերի պես: Մթան հետ սկսեցին նրան փնտրել, եկան հանեցին Շողերենց տնից ու հրելով տարան սկեսուրն ու Մանեն: Այդ ամառ հղի էր: Ուզում էր ուտել, ուտել, իսկ հացի ու պանրի վրա կողպեք էր դրված և բանալին խճճված էր պառավի կարկատանների մեջ, ու ամեն ինչի վրա Մանեի, Արաքսու, Արփիկի, Սիրանի, Հակոբի, Հրաչիկի, Ամալյայի աչքն էր… սպասում էին թե երբ է չխկչխկալու մառանի կողպեքը: Ինչ եղավ. պառավը գնացել էր Հովիտ հորանց, ապին, Ադամը, Սիմոնը կոլխոզում էին. Մանեն աղջիկների հետ կազմակերպեց՝ բլիթներ թխեցին. պառավի յուղի հախից մի լավ եկան, կճուճը կես էր ընկել: Այդ ամառ կշտացավ այդ անգամ, մի անգամ էլ կշտացավ հորաքրոջ հարսի հետ, հորաքրոջից թաքուն (հորաքրոջ հացը չէր ուտվում. դեմդ հաց էր դնում և աչքը տնկում սեղանին): Հովըտից եկավ ու փնտրել սկսեց բանալին. մառանից դուրս եկավ իբր միամտված ու միանգամից բռնեց Աղունի մազերը: Աղունը երկար, հաստ հյուսեր ուներ: Մեջների խղճովը Սիրանն էր, ասաց՝ ի՞նչ ես ուզում էդ աղջկանից, բոլորս միասին ենք արել: Արփիկը տասներկու տարեկան էր, այնտեղ գծեր էր քաշել ու ցատկոտում էր գծերի վրայով. Արաքսին նշանված աղջիկ էր. Սիրանը կարուձև էր սովորում, հոր ու եղբայրների սիրելին էր,– պառավը վրա քշեց Մանեին՝ Մանեն կռացած պղինձ էր լվանում, որ չղռմռաց՝ «պղինձը գլխովդ կտամ, ես քեզ համար վանքերեցի որբը չեմ», պառավը ետ-ետ արեց: Պառավը մոլոր մնաց, մնաց ու ճանկեց Աղունին.– Առնաուտ, քուրդ, առնաուտ, քուրդ:– Փորիս խփիր՝ ինձ պետք չի ձեր լակոտը, փորիս խփիր՝ ինձ պետք չի…– Լեզուդ…– Հետո ինքը գալարվում էր նրանց կալում և հող էր ուտում և մատ էր տալիս, ուզում էր որձկալ ու ետ տալ նրանց բլիթները, կարտոֆիլը,

մի բերան հացը, մի պատառ պանիրը,– և պառավը վրա քշած դարձյալ եկավ: Հետո ինքը նստել էր կալի ծայրին, ամպերը լողում էին լազուրի մեջ, արծիվը լողում էր ամպերի տակ, Շողերը քամուն ցորեն էր տալիս, ճանապարհները լցվում էին տունդարձի մայունով, և չէր գտնվում ինչպես մեռնելու ձևը: Մի զարմանալի թախծոտ կյանք էր կանաչում դեմը, ինքը որդուն նստեցրել էր խնձորենու տակ, նստել էր նրա կողքին, խնձորենու վրա հասած խնձորներ կային, ու ինքը որդուն մրմնջում էր իր որբ մանկության, երազած երազների ու անկատար իղձերի պատմությունը, թե ինչպես ինքը երեք օրական է եղել, իր հայր Իշխանը խփել է իր քաղցր մայր Շողերին, և իր մայրը այդպես էլ հանգել է, և նրա կուրծքը սառել է իր բերանում և իրեն պահել է իր բարի տատը և օր չի տվել դարպասեցի իր մերացուն: Ոչխարը տուն հասավ, աղջիկները գնացին կթելու, Մանեն գոմեշները կթելու գնաց, ամպի վրա հիմա արև չկար, Հակոբն ու Հրաչիկը այծի ետևից էին ընկել, Շողերը ցորենը հավաքեց, զույգ պարկը քարշ տվեց պատշգամբ և, թևերը կոնքերին, կանչեց դեպի սրանց տուն.– Արուս տատի… առաջ արի, բան եմ ասում…– Լավերը շուտ են մեռնում, թե՞ մահն է թանկացնում կյանքը: Սկեսուրն առաջ գնաց, Շողերը դանդաղ եկավ, այգու անկյունում մի րոպե իրար դեմ կանգնեցին, հետո սկեսուրը կաղկանձեց: Շողերը խփեց մի անգամ էլ ու կանգնեց ձեռքերը կոնքերին.– Տասնվեց տարեկան է, հղի է, աղջիկներիցդ փոքր է, խիղճ ունեցիր:– Սպասեց, որ կանգնի ու դարձյալ խփեց.– Գյուղխորհրդի բերանը կտամ, կախարդ, ձենդ դուրս չգա,– և շուռ եկավ ու գնաց քարշ տալու պարկերը մառան:

Մյուս օրը Շողերը նրան իր հետ տարավ կոլխոզ արտհունձի՝ կյանքը լա՜յն էր. դեղին արտերը խշշում էին, նրան չքողեցին ծանր գործ անի, Քոչարը զրնգում էր հասած արտերի վրա հանդով մեկ՝ յարս, յարը՜ս… և արևն էլ էր զրնգում, և կյանքը լավն էր:– Վա՜նքերեցի,– կանչում էին է՜ վերևներից,– երեսիդ կարոտ մնացինք, ջուրը շո՜ւտ արա…– Ո՞ւր կորավ էդ կյանքը: Քոչարը կանչեց.– Վա՜նքերեցի… Աբելենք չուզեն՝ երեխադ վերցնեմ, հետը կգա՞ս…– Լավերդ շուտ եք մեռնում, որտե՞ղ ես, Քոչար, խփվե՞լ ես թե գերի ես ընկել, Ամերիկա ես. քո ձայնը դեռ զրնգում է Ծմակուտի դեղին արտերի վրա: Մահը թանկացնում է կյանքը, դրա համար էլ, նանի ջան, ես քեզ մահ չեմ ցանկանում, եսի՞մ, հանկարծ մեռնես, հանկարծ մտածեմ, որ լավն էիր, գնացիր: Հետո ինչ եղավ. տասներեք հոգով չորս

պատի մեջ՝ ձմեռը բերեցին, տորք էլ տնկեցին տանը. թըխկ, թըխկ, թըխկ, թըխկ՝ Արաքսու օժիտի համար գորգ են գործում: Ու իրար էլ այնքան են սիրում, որ չեն էլ մտածում առանձին ապրելու մասին. ու խոսքներն էլ՝ նույնը, մեկը որ սկսեց մեկին ծաղրել՝ մնացած դյուժինը օգնության է հասնում: Երկու տարեկան Վազգենն էլ օգնում էր. երբ խոսել սովորեց՝ առաջ ասաց ապի (սրանք մեծահարգ են, «մայրիկ», «մամա» խոսքի փոխարեն պապին սիրել են սովորեցնում), առաջ ասա ապի, երկրորդ բառը առնաուտն էր: Ծիծաղեցին՝ երբ տեսան տորքի տակ նստել է ու հանգույց անել չգիտի Աղունը: Եվ պառավն սկսեց. կիթ անել՝ չգիտես, գործել՝ չգիտես, իսկ ի՞նչ գիտես. ուտե՞լ: Ինքն էլ, ճիշտն ասած, մի քիչ անհասկացող էր. դարպասեցին չէր սովորեցրել, ինքն էլ, դե, ինչ է լինելու որբը, չշմած էր: Եվ պառավը փետրվար ձմռանը թևից բռնեց ու դուրս շպրտեց: Եվ շունն էլ ետևից քսի էր տալիս: Հորաքույր Մանիշակն ասաց իր դռնից. «էդ ո՞ւր ես գնում, ախչի»: «Գնում եմ ինձ ջուրը գցեմ»: «Ջրերը սառած են, թող վարարեն, կգնաս»: Հարսի՝ Ներսեսի կնոջ հետ հորաքույրը կարպետ էր գործում, տարավ նստեցրեց կարպետի տակ: Վրա ութերորդ օրը ցավերը բռնեցին: Հորաքույր Մանիշակի հետ սկեսուրը կռվել էր. «էդ ինչի՞ ես կոխել տունդ, էդ ինչի՞ ես կոխել տունդ... Որ կողքներիս ծնի ու սրտներիս ցավ տա՞... Քո եղբոր աղջիկն է, մե՞ր ինչն է... Որ կոխել ես տունդ, տանդ էլ կպահես»: Ցավերը բռնեցին, հիմա էլ երեխան գրկին էր կռվելու, ծեծվելու, երեսը դեմ անելու: Եվ ուզում էր, որ չծնվի: Ասում են բարձ են դնում գլխին, կուրծք չեն տալիս, կուրծքը բերանում քնում են: Թող չծնվի. կառնի իր գլուխը, կգնա թիֆլիսներում, քաղաքներում մի տեղ կաշխատի, կապրի:

Ուրագը հավիտյան ձեռքին, կոլխոզից տուն էր գնում Սիմոնը:– Սիմո՜ն,– քթերի մեջ ղնդղնդաց Ներսեսը,– տղեդ եկավ: Արմո՜, Արմենակ,– ասաց Ներսեսը: Սիմոնը կանգնել էր դուրսը պատուհանի մոտ և տրորում էր գլխարկը, կաշվե բաճկոնը ուսերին՝ անցավ Ներսեսը.– Գնում եմ քո մեր Արուսին իշին դնեմ, Սիմոն:– Գլխարկը ձեռքի մեջ տրորելով, մեծ թուխ գլուխը բաց՝ Սիմոնը գնաց նրա ետևից: Լուսամուտը սառել էր, դուրսը սրանց Ծմակուտի վատ ցուրտն էր, Վանքերի գերեզմանոցում մոր տեղը ցուրտ էր, Ոսկանը հիմա խմել ու քնել էր դրսում մի տեղ, հորաքույրը գոմ էր գնացել գոմեշները կթելու, ասում են գոմեշը դժվարակիթ է, և կոշտ անասուն է, կտրորի, կջարդի ոտքդ: Այս աշխարհն ինչո՞ւ է այսքան դժվար: Տատմերը

երեխայի համար գուշակեց լավ կյանք, և ինքը լաց եղավ ու ասաց.– էդ մեր բաժինը չի, Քալի տատի:– Մի ասա, աղջիկ ջան:– Դրսի սառած ցեխը տրորելով, գիշերը Ներսեսը եկավ.– Քեզ համար պալատ սարքեցինք, Ար-մո՜…– Համաձայնել էին գոմշանոցը տալ: Եվ ինքը նորից լաց եղավ: Իշխանի տներում հատակը ներկած է կարմիր, առաստաղը՝ կապույտ, բազրիքները՝ կապույտ, այգու ծառաբներին սպիտակ կիր է քսած, տա՜ք, լուսավոր… Շողերի տանը եղջերու գորգ է կախված, վեց զույգ էլ ծալքի մեջ կա, մի հատ փափուկն էլ՝ թախտին, Շողերենց վառարանը գվվում է տաքությունից, սեղանին՝ թթու կաղամբ ու կարտոլ… Ջորագէսի լուսավոր կայարանն ու զուգված կանայք ու փափուկ նայող տղամարդիկ… Ինքը լաց եղավ, և հորաքույրն ասաց.– Երեխադ քիչ է, դու է՞լ… ձենդ կտրիր…– և ինքը լաց եղավ լռիկ:

Դռան տակ գոմեշներն էին կապած, վերևի ծայրը իրենն ու երեխայինն էր: Սիմոնը գնում էր գործի, գալիս էր զրուցում հորանց տանը, գիշերը գալիս քնում, լույսի հետ գնում գործի: Ջրի գալիս՝ Շողերը պատահում էր ճաշ էր բերում, պատահում էր՝ ցամաք հաց: Հորաքույրը, ջրի գալիս, մեկ-մեկ ներս էր նայում: Դռնից անցնելիս՝ սկեսուրն ականջ էր դնում – դեռ կենդանի՞ են: Ջուր տաքացնելու աման՝ չկար. խանձարուրի շոր՝ չկար. օրորոց՝ Սիմոնը սարքեց, դնելու մի թիզ ուղիղ տեղ չկար. խանձարուրել՝ չգիտեր. ճաշ եփելու տեղ՝ չկար,– ջղայնությունից ու քաղցից պատռվում էր: Երեխան էլ՝ լացկա՜ն, հիվանդո՜տ, ինքն էլ երգել, երգով քնեցնել՝ չգիտեր. կուրծքը բերանը տված՝ վազում էր գոմի այս ծայրից այն ծայրը, այն ծայրից այս ծայրը: Կրակը հանգել էր, ինքը գնաց է՜ Մուրադենցից կրակ բերելու, եկավ տեսավ գոմի դուռը բաց, գոմեշը՝ գոմի վերի ծայրին. օրորոցը շուռ է տվել, թրքել է մահճակալին, երեխան այնտեղ գոռում է, գոռում է, իսկ պառավը՝ հանգի՜ստ, բան չի պատահել, գոմեշի համար խոտ է բերում: Իսկ իր Իշխան հայրը… իր Իշխան հայրն էլ Մանացից սիրուն-սիրուն խոստումներ է ուղարկում.– Որ լավ տղա դառնա՝ թևի մի ժամացույց եմ առնելու:

Ապրիլին կաթոցքն սկսեց. հորաքույր Մանիշակը կարպետը վերջացրել էր, գորգ էր հինել,– տարավ պահելու իր մոտ: Նրանք գորգն էին գործելու, ինքը ջուր էր բերելու, տուն էր ավլելու, գոմ էր մաքրելու, նայելու և սովորելու էր: Իսկ իր Իշխան հայրը նախշուն գովեստներ ուղարկեց.– Ապրեք, այտա, իրար պահեցեք, մարդը հարազատով է մարդ:– Մայիսին, ծնի վրա, Աբելի մի կովը սատկեց,

և նրանք ասացին, որ այդ կովը Սիմոնի բաժինքն էր: Սիմոնը լռեց ու համաձայնեց: Մայիսի վերջին օրորոցից, խանձարուրով, ընկավ երեխան ու դեմքը ջնջխեց: Եվ ոռնացող երեխան գրկած՝ նա վազեց Փառանձեմենց տուն, նրանք ասացին՝ «երեխա է, լաց էլ կլինի», նա վազեց Մուրադենց տուն, նրանք թուղթ էին խաղում, «արյուն է, էլի, կգա էլ, կկտրվի էլ», նա վազեց Շողերենց տուն՝ «ափսոս, երեխայի երեսը փչացել է» – և ինքը չէր գտնում այս մեծ աշխարհում իր տեղը:

Հունիսին դեռ գոմում էին, դրսի արև աշխարհը թողած՝ գոմում էին. գոմի հոտը. լուն: Հունիսի վերջին Սիմոնն առաջին անգամ նրան ծեծեց. Սիմոնը ակումբի համար նկարների շրջանակ էր սարքում, ինքն ասաց.– Պալատները՞դ… պալատներդ զարդարում ես:– Սիմոնը շուռ եկավ և ուրագի կոթով խփեց: Երեխան իր ձեռքին էր, ինքը երեխային դեմ արեց նրան և ասաց՝ սպանի՞ր, ինձ էլ սպանիր, իրեն էլ, բավական է, էլ չեմ ուզում ապրել: Նա շուռ եկավ գնալու իր կոլխոզ՝ ինքը կտրեց դուռը.– Տո՛ւն ենք սարքում:– Ինչո՞վ ես սարքում:– Էս ձեռքերովս:– Գնա սարքիր,– Սիմոնը նրան հրեց ու դուրս եկավ՝ ինքը դարձյալ կտրեց նրա ճանապարհը.– Տուն ենք սարքում:– Սիմոնը ծնկով մի կողմ հրեց նրան ու անցավ, նա դարձյալ վազեց ու ծնկեց նրա դեմ.– Տո՛ւն ենք սարքում:– Չեմ սարքում:– Քոչում ենք Մանաց:– Քո վայրենիներին կարոտել եմ:– Տո՛ւն ենք սարքո՛ւմ,– աղաղակեց ինքը: Սիմոնը բարձրացրեց ուրագը, և այդ ժամանակ ինքը ծղրտաց նրա երեսն ի վեր.– Էլ բավա՛կան է… էն գիժ հերս ցեղդ կթաղի ու քեզ էլ հետը,– և ինքն ուզեց խանձարուրով խփել նրան ու տեսավ, որ քիչ էլ, մի քիչ էլ՝ ինքը խելագարվում է:

Հունիսի տասն օրը, հուլիսը, օգոստոսը, սեպտեմբերը, նոյեմբերը: Նոյեմբերի վերջին շաբաթում թաց պատերով տանն էին: Ներքևի ձորում ավազն էր, ջուրը վերևի ձորում էր, քարհանքը Աթոյենց Ստեփանի տան մոտ էր, կիրը՝ Տանձուտ բացատում, փայտը՝ անտառում: Փայտի, կրհորի, ջրի, քարհանքի արահետներին շրխկում էր ջահել Աղունը: Ճոճի մեջ, պառավ տանձենու տակ, գվվում էր երեխան, պատի վրայից Աղունով հիանում էր մշեցի ծեր որմնադիրը: Ոսկանը եկավ օգնեց քսան օրվա չափ, Իշխանը մի հինգ կիլո մեխ ուղարկեց, Սիմոնը ճղատվում էր կոլխոզի գործի և տան արանքում: Աշխարհը լավ է, մարդիկ վատ են. սղոցարանից գողացան տախտակի կեսը, լուռ վեճ եղավ կաղնի հին գերանի վրա.

Սիմոնն ուզում էր մարդակների համար սղոցել այդ գերանը՝ սղոցարան քաշեց ու սղոցել տվեց Ադամը. հանդերում կտրել ու մաքրել էր Սիմոնը – եզներով բերել էր Ադամը, Ադամինն էր. բայց բերելու օրը Սիմոնը Ղազախ հացի գնացած էր եղել, հացը կերել էին հավասար, իսկ գերանը հիմա Ադամինն էր: Մուշեղը տվեց իր մարդակները, բայց մեկի պակասություն կար, Սիմոնը բերեց Ադամի սղոցածներից, Ադամը եզներով եկավ. եզների ետևը գցեց ու, տափակելով լոբի, սամիթ, սոխ ու կարտոֆիլ, քաշեց իր տնացվի տեղը. դրա փոխարեն Սիմոնը թաց մարդակ գցեց՝ որ հիմա ծռվել ու անճոռնի կախվել է: Աթոյենց Ստեփանը տնկվեց թե «իմ տան մոտ է՝ քարհանքն իմն է, իմ տան մոտ փոս ես գցում»: Նա ճիշտ էր թե ճիշտ չէր՝ Սիմոնը գժվեց. նա հրել էր Սիմոնին, Սիմոնը լինգը վրա բերեց նրան, նրա Արեստի որդուն, խփեց կոտրեց նրանց շան մեջքը, լինգը խրեց նրանց տան հիմնաքարերի մեջ և քանդում էր: Չորս տղամարդով բռնած նրան տուն բերեցին, և մի ամիս գլխացավից նա խելագարվում էր: Քարհանքի իրավունքը գյուղխորհուրդը տվեց Սիմոնին, բայց նա երեխայի պես խռովել էր. էլ այնտեղից քար չհանեց, բերեց հեռու Քարկապից. դրա համար էլ պատի կեսը դարչնագույն է, կեսը՝ կապույտ ու փշրկուն: Պիոներները շեփորի կանչով հավաքվում էին դպրոց, մաքուր ու գիրուկ Մայայի մանկապարտեզը ճլվլալով գնում էր խաղալու ծառերի տակ, աղջիկները լուսնի հետ երգելով իջնում էին կոլխոզի հանդերից, ծիու վրա Ներսեսը թռչում էր հանդից հանդ ու գյուղից Մանաց,– և Աղունը տեսավ, որ սիրում է Սիմոնին և լաց եղավ նրա համար ու իր համար, և Ոսկանի հարբեցողությունը, աչք մտնող Ներսեսը, Իշխանի կողոպուտը, շահագետ հորաքույր Մանիշակը, ապահով Շողերի բարեհոգությունը և Սիրան տալոջ նազանքը կարի մեքենայի տակ՝ ատելի էին. և ատելի էր այդ Արմիկ երեխան, որ ունենալու էր մայր էլ, հայր էլ, և կրթություն էլ, և ապագա էլ:

Տան մեջը քար էր, քանդելիս Սիմոնի փորը պատռվեց. պառավը եկավ, յախու դրեց փորին, Ադամը եկավ,– Մարդակի համար իզուր կլինես նեղացած, Սիմոն, եկել եմ քարը քանդեմ,– Սիմոնն ասաց՝ չէ, Ադամ, շտապ չի, դու ավելի շտապ գործեր կունենաս, գնա արա, քար է, էլի, կամաց-կամաց կքանդենք, թող իր համար էդտեղ էնքան մնա՛,– և այդ պատճառով իսկ Աղունը Սիմոնին կրկնակի սիրեց: Աղունը դեն գցեց պառավի դրած յախուն, ինքը սարքեց, լավ չկպավ, բայց հո ինքն էր արել: Քանի դեռ փորը ցավում էր՝ Սիմոնը

թեթև գործերի էր. դուռուլուսամուտ դրեց, մահճակալ սարքեց, դուրս գցեց հորանց տված մահճակալը, խոզանոցի տեղ փորեց, շան բուն սարքեց, մի սայլ խոտի և մի էգ մոզու գնով սարքեց Մուշեղի տասնհինգ փեթակը, Արտաշի յոթ փեթակը, մի խոճկորի դիմաց սարքեց Գիքորի դուռը: Այդ տանը ամեն մի առարկա, մինչև վերջին կրակխառնիչը՝ որի դիմաց դարբինը Սիմոնին սարքել տվեց կացնի, ուրագի, մուրճի և բահի կոթերը,– այդ տան ամեն մի իր, մինչև վերջին շան լակոտը՝ որ Սաքոն տվեց իբր թե անվարձ, բայց անվարձ էլ կապել տվեց հոր նկարի համար շրջանակ, մինչև դռան տակի ոտնաքերիչը, կացինը, տակառի կապերը, խնձորենիները, մեղուները, սամիթի սերմը, կաղամբի սածիլը՝ ստեղծվեցին երեխայի պես ուժով, ցավով և պատռտելով և ոչ թե ածվեցին ձվի պես: Միայն փայտե գդալներն են եղել նվերի պես անսպասելի. խոզարած Նիկալ պապը մի իրիկուն եկավ,– էկել եմ ձեր տունը շնհավորեմ, այտա, էս ինչ լավ տուն ունեք… էս գդալնին ձեզ համար եմ շինել, ճաշ կուտեք, այտա… Վախեք ոչ, աման էլ կսարքեմ, գործիս անունն ինչ է:– Լո՛ւյս դառնաս, Նիկալ պապի, քու գդալները նվեր էիր բերել, բայց քեզանից էլ խոզի ոջիլ էր քաշվել երեխայի վրա:

Հիմա վառարանի շուրջը տաք էր և նավթ կար լամպի մեջ ու շշի մեջ էլ կար: Դրսից պատուհանը տաք ու քրտնած էր երևում, պառավը կարծում էր Աղունը կախարդել է իր որդուն և հիմա նա այնտեղ նրան է պարզում իր բարի ժպիտը և նրա հետ անում է տոհմական իր շռայլ կատակները: Այդպես չէր. Սիմոնը նրան ծեծում էր. այդ տան ամեն մի իրը ստեղծվել է ծեծվելու գնով (հիմա չի ծեծում, ծերացել են, և, բացի այդ, ապրուստի գլուխն էլ հողեմ, կարևորը մարդուս առողջությունն է և ուրախությունը, քանզի մարդս ծաղիկ չի, մի անգամ է լինում ու, էս մե՞ծ հավիտենականության մեջ, էլ չի՛ լինում, չի՛ կրկնվում): Պառավը հիմա ուժը տվել էր ոտքին. Հովտի տերտերը ասել էր՝ «ամոթ է, այ կնիկ, ապրում ես՝ թող խաղաղ ապրեն»: Փեշերը քշտած՝ պառավն իրեն խփել էր Դսեղի տերտերին, Կիրովականի տերտերին: Տերտերերոց լինես, նանի ջա՜ն: Գիր անել էր տալիս, գելերոց լինես: Սիմոնի բաժինք վերմակի մեջ Աղունը եռանկյուն մոմած թուղթ գտավ: Մութաքայի մեջ՝ կար, բարձի մեջ՝ կար: Մինչև հիմա էլ՝ ներքնակի բրդից դուրս են գալիս: Աղունը Վանքեր հորանց էր գնացել, Վանքերի տերտերն ասաց՝ «ամուսինդ քեզ լավ չի վերաբերվում, տանդ վրա չար աչք կա, ուզում են բախտդ կապել՝ ամուսինդ լավ տղա է, միաբան եղեք՝ չարը կխափանվի»:

Եկավ պատմեց Շողերին, Շողերն իսկույն ըմբռնեց: Շողերը մի րոպե գունատվեց.– Ախչի՜… ախչի, էն բահը դեսը տուր:– Շեմքատակը փորեցին ու, գելերոց լինես, նանի ջա՜ն, գիր գտան շեմքափետի տակ: Նրա Վանքեր եղած ժամանակ Շողերը պառավին տեսել էր որդու տնից իջնելիս: Սա հատուկ գիր էր, սրա մեջ Աղունի ծամերից մազ կար: Աղունը հիշեց, որ մազը Սիրանն էր կտրել: Սիրանին էլ, ուրեմն, հեղափոխել էր պառավը: Սիմոնը հիվանդացավ գլխացավով, գայլն այդ ձմեռ քանդեց գոմի կտուրը, ջարդեց ոչխարները: Մոզին գոմում մենակ մնաց, մրսեց ու սատկեց: Պառավը ձորակն անցավ, եկավ սվսվալու սատկած մոզու վրա և որդու շուրջը: Աղունը համբերեց, համբերեց, հետո էլ հնարավոր չէր, վրա պրծավ ու նրա աչքը կոխեց շեմքի տակից հանվածը՝ ա՛ռ օրհնանքդ: Սիմոնը վեր թռավ, խփեց Աղունին: Աղունը լուռ լացելով գնաց հորաքրոջ տուն: Նրա հարսը եկավ, տարավ երեխային: Սիմոնը դուրս քշեց մորն էլ ու հանգած վառարանի տանը մնաց առանց թեյի, առանց թրջոցի: Սիրան քույրը մի հատ խնձոր տարավ և ուզեց վառել վառարանը՝ Սիմոնը շաքարամանը շպրտեց ու վերմակն էլ շպրտեց: Դուռը բաց տանը Սիմոնը մնաց վրան բաց, փորի ճողվածքը փքված… Ներսեսը քնել էր թևը կնոջ գլխի տակ, ոտքը օրորոցին, Ներսեսի շապիկը սպիտա՜կ, սպիտակ էր, իսկ վառարանը գվվում էր ու կարմրել էր: Գոմի դուռն էլ այնտեղ էր բաց մնացել՝ սատկած մոզին մեջը և հիմա հավերն էլ աղվեսերոց կլինեին: Եվ գերեզմանոցն էլ՝ տան ճանապարհին… Ինքը մի անգամ ասաց՝ Ներսես… հետո էլ սիրտ չարեց կրկնել: Հետո ինքն իրեն ասաց՝ ես Վանքերի աղջիկ լինեմ ու վախենա՞մ սրանց քոսոտ գերեզմանոցից: Եվ վառարանից կրակ վերցրեց ու երեխային էլ վերցրեց, որպեսզի զրուցի նրա հետ ու մոռանա գերեզմանոցը, և գնաց տեսավ դուռը բաց, ամանները ջարդած, ուրիշի կատուն տանը, վերմակը հատակին, Սիմոնը սառել փայտացել է: Ինքն ասաց.– Սիմոն ջան, ախպեր ջան, ցավդ տանեմ, բա ես որբ եմ, չէ՜… բա ինձ խղճա, չէ,– և ժամանակ չեղավ վառարանը վառելու, ինքը մերկացավ մորից մերկ և նրան տաքացրեց իրենով: Եվ կարգին հագնվելու ժամանակ չեղավ, մի շորով ինքը դուրս եկավ՝ ոչ մի տան լույս չէր վառվում: Ինքը վազեց հորաքրոջից կրակ բերելու՝ գերեզմանոցից հանկարծ խուլ հևոցով դուրս թռան շներ առանց հաչելու: Բժիշկները թե ինչ կասեն՝ իրենց գործն է, լեղապարկի հիվանդությունն իր մեջ այդ գիշեր առաջացավ: Հորաքրոջ դուռը փակ էր: Էլ ուրիշ հնար չկար՝ ծեծեց: Հորա-

քույրն ասաց. «Ախչի… ախչի, էս միամսականը տանը, էս հարսն ու տղեն քնած, դու ո՞նց ես դուռը ետևիցդ բաց թողնում»: Ինքը ծղրտաց.– Կրակի եմ եկե՛լ, Սիմոնը մեռնում է, կրակ տվեք:– Դե գլուխ տարար, էլի,– ղնդղնդաց Ներսեսը,– բաժանվում ես՝ բաժանվիր պրծնենք, չես բաժանվում՝ թող քնենք, գլուխ տարար, էլի…– Ինքը շրխկացրեց դուռը և ասաց.– Մեռնում է՝ թող մեռնի:– Հորաքույր Մանիշակը նրա ետևից կրակ բերեց ու մեղրուկարագ: Կաթ էլ էր պետք, կաթի համար Աղունը մի անգամ էլ գնաց ու եկավ գերեզմանոցով: Քամին մտնում էր նրա մեջ, մեկ սառչում ու մեկ տաքանում էր,– լեղապարկն այդ գիշեր փչացավ: Սիմոնի թոքաբորբը շուտ բուժվեց, բայց գլխացավը խփեց աչքին ու վառեց բիբը: Եվ գլուխը բռնում էր ու գալարվում էր անկողնում. գլուխս, գլուխս, գլուխս, գլուխս…

Եվ ինքը լաց էր լինում նրա հետ, որովհետև իր գլուխն էլ սկսեց ցավել: Թաց տուն էր, առանց վառել չէր լինի, կացինը խփում էր գերանին՝ ուղեղը շարժվում ու աչքերը մթնում էին: Եվ ահա այդ ժամանակ էր, որ Մուրադենց Սրբուհին տղամարդու շապիկներ էր բերել երեխային տակաշորացու, Սիմոնն աշխատում էր ակումբի շինարարության վրա և սրախոսություններ էր անում, Սրբուհու բերած հին շապիկներից երեխան բլթբլթոտեց, և ինքը հեռախոսով ծղրտաց. Իշխա՛ն… մորս սպանել ես՝ ինձ է՞լ ես սպանում, դատի կտամ…– և Սամվելը մյուս օրը բերեց քսան մետր սպիտակ կտոր: Տղամարդիկ ակումբի գլխից լսում էին, թե ինչ է ասում Աղունը, Սիմոնը կակազում էր՝ ամոթ է, ախչի, ամոթ է… իսկ գոդի Արտաշն ասել էր՝ հո կնի՛կ չի, բերեք կոլխոզի նախագահ դնենք: Պատերազմի ժամանակ ինքը նրան պատասխանեց. լավ պաշտոնները դուք մեզ չեք տա: Գոդի Արտաշը դրա պատասխանը տվեց մի ամիս հետո, երբ ջվալ քարշ տալուց պորտն ընկել էր: Գոդի Արտաշը ծիծաղելով ասաց. ուզո՞ւմ ես բարձրացնեմ: Ինքը մոտ գնաց ու բռնեց նրա գլուխը, Շուշանը ջվալը շուռ տվեց նրա մեջքին:– Կամքո՛վ, կամքո՛վ,– ասում էր նա: Իր կամքով Գոդին կալից պահեստ տարավ երեք ջվալ, իսկ չորրորդի տակ նստեց:

Գոդի Արտաշը թոշակավորվելու թե թոշակը բարձրացնելու համար Երևան Աղունի տղա Արմենակի մոտ է գնացել իր շողոքորթ լեզվով հանդերձ՝ «չի կարող պատահել, որ դու մինիստրությունում ծանոթ չունենաս», Արմենակը մերժել է. «Ծանոթ չունեմ, իսկ եթե ճիշտն ասենք՝ գլուխ չունեմ, քեռի»: Այդպե՛ս: Աշխարհը գալիս ու գնում է,

իսկ մենք պինդ ցեղ ենք, կա՛նք:

Եվ իբր թե սրբելով թանկանոց ռադիոյի սուտ փոշին և իբր թե շտկելով սեղանի մետաքսե ծոպավոր սփռոցը, սուտ հոգոցով Աղունն ասաց սկեսրոջը.

– Պառավեցիր, նանի ջան, առանց մարդի վայ թե դժվար է,– և նայեց տան պատը բռնած եղջերու գորգին:

– Հա, ապին որ գնում էր՝ ինձ էլ պիտի տաներ, անիմաստ թողեց ինձ:

– Չէ, ինչո՞ւ, նանի ջան,– դողալով ասաց Աղունը,– հացը կա, պանիրը կա, քո ատամներն էլ, փառք աստծո, սափ-սարքին, տղերքդ էլ ողջ-առողջ պտույտ են գալիս շուրջդ. արևն էլ տաքացնում է. չէ, ինչո՞ւ, նանի ջան, ինչո՞ւ անիմաստ թողեց:

– Հա,– ասաց պառավը,– ամեն մարդ իր վշտի տերն է:

Սրանք մտածում են, մտածել էլ գիտեն, սիրուն-սիրուն խոսքեր են ասում:– Ոչինչ, նանի ջան,– ասաց Աղունը,– աշխարհում վիշտ էլ կա, վշտի արժեքը իմանալը լավ է: Բա ի՞նչ անեն Շուշանը, Սոնան, Ազնիվը, Գիքորի Մարգոն, Ներսեսի Մարգոն, Վարդը, Մարիամը, Գոհարը, խեղճ ճղճղան Մարոն, բա ի՜նչ անեն, որ քսանհինգ տարեկան՝ անմարդ մնացին:

– Երանի գնացողաց, ոչ երանի մնացողաց: Քանի դեռ էստեղ էր՝ մարդի երեսն ուտում էր Անդրեի Շուշանը, Անդրեն գնաց չեկավ՝ վշտատե՞ր դարձավ Անդրեի Շուշանը:

– Ճիշտ ե՜ս, նանի ջան, կրծում էր մարդի երեսը թշնամի սկեսուրի պատճառով: Հիմա աստծո հաջողությամբ սկեսուրը չկա, գուցե թե խաղաղ ապրեին:

– Ոչ մի մայր էլ իր որդու վատը չի ուզում:

– Չի ուզում վատը, նանի ջան, չի ուզում, չի ուզում, միայն լավն է ցանկանում ու տալիս վառում է աչքը:

Պառավը հավանեց եղջերու գորգի գործքը, «խուզը մի քիչ բարձր է բռնած», և գորգը շոյելով ասաց.

– Վառողի աչքը թող դուրս գա:

– Դուրս գա՜, դուրս գա, ես էլ եմ էդ ուզում, նանի ջան:

Պառավը օրհնեց թիկնաթոռները կապողի մատները և սեղանը կապողի մատները, սփռոցը հավանեց, սփռոցն արժանի էր որդու շնորհքին և հարսի շնորհքին էլ: Կով կթելը հեշտ չի, բայց սովորովի է, մի երկու անգամ նայելով գորգ՝ կգործվի,– բայց,– ասաց պառավը,– լեզվին կապ դնելը անհնար բան է:

– Սիրուն էլ էիր, լավն էլ էիր,– ասաց պառավը,– ամաններդ ձեռիդ որ շրխկալով ջուրն էիր իջնում՝ մարդու խիղդ էր գալիս, բայց լեզվիդ պատճառով Սիմոնս օր չտեսավ, դու ինքդ էլ շատ ծեծվեցիր: Ծաղրատեղ դառանք գյուղում:

– Ուզում եմ, նանի ջան,– ունքերը խաղացնելով ասաց Աղունը,– ուզում եմ էդ գորգը տանեմ Արմենակիս, ի՞նչ կասես: Հա՛, մեծը, եղջերուն, հա՛, էդ:

– Չէ,– ասաց պառավը,– թող՝ հետո: Եթե հարսը լավը եղավ՝ կտաս, եթե մարդորդի չեղավ՝ իզուր կլինես տված երեխայիս ապրուստը:

– Իշխանը մարդորդի չէր, Աբելը մարդորդի էր, նանի ջան. Իշխանն էլ մեռավ, Աբելն էլ մեռավ. բոլորիս ճամփեն էլ էդ է, բոլորս էլ մեռնում ենք, առաջ մեծերը, հետո փոքրերը: Ու Իշխանի թաղումն էլ թաղում էր, Աբելի թաղումն է՞լ թաղում էր: Իշխանի թաղմանը, նանի ջան, տասն ավտո մարդ Կիրովականից էր եկել, հինգ՝ Թիֆլիսից, տասը՝ Երևանից: Գերեզմանի վրա մի ավտո ծաղիկ դրեցին, բանակային նվագախումբն էլ նվագում էր: Սոչիից հետ՝ մարդ էր եկել Իշխանի թաղմանը: Քանի՞ մարդ էր գնում իմ սկեսրայր Աբելի ետևից. Ադամը, Սիմոնը, Հակոբը, Արաքսիան, Սիրանը, Արփիկը՝ խինչ-խինչ՝ քիթը սրբելով, դու՝ քո տագրակին Թամարի սգաշորը հագիդ:– Եվ սպասելով, որ այդքանը լավ ներծծվի պառավին և պառավը տեսնելով հիշի այն օրերի ցավը և գետնի տակ անցնելու չափ ամոթը սգաշոր ուզելիս, Աղունը շարունակեց պատմել դանդաղ, հեքիաթի պես.– Տասը տարի է չկա էն խեղճ սկեսրայրս: Տասը տարի է գերեզմանոցում է, անքա՛ր: Ուրիշների երեկվա հանգուցյալը էսօր քար ունի, իսկ խեղճ սկեսրայրս որդի չուներ, կին չուներ, տեր չուներ – անցորդ էր, մեռավ, թաղեցին ու էլ հետը գործ չունեն, անցորդ էր: Նստում են տանն ու՝ հացը կա՞, պանիրը կա՞, թեյ լցրու, թե կա՝ մին էլ լցրու,– ու սիրուն-սիրուն ձեռ են առնում Սահակենց Տիգրանին, Աթոյենց Ստեփանին, Բեժանենց Անուշավանին, Ասորենց Տիգոյին: Լավ են անում, նանի ջան, որ ձեռ են առնում ու ծիծաղում են. դրա համար էլ էդպես առողջ են: Ես էլ ինձ ու իրենց ուտում եմ՝ դրա համար էլ քառասուն տարեկան չեմ, յոթանասուն տարեկան եմ: Քարը, եթե հիշողություն ունես ու հիշում ես, ե՛ս տաշել տվեցի, ես,– ասաց Աղունը,– ինձ ծեծ ուտեցնելու գնով: Ասացի՝ քո հերն անքար է մնում, քո հերը որդի ունի, երեքն էլ աստծո ողորմածությամբ կենդանի են, աստծո հաջողությամբ պատերազմից ողջ-առողջ վե-

րադարձել են, խեղճ սկեսրայրիս վրա քար քաշեցեք, և ուրագը բարձրացրեց քո Սիմոն որդին: Ու քո Ադամ որդին իր դռնից նայում էր ու ասում էր՝ «տո կարգի՛ն խփիր, դրա դեսը ուղարկողի»: Ո՜ւ դու էլ, նանի ջան,– դառը-դառը ասաց Աղունը,– քո դռնից էիր աչքիդ զոռ անում՝ որ տեսնես աջո՞ղ է խփում թե անաջող: Ու ասում էիր՝ «երեխիս կերար, երեխիս հոգին կերար»: Ո՜ւ,– գիծ առ գիծ պառավեց Աղունը և աչքերի տակ տոպրակներ կախվեցին,– ու քարը տաշել տվեց, ու Դսեղի ձորում դեռ ընկած է էս էլ յոթ տարի: Ու,– զզվելով ասաց Աղունը,– սպասում եք, որ ես բերել տամ ծեծ ուտելով: Էլ պրծա՜վ, չէ՛, էլ ծեծ չեմ ուտի: Ինձ մաշեցի, մաշեցի, ու ինչի՞ տեր եմ: Քառասուն տարեկան չեմ – ութանասուն եմ: Դու էլ ութանասուն չես – քառասուն ես: Լաց եղիր, ոչինչ, ինձ շատ ես լացեցրել:– Եվ պառավին թողնելով տանը, Աղունը դուրս եկավ, որպեսզի չտեսնի նրա արտասուքը և չխղճահարվի, քանզի նրանք արժանի են կրակ տալու և ոչ թե խղճահարության:

Ինչի՞ էր դուրս եկել. հա, գնում էր Երևան, երեխային ուղարկել է ձիուն նայելու, երեխան ո՞ւր կորավ այսքան ժամանակ: Դուրս եկավ՝ աշնան արև աշխարհը ջերմանում էր. լուռ տերև էր թափում դիմացի անտառը, խնձորենիները կարմրել, վառվում էին, տանձենիները բոց էին կտրել, տաքդեղի շարուկը կեծանում էր, շունը փաթաթվել էր ինքն իր մեջ ու նիրհում էր: Երեխան այգում էր, դեղձենին շղահարում, տակից փախչում էր և նայում թե ինչպես է շաղ անցնում կրակը. հետո կռանում վերցնում էր՝ դրանք տերևներ էին, և երեխան նորից էր շղահարում ու տակից փախչում՝ կողքից նայելու թե ինչպես են շաղ գալիս կրակները: Դեղձենին Վանքերից Աղունն էր բերել, այստեղ պտուղ չտվեց, բայց որովհետև սիրուն էր՝ Սիմոնն ասաց թող մնա: Իսկ մեծ տանձենու պատվաստներից մեկը կանա՜չ, կանաչ էր, նրա տանձը հասունանում է դեկտեմբերին, իսկ տերևը կանաչ է մնում մինչև հունվար: Աղունն ուզեց ասել՝ Սերո՜, էդ ի՞նչ ես անում, արի դասերդ սովորիր,– չկարողացավ: Տեսավ, որ խեղդվում է: Եվ նստելով գերանին, Աղունը լաց եղավ: Եվ լաց լինելով մտածեց, որ փոքրին չի ուղարկի Երևան. թող այստեղ աշխատի վարորդ, տրակտորի վրա, անասնաբույժ, իրիկունը տուն գա, տանը հարս լինի, և ինքը նստի ու նայի հարսին ու տղային: Հին օրերի արծիվը դեռ լողում էր ամպերի տակ, Ծմակուտի գլխին, նրա կանչը ղողանջում էր անտառի ու այգիների վրա, խեղճ Շողերի գերեզմանը… և

Աղունն ասաց դեպի ներս, դեպի սկեսուրը արտասուքով ու ժպտալով.

– Այ կնի՜կ… այ կնիկ, բա որ տարածել էիր, թե լիրբ եմ, լրբություն եմ անում…

– Բավական է,– հաշտ-հաշտ ասաց պառավը,– անցած բանի ետևից չեն ընկնի: Վատ եմ եղել՝ վատ եմ եղել: Աստված ինձ վատ է ստեղծել՝ վատ եմ եղել. ես քեզ խրատ՝ հարսներիդ հետ դու լավ կլինես:

– Ես անհաշտ եմ, լավ կլինեն՝ լավ կլինեմ, վատ եղան՝ ես անհաշտ եմ: Աստված ինձ ուրիշներին ու ինքզինք ուտող է ստեղծել: Մենակ թե…– լաց լինելով ասաց Աղունը,– մենակ թե ինձ ուտում եմ, իսկ ուրիշները ողջ-առողջ կան:

– Մի ամառ դռներին նայեմ՝ գնա բուժվիր:

– Առողջությունն էլ է մի անգամ տրվում: Թշնամիս չընկնի բժիշկների դուռը:

– Ջարիկը բուժվեց:

– Ջարիկը Աշոտի կինն է, ես՝ քո տղա Սիմոնի: Տասնհինգ տարի է քար շալակած ման ես գալիս:

– Սիմոնը բժիշկ չի:

– Սիմոնը դարբին է, գլուխս ու կողերս ծեծում է:

– Լեզվիդ պատճառով:

– Անտեր մնա իմ լեզուն, անտեր, որ ձեզ էդպես խանգարում է:

– Կինը կին է, Սիմոնս էլ փափկասիրտ երեխա էր: Դարբնենց Ծովինարի հարսանիքը գնում էր քո հորաքույր Մանիշակի տան տեղով, Սիմոնս նստել էր մեր կալի ծերին ու լաց էր լինում. «Նանի, Ծովինարը սիրուն էր, չէ՞»: Մուրադենց հարսը ետևից հինգ-վեց տարեկան տղա ուներ, մենք ուզում էինք Հովտից աղջիկ բերել Սիմոնիս համար, իսկ երեխաս լաց էր եղել Ադամիս մոտ՝ չէ, ես նրան եմ ուզում: Կուրանամ ես: Քսանհինգ տարի է էս տանն ես, սրտից եկած մի խոսք չես ասել երեխայիս: Կինը կին պիտի լինի, իսկ դու կին չես եղել երեխայիս համար: Ծովինարի հարսանիքը գնաց ու չեկավ, Մուրադենց հարսը Մուրադենց տանը պառավեց – երեխայիս դո՛ւ պիտի սիրեիր:

– Ձեր ամեն ինչը տեղն է, մնում է սիրվելը:

Պառավը կանգնեց.

– Դե լավ, ես գնամ, գործի ես, չխանգարեմ:

– Բան ես ասում՝ ասա: Ինձ խանգարողը դեռ չի ծնվել:

– Կոպիտ ես,– փնթփնթաց պառավը,– ամեն ինչդ լավն է, միայն կոպիտ ես:

– Կոպիտ չլինեի՝ ձեր կախարդությունները կտրտելով դուրս չէի գա: Ու գոմեշի հետ դեռ գոմում կլինեի: Էդ սառը գետնին մի՛ նստիր,– դեպի երեխան ճչաց Աղունը,– գլխացավ չես, երեխա ես ինձ համար:

– Իմ ունեցածը գոմ էր՝ գոմ էի տվել. ես պալատում չէի, դու գոմում: Ինչի՞ էի եկել,– այգու եզրին մոլորվեց պառավը,– բանի էի եկել, մոռացա թե ինչի եմ եկել:

– Ունեցածդ կով էր՝ կով տվեցիր:

– Տվեցի՝ սատկեց, ես ի՞նչ անեմ, որ ամեն ինչն էլ մեզ համար դժվար է լինում:

– Սատկեց՝ տվեցիր: Էդ՝ ոչինչ, կով էր՝ սատկեց: Մարդ էլ է մեռնում: Բա են լավ-լավ տերտերնե՞րդ: Հասկդ կալսելու՝ գնացել էիր Կիրովական տերտերի: Բերել թաղել էիր շեմքափետիս տակ: Ցույց տա՞մ:

– Եթե ամոթ չես անում՝ ցույց տուր:

– Ամեն մարդ իր ամոթն է տանելու:

– Ես ձեր սիրով ապրելն էի ուզում, այ որդի:

– Սերը մեր ցեղում չկա:

– Վայ թե իրոք չկա, այ հարս, վայ թե իրոք չկա:

– Մեր ցեղը գործ է անում, լպստվելու ժամանակ չունի: Հետո էլ՝ տղեդ էր սիրո արժանի լինելու:

– Գնայիր գտնեիր քեզ արժանին, իմ տղին հանգիստ տայիր, իմ ուզածն էդ էր:

– Որբ էի, գնալու տե՛ղ չունեի: Թևերը վրաս փռած մե՛ր չունեի:

– Մեր չունեիր՝ հեր ունեիր, ախպեր ունեիր, պապոնք ունեիր: Հերդ մի քաղաք էր կողոպտած ուտում:

– Ինձ համար չէր կողոպտում:

– Ճիշտ է: Դրա համար էլ ասում եմ Սիմոնիս հետ խաղաղ պիտի ապրեիր:

– Խաղաղ չեմ ապրել՝ Սիմոնիդ կերե՞լ եմ: Իմ տան գործերն ինձ են պատկանում:

– Շունն է ուտում, դու քեզ մի անպատվիր:

– Ես շուն եմ, շնից էլ վատ եմ վատերի հետ: Լավերին էլ շան պես հավատարիմ եմ: Ամեն ոք ինձանից արժանին է ստանում: Ինչ որ կարող եմ՝ տալիս եմ, ինչ որ չունեմ՝ տալ չեմ կարող, մի պահանջեք:

– Ճիշտ է: Ես էլ էդ եմ ասում:

– Ի՞նչն է ճիշտ:

– Տղես քեզանից սեր չտեսավ:

– Իմ ցեղում էդ ապրանքից չկա:

– Ամեն կին իր ամուսնու համար պիտի սեր լինի: Աբել ապին հնձից, գոմերից, ձմռան փայտատեղից ինչքան եկել է՝ ես նրան տաշտակի մեջ եմ դրել ու տաք ջրով, գոլ ջրո՜վ լողացրել եմ: Սիմոնս քեզանից սեր չտեսավ:

– Իմ սերն իմ երեխաներն են:

– Իմ սերն էլ իմ երեխաներն էին: Ես իմ երեխայի լավն էի ուզում:

– Թեկուզ երեխաս լինի՝ ես վատը չեմ կարող սիրել:

– Քա՜ծ,– սիրով ու սկեսուրի իրավունքով մրմնջաց պառավը,– ձենդ կտրիր, քած: Ամոթ ունեցիր:

Ոտքի տակ մի շատ աջող փայտ կար, խոսքից էլ՝ իրենք խոսքից երբեք չեն խեղճացել, եթե հիմա խոսքը շրպպացնելով փայտը վրա բերեր՝ մեղավորը նախ ինքն էր լինելու և հետո էլ իր գլուխն էր ցավելու, պայթելու էր իր գլուխը… Աղունը ոտքի ելավ իր տան դռանը և իրեն ասաց, որ իրենն են այդ այգին, այդ տունը, շունը, գոմը, երկու կովն ու երկու մոզին հանդում են, չգրանցված երինջը հանդում է, քսան ոչխար ունի և տասնյոթ խոզ, մեղրը քամված ու կարասավորված է, Երևանի պես տեղը Արմենակի պես տղա ունի, Արմենակը թերթերում շրջկոմների քարտուղարներ է քննադատում. Սիմոնը մեղվի պես զնգոցով բերում է, ձմեռը հատակ է տախտակում, առաստաղ է խփում, ամռան արևին հանդում է զնգում, անձրևին՝ տանը, երեսուն հավը շխկշխկալով ձու է ածում… Աղունն այսքանն իրեն ասաց և ասաց, որ ինքը քառասուներեք տարեկան է, քառասուն տարվա փափուկ ու բարի կյանք է ննջում իր դեմ, մաքուր, կարճ հագնված թոռները դեռ պիտի գան ամառները, թիթեռ պիտի բռնեն ամառները քաղաքի ձևով, պիտի խոսեն Ծմակուտի սպիտակ արևի մեջ Երևանի շեշտով,– Արա՜, Սամվե՜լ,– հարսը դեռ պիտի կանչի Երևանի շեշտով դեպի գետափ՝ աչքերը Ծմակուտի արևից կկոցած.– Սամվելի՜կ…– բայց ապա մի սպասի՜ր. սրանք էդ ի՜նչ սիրուց են խոսում:

– Տղիդ շապիկը կեղտոտ տեսել ե՞ս:

– Չէ,– ասաց պառավը:

– Տղիդ անկողինը կեղտոտ տեսել ե՞ս:

– Չէ: Չեմ տեսել:

– Տանը ճաշացու է եղել ու տղիդ սոված տեսել ե՞ս:

– Չեմ տեսել:

– Իմ հագին նոր շոր ու իր հագին հին՝ տեսել ե՞ս:

– Չեմ տեսել:

– Ամեն անգամ երեսի բուրդը մինչև խուզել եմ տալիս՝ մի կռիվ լինում է: Ես էսքանն եմ, ինչքան կարողացել եմ՝ տվել եմ, ինչ որ չէի կարող՝ չէի հնարելու: Ես Եգորի Սիրուշը չեմ, որ Արտաշի հետ լրբություն անեմ, մարդիս հետ էլ՝ փիշի-փիշի: Մարդ է, կատու չի: Կովն էլ ծախեմ՝ ժամացույց կապեմ, ոչխարն էլ ծախեմ՝ կոշիկ հագնեմ: Բարձրակրունկ,– ասաց Աղունը:– Բանի էիր եկել, ինչի՞ էիր եկել, ասա:

Ադամի դռանը թխկալ սկսեց կացինը:– Երեխաս քնից վեր կացավ,– ասաց պառավը:– Ադամս:– Եվ աղոթքի պես շրթունքները դողացնելով՝ պառավը մրմնջում էր թե անիծում, հետո լսելի ասաց.– Ադամս, Սիմոնս, Հակոբս: Արաքսիս, Սիրանս, Արփենս: Արփիկս չկար: Իմ ժամանակն էր՝ Արփենիկս գնաց: Արփենիկս անբախտ եղավ:

Փիլոյի Արուսը գալիս էր ջրի: Գիրանում ու գիրանում է Արուսը: Ու ծիծաղում է՜, ծիծաղում է՜: Երբ Աղունը փախավ Վանքեր ու սրանք՝ փեշերը քշտած՝ աղջիկ փնտրեցին Սիմոնի համար, Հովիտ գյուղում Արուսին էին հավանել: Խուփը գլորվում է կճուճը գտնում – իրենց արժանին իսկական գտել էին. կարտոլ կուտեին, գոմում կապրեին,– գոմի մարդակները կաղնուց էին, կդիմանային մի հարյուր տարի,– ու տան վրա թևներին ցավ չէր տա ու կիրը չէր կուրացնի աչքները: Թե չէ՝ խեղճ Փիլոն կարեցածի չափ թռցնում հա թռցնում է կոլխոզից – դեռ հորենական օժիտի մեջ են քնում: Ու ծիծաղում ե՜ն, ծիծաղում են կարտոլե անհամ ծիծաղով: Ի՞նչ է եղել – ցանցավոր մահճակալ են առել՝ հանգիստ քնել չի լինում. Արուսը ծանր է, Փիլոն՝ թեթև, գլորվում, ընկնում է Արուսի վրա: Սրանց սերը ըստ երևույթին այդ է: Չէ, մենք դրանից չունենք, մեր ոչխարը չխուզած, մեր կարտոլը հանելու, մեր խոզը հանդում կորած՝ մենք չեն կարող ծիծաղել:

– Արո՜ւս,– կանչեց Աղունը:

Դույլերը ձեռքին՝ Արուսը կանգնեց:

– Երևան եմ գնում, ամանդ մինչև կլցվի՝ արի քեզ բան ցույց տամ:

– Էսքան տեղը բարձրանա՞մ,– ծիծաղեց Արուսը:

– Դժվար է՞,– և ծաղրեց և հարցրեց Աղունը:

– Հեշտ է՞,– ծիծաղեց Արուսը:

– Իսկ ես ո՞նց եմ ամեն օր բարձրանում:

– Դու Աղունն ես,– ծիծաղեց Արուսը:

Ադամի դռանը կացնի թխկոցը կտրեց: Այս արևին ականջակալ գլխարկով՝ Ադամը կանգնել էր սայլի մոտ և, աչքերը ճպճպացնելով, բառերը դասավորում էր: Աղունին ու մորը նայելով բառերը դասավորեց, դասավորեց ու ընդամենն ասաց.

– Ջրույց եք անո՞ւմ:

– Հա,– ասաց Աղունը,– ցուրտ է՞:

Ադամը աչքերը ճպճպացրեց, ճպճպացրեց, հետո հարցրեց.

– Էդ նանն է՞:

– Նանն է,– ասաց Աղունը:– «Ձեր սիրելի մայրիկը»:

– Հըմ,– քմծիծաղեց Ադամը:

– Ի՞նչ է,– ասաց Աղունը:

Ադամի մասին սրանք իրենք են պատմում, թե մտքի մեջ շատ լավ իմացել է, բայց արտասանելու փոխարեն լացակումել է, դպրոցում չի արտասանել Հովհաննես Թումանյանի «Փարվանա» պոեմը, ասել է՝ «խոսելը ծանր է, է՜»: Այս Ադամը նայեց մորն ու հարսին, նայեց, աչքերը ճպճպացնելով բառերը դասավորեց և ասաց.

– Իշին ե՞ս դրել նանին:

Էդ՝ ժողովներում է, որ Ադամը լեզու չունի ու նախագահից եզ խնդրելիս – Աղունի դեմ լեզու էլ ունի, ծաղր էլ ունի: Հինգ տարվա բացակայությունից Գերմանիայից վերադառնում էր, Աղունը պարելով դեմ գնաց փաթաթվելու, իսկ նա մի կողմ կացավ ու ասաց.– Ճամփա եմ տալիս՝ տեսնեմ կարո՞ղ ես մինչև Վանքեր մեկ գնալ ու էլ չգալ:– Սրանք աղի արտասուք են դարձրել մեր բոլոր ուրախությունները:

– Գնում եմ Երևան,– ասաց Աղունը,– զրո բաների ժամանակ չունեմ:

– Բարի…– Ադամը տնքաց, տնքաց ու գտավ խոսքի շարունակությունը,– ճամփա: Ինձ համար մի հատ…– Ադամը դասավորում էր մտքի շարունակությունը, Արուսի գլուխը աղբյուրի ծորակից դուրս եկավ, պառավն աղոթք թե անեծք էր մրմնջում, Արուսը ծորակից լրիվ էր դուրս եկել – Ադամը դեռ դասավորում էր մտքի շարունակությունը:

– Քեզ համար մի հատ ականջավոր գլխարկ բերեմ,– ասաց Աղունը:

– Հա,– ծիծաղեց Ադամը,– նայիր, եթե…– ու մտածել սկսեց շարունակությունը:

– Նայեմ, եթե լինի՝ բերեմ: Տաք-տաք, թեթև-թեթև, որ և օգոստոսին դնեք և հունվարին:

Ադամը կացնով մի անգամ էլ թխկացրեց. գլխարկը գլխին ուղղեց և ասաց միանգամից և ամբողջական.

– Մի հատ էլ կա՞պիչ կբերես, չմոռանաս:

Պառավը հիմա չէր մրմնջում. խոսում էր, և աղոթք ու անեծք չէր՝ խոսքը վերաբերում էր Աղունին.

– Սիմոնի գուլպան ծակ չի եղել, շապիկը կեղտոտ չի եղել, Սիմոնը սոված չի մնացել, դու լիրբ չես եղել, երեխայիս ապրուստը դեսուդեն չես արել, բայց ես քեզանից գոհ չեմ ու անգոհ եմ, քանի որ…

Աչքը ցանկապատի երկարությամբ օրորվող Արուսի գլխին, Աղունը հանկարծ հասկացավ, որ Ադամի խոսքը լեզվի կապիչի մասին էր: Խայթվածի պես վեր թռչելով, Աղունն ասաց պառավին.

– Ուրախության եմ գնում, պայծառ օրս մի պղտորեք: Սերո, շունը պահիր՝ էն կնիկը գա:

– Ես քո թշնամին չեմ,– ասաց պառավը:– Մի գլուխ սխտորի էի եկել, չգիտեմ մերը պրծե՞լ է թե երեխեքն են կորցրել:– Եվ Աղունի հետ գնալով սխտորի և հիանալով մառանի առատությամբ ու կարգուկանոնով, պառավն ասում էր պատմելու պես.– Որդին հարսինն է, աղջիկը՝ փեսայինը. շաղ են գալիս՝ տանը մնում ես մենակ. լավ է թե վատ է՝ մարդն է քոնը. ամեն մեկը իրենը գտնում է՝ քոնը քո մարդն է. քառասուն տարեկան կորցրիր թե ութանասուն՝ ամենամեծ կորուստդ է. զավակները հայր են կորցնում, հարսները սկեսրայր են կորցնում, թոռները՝ պապ, իսկ դու քեզ ես կորցնում, քանզի ոչնչի պետք չի լծի կենտ եզը: Քանզի դու նրա հետ եզ էիր ու գութան էիր քաշում: Մի լծի լծված եզները իրար սովորում ու իրար հասկանում են, ու իրար խնայում են: Իմ աղջիկ ժամանակ մեր Ծիրան եզը հիվանդացել էր, մեր Խնձոր եզը իմ հերը լծեց գոմեշի հետ: Իմ հերն աղի արտասուք էր թափում, որովհետև ցանքի ժամանակն անցնում էր, իսկ նրանք իրար հետ չէին քաշում, գոմեշը նրան էր սպանում, նա՝ գոմեշին, հերս ասում էր իրար չեն սիրում, ատելով ատում են: Սուրբ գիրքն ասում է. «Եթե թշնամի ունես՝ նրա հետ մի խոսքի արի, քանզի նրա հետ նույն ճանապարհի վրա ես, նա քեզ դատավորին կտա, դատավորը՝ դահիճին»: Իսկ ես քո թշնամին չեմ, մերդ եմ,

մորդ տեղն եմ:

– Բավական է, լավ, եզները իրար սիրում են, մի դռան շները իրար չեն կրծում – Աղունը Սիմոնին օր չի տալիս, բավական է: Աստված ինձ անմեր է ստեղծել: Սերո՜… Ճամփի վրա եմ, դու էլ գիտես, որ քո աչքը ծանր է… Սերո, թռիր գյուղամեջ, հորդ ասա ուշացանք, շո՜ւտ… Քո էդ սուրբ գիրքն ինձ վրա չազդե՛ց:

Երբ երեխան ձորակն անցնում էր, Աղունը հրահանգեց.

– Հինգ րոպեից էստեղ լինի:– Եվ մեջքը դարձնելով պառավին, Աղունն ասաց աշխուժով.– Արուս ջան, քեզ կանչել եմ մի խորհուրդ հարցնեմ:

Պառավը գնաց՝ ճանապարհին ընկած փայտը դնելով կույտին, փեթակները համրելով և նրանց թվից ուրախ: Լաց լիներ, լաց չլիներ: Ուզեց թեքվել Ադամի մոտ, հասկացավ որ Աբելն է պետք: Իսկ էդ անտեր արտասուքները չէին գալիս… Ո՞ւր կորան էդ անտեր մաքուր վիշտն ու ուրախությունը, ե՞րբ ցամաքեցին էն շատ ու թեթև արտասուքները:

– Արուս ջան, պառավին մատ եմ արել: Գնում եմ Երևան: Հա, պառավին պայտեցի, մի հինգ տարում եթե մաշեց… Քեզ էլ կանչել եմ, որ մի խորհուրդ հարցնեմ, մինչև ամանդ կլցվի:

Արուսի փեշերը իրար տակից երևացող, Արուսի Փիլոն կոլխոզից բուրդ գողանա՝ Արուսը նույնությամբ էլ առանց լվանալու լցնի ներքնակների մեջ, Արուսը ծնկները չռած նստի վառարանի մոտ՝ նրա գորգը գործեն հովիտեցիք, փողով,– Աղունը Արուսից խորհո՞ւրդ հարցնի: Ճաշը կրակին՝ Արուսը ժամերով աղբյուրում կանգնի զրուցելու, ճաշը վառվի, պղինձը վառվի, ծուխը բարձերը սևացնի, իսկ Արուսը սրա լուրը բերի նրան, նրա լուրը բերի սրան:

– Արուս ջան, գնում եմ մեծիս տնավորեմ,– պատմեց Աղունը:– Աղջիկը ինժեներ է, հարյուր հիսուն նա է ստանում, հարյուր հիսուն՝ նա, չհաշված հոնորարը: Հոնորարը, Արուս ջան, էն է, որ ստանում են տպելու համար: Իրենք խեղճ չեն, բայց մեր ձեռն էլ չոր քարի տակին չի, իմ ունեցածից տալիս եմ, էս ղաուրմա-մաուրման, խնձոր-մնձորը, հինգ հարյուր հատ ձու-մուն՝ զրո, դրանք մեր օրվա պարտքն են, դու՝ քո տղերքին, ես՝ իմին: Չմտածես թե ձուն կփչացա, որովհետև հիմա կասեմ: Սրանք՝ ներքնակներն են, տասներկու-տասներկու կիլո: Քոնոնք գուցե ավելի ծանր լինեին, բայց դե Փիլոն էլ է ծանր, Սիմոնի պես փետ կրծելով չի բերում գրամ-գրամ… Իսկ որ ճիշտն ասենք, մի նեղացիր, Արուս ջան,– վիզը թեքեց Աղունը,–

քոնոնց բուրդը լվացած չէր, իմը լավ լվացած է: Իմ էս մատներով: Ճիշտ է, ջրից դուրս եկա ու երկու ամիս հաշմանդամ դարձա, բայց մի բան հաստատ է՝ որ տասներկու կիլո մաքուր բուրդ է, ոչխարի թրիք-մրիք չի: Սրանք՝ ներքնակները, Արուս ջան: Հիմա գանք վերմակներին: Երեսները՝ որ գնացել էր Սիբիր խամուխոպան ու եկել էր Մոսկվա՝ փող ուղարկեցի, Մոսկվայից բերեց: Երեսները Մոսկվայից են, Արուս ջան, իրենց ճաշակով, իրենց ուզածի պես: Իսկ իրենց ճաշակը քաղաքի է, էդ մի բանը ճիշտ է, մենք գյուղացի ենք, քիչ ենք տեսել՝ քիչ գիտենք: Բուրդը՝ մարդդ որ գնում էր Ղազախ ու ես խնդրեցի, որ մեր ցեղականինը տանի փոխի տեղականի հետ ու Սիմոնն էլ ինձ ծեծեց՝ բուրդն ինքդ ես տեսել, էն բուրդն է: Այո, վերմակների համար էր: Իսկ աստառները, Արուս ջան, աստառների պատմությունը երկար է: Նախնադարյան ժամանակներում ես մի հեր ունեի, անունը Իշխան էր: Մուրադենց Սրբուհին տղամարդու հին շապիկներ բերեց տակաշորացու, երեխան Մուրադենց շապիկների մեջ հիվանդացավ, Իշխանը, Մանացից, հազար երեսունվեց, հազար ինը հարյուր երեսունվեց թվականի փետրվար ամսին քսան մետր սպիտա՜կ, ձմռան լուսնի պես մաքուր կտոր ուղարկեց… Սամվելիս ցա՜վը տանեմ… Պատերազմի միջո՜վ, սովի միջո՜վ, անշապի՜կ, կարկատանով՝ պահեցի մինչև հիմա ու գցել եմ երեխայիս վերմակներին աստառ:

– Սուտ ես ասում, Աղուն:

– Նրա կանաչ արևը:

– Ախչի, ամոթ է, ամոթ:

– Ես էդ եմ:

– Դրա համար էլ կարծես յոթանասուն տարեկան լինես:

– Հա, Արուս ջան,– աշխուժացավ Աղունը:– Օժիտակալ կարպետը իմ պապոնց տնից է բերել իմ մերը, իմ պապոնց տուն էլ եկել է իմ մոր պապոնց տնից, Արճեշից: Երկու բարձ, մեկը սագ է, մյուսը՝ չկարողացա, սագերս մտել էին Փիլոյի լոբուտ, Փիլոյի Արուսը շունը բաց էր թողել, խեղդել էր մեկ-մեկ, եթե հիշում ես: Ոչինչ, Արուս ջան, հավն էլ ձեռ կտա, ինքն ինձ համար մի գլխաշոր չի առել: Էս՝ գորգն է: Չի ուզում, բայց դե իր անունով եմ գործել: Իսկ չի ուզում էն պատճառով, որովհետև քաղաքում պատվեր են տալիս սենյակով մեկ: Ուժ ունեցա՝ կտամ կպատվիրի, չունեցա՝ դու ողջ լինես, Արուս ջան, սա՛ կգցեն ոտքների տակ:

– Հարսդ ինժեներ է, տղեդ ստանում է բուռ-բուռ, էլ ինչո՞ւ ես

էսքանը տանում:

– Բուռ-բուռ ստանում է, բուռ-բուռ էլ ծախսում. ընկերների հետ նա մի գիշերում չորս հարյուրի գլխին քար է գցում: Մի կովի գին: Իսկ ես, Արուս ջան, էսքանը տանում եմ, որովհետև նախ շատ չի և երկրորդ՝ իմ ծնողական պարտքը:

– Ախչի… ախչի, ուժը հատած մարդիդ երեսը դու ուտում ես, որ տանես քամուն տա՞ս:

– Սրանք ինձ դուրս էին գցել ու եկել էին քեզ ուզելու Սիմոնի համար. պիտի հաջողվեր, պիտի գայիր, պիտի նայեիր երեսին ու ծիծաղեիր, ինքն էլ քո երեսին ու ծիծաղեր – լավ կլիներ:

– Փիլոյի ճկույթի հետ չեմ փոխի:

– Տարին մի տոննա բուրդ է մտնում քո տուն, ինչո՞ւ պիտի փոխեիր:

– Քոնը չի բերում:

– Փայտ կրծելով, այո, բերում է:

– Քո ապրուստն իմից պակաս չի:

– Էդ ուրիշ հարց է, Արուս ջան, դրա մասին արի չխոսենք: Ես ռեալիստ եմ, եթե խոսքը ճակատին չասեմ՝ կիհվանդանամ: Քո մարդը բերում է, իմը չի բերում, բայց իմ ունեցածը քոնից մի քիչ ավելի է, պակաս չի, քանի որ էս տան կինը Աղունն է: Աստված սահմանել է, որ չեղած տեղը կարող նստի, եղած տեղը՝ անկարող: Որպեսզի լինեն հավասար:

– Ինչ որ է, Աղուն, մարդդ մեղք է:

– Դրա պատասխանն էլ կա, Արուս ջան. որպեսզի մեղք չլիներ՝ պիտի գողանալու խորամանկություն ունենար, չունի՝ պիտի վիզը ծգելով աշխատի:

– Աշխարհը հեշտ է, Աղուն, բայց դու դժվարացնում ես ու քեզ էլ սպանում, ուրիշներին էլ: Պատերազմի ժամանակ մի փոր կարտոլով ապրում էինք ու հիշո՞ւմ ես ինչքան էինք ծիծաղում: Որ գոդի Արտոյին բարձեցինք…

– Գողացողի համար հեշտ է, վայ չգողացողին: Գոդի Արտոն թոշակի հարցով գնացել է Արմենակի մոտ, Արմենակը ասել է՝ տեսնենք:

– Դե որ ձեռքից էդպես գալիս է, մոտը պիտի գնանք, բա ի՞նչ պիտի անենք:

– Քամակը բաց հերն է, իհարկե կօգնի ծմակուտեցիների լավությունների համար:

– Բա իր բարեկամներն ենք, ինչո՞ւ չպիտի օգնի:

– Մարդիս կեսը իմն է եղել, կեսը՝ ուրիշներինը, իսկ ընդհանրապես՝ կոլխոզինը, տղեն հորը կքաշի: Եթե իմ արյունից մի կաթիլ մեջը կա, գոմը նա չպիտի մոռանա: Ջուրդ լցված կլինի, կրակին ճաշ կունենաս, գնա, Արուս ջան, քեզ գործից չգցեմ:

– Էլ բան չունե՞ս ցույց տալու:

– Իմ խեղճուկրակ աղքատությունից էսքանը հանել եմ՝ քի՞չ է:

– Լավ բաժինք է: Դե հնում կով էին տալիս, բայց հիմա կովն իրենց ինչի՞ն է պետք:

– Կովի դիմաց ես մի բան եմ մտածել, չգիտեմ կհավանես թե չես հավանի: Կովի դիմաց, Արուս ջան, հինգ հազար ռուբլի փող եմ տալիս: Փողը ձեռքները չեմ տալիս՝ որ գնան կինո, թատրոն, ռեստորան, ես ինքս իմ ձեռքով հագուստի պահարան եմ առնելու, դնեմ տանը:

– Հա՜,– մռռաց Արուսը:– Բա տուն ունի՞:

– Ժուռնալիստներին տուն շուտ են տալիս: Աշխատելու տեղն առանձին, քնելու տեղն առանձին, որպեսզի ընտանիքը չխանգարի, իրենցը գլխի աշխատանք է:

– Հա՜,– մռռաց Արուսը:

– Էդ՝ հագուստի պահարանը: Ինքը չի ուզում, բայց ինքը անհասկացող հերն է: Սիրում է, որ հագուստի տեղն առանձին լինի, ամանեղենինն առանձին, դաշնամուր էլ է սիրում, բայց չի հասկանում, որ դրանք պիտի առնես՝ որպեսզի ունենաս: Ռեստորան գնալ՝ հասկանում է: Էն աղջիկն էլ՝ ետևից: Նրանց մի խիստ վերահսկիչ է պետք իմ տեսակի: Դաշնամուրն առնելու ոչ ուժ ունեմ, ոչ էլ հասկացողություն, բայց, Արուս ջան, ճաշասենյակ եմ առնելու: Դա բերում ե՜ն Մոսկվայից: Դա արժե, Արուս ջան, հազար ռուբլի նոր փողով: Թանկն էլ կա, բայց ես չունեմ թանկի ուժը:

– Լավ է,– համաձայնեց Արուսը:– Շատ լավ է,– համաձայնեց Արուսը:– Շատ լավ է, խելքից դուրս է,– զարմացավ Արուսը:– Ախչի, դու հո խելագար չե՞ս,– շփոթվեց Արուսը:– Ախչի, դու խելագար ես,– ձեռքը բերանին՝ մտածեց Արուսը:– Ախչի, դու հիմար ես: Ախչի, տո հարսիդ հերն էլ թաղեմ, տղիդ հերն էլ անիծեմ, ախչի, դու էս տունը սրբած տանում ես ո՞ւմ համար,– դեպի դռները գնաց Արուսը:– Դե տանում ես՝ սուսուփուս տար, ի՛նձ ինչու ես կանչել: Տո քաղաքիդ գլուխը հողեմ,– դռների միջից շուռ եկավ Արուսը,– քաղաքի պտուղ՝ հարսդ մեծացել է մաքրության ու փողի մեջ, դու էլ արյուն-արտա-

սուքով մի քանի կոպեկ ես իրար գցել՝ որ տանես նրանո՞վ անես: Ասել են, է, ասված է. շատը շատին, իշի… բանը աղքատին… Քեզ չես խղճում՝ չես խղճում, ախչի, էն մարդդ մեղք է, ա՛նամոթ:

«Դե հիմա գնա, Արուս ջան, ջրիդ, ու լուրը տար, գյուղի բերանը գցիր: Ասա՝ Սիմոնի Աղունը մի կարպետով բաժանվեց, հիմա տղայի համար դաշնամուր է առնում»:

– Եվ՝ սառնարան,– ասաց Աղունը:

– Ի՞նչ:

– Սառնարան: Երեք հարյուր ռուբլի նոր փողով, ուտելիքը դնում են մեջը՝ չի փչանում: Ամառները մածուն կուղարկեմ, կարագ կուղարկեմ, հավ կուղարկեմ՝ չեն փչացնի, ինչ կուտեն՝ կուտեն, մնացածը կդնեն սառնարանում: Իմ հայր Իշխանը բանկում իմ անունով հարյուր հազար փող էր թողել, իմ ախպերացու Վալոդը տակվերոց արեց: Ուզում եմ ասել՝ ծնողը իմ հայր Իշխանի պես պիտի լինի: Վայո՛:

– Ունեցվածքը քոնն է՝ ցանկությունը քոնն է: Եթե ինձ խոսք է հասնում՝ մարդդ մեղք է: Մարդիցդ հանել ես, տալիս ես ուրիշի աղջկան:

Հարսն այնպես լիներ, որ նրա տանը Աղունի ձայնը լիներ ընտանեկան: Ասեին՝ տատիկը: Ասեին՝ մայրիկը: Հարսն ասեր՝ մայրս:– Ջանս, աղջիկ ջան:– Հարսի համար կապել տար ոսկի մի ծանր մատանի:

– Արուս,– մրմնջաց Աղունը:– Արուս, ես բախտավոր ե՞մ թե անբախտ:

– Մարդու նեղություն ես բերում, Աղուն, ազնվությամբ:

– էդ՝ զրո, Արուս, դու եկել էիր թե չէիր եկել – գելը մի գիշերվա մեջ Ներսեսի երեսունհինգ ոչխարը ջարդեց. երեսունհինգ ոչխարի տեր էր՝ հիմա դատարկ գոմի տեր է. փող է, կգա էլ, կգնա էլ. գրպանը հազար ռուբլի դրած իմ տղա Արմենը ընկերների հետ գնացքի ռեստորան է նստում Թիֆլիսից Երևան, ժամացույցները թողնում են, դուրս գալիս: Ես բախտավոր ե՞մ թե անբախտ:

– Քո տղա Արմենակը քո տղա Արմենակն է. քոնը քո բկիդ ուռուցքն է. քո էդ հարսը մինչև հիմա որ լավ է ապրել՝ էդ դու չես լավ ապրել. ու հիմա էլ որ Արմենակի կինն է լինելու՝ Արմենակի տերն ինքն է լինելու. քոնը քո Սիմոնն է: Ես էդպես եմ կարծում: Իմ տղերքին ես տվել եմ առողջություն ու մի ձեռք անկողին: Իմը իմ Փիլոն է, էսօր երկուսով երկու հավ ենք կերել: Իսկ էդ մի-մի ձեռք անկողինն

էլ իզուր եմ տվել: Ի՞նչ է եղել – աշխարհը լե՜ն, որ կողմ նայում ես՝ ապրուստ ու կյանք է թափած: Դու ծիծաղելու սիրտ ուզիր: Դու բախտավոր ես թե անբախտ՝ դու կիմանաս, իսկ իմ մասին՝ ես գոհ եմ որ Արուսն եմ և ոչ թե Աղունը:

– Ես անբախտ եմ, Արուս. իմ մերացուն դարպասեցին է եղել, իմ հերը Իշխանն է եղել, քսան մետր կտոր է տվել, երեխային մի անգամ մի բուռ կոնֆետ ու սուտ-սուտ խոստումներ հազարների մասին. իմ սկեսուրը Աբելի Արուսն է եղել, իմ մարդը՝ Սիմոնը:

– Դե լավ, ուրախության ես գնում՝ ուրախությամբ գնա, ինձ չկանչեցիր՝ որ լաց լինես: Իսկ եթե ինձ լսես՝ էդ փողի կեսը բավական է բուժվելու համար:

– Որ անբախտ եմ եղել՝ անբախտ էլ թող գնա: Առողջությունն ուրախության համար է, ուրախությունն ինձ համար սահմանված չի եղել:

Արուսը լեզուն կծեց՝ որպեսզի չասի, բայց չեղավ, չէ, պահել չէր լինում: Հիվանդ, ջղային կին է Աղունը, բայց ախր ինչպես չասի, որ նրա հորաքույր Մանիշակը էս լույս աշխարհ էր մտել աստծու անեծքը սև ամպի նման գլխին, մի ամուսին Հախպատ էր կորցրել, մեր հորեղբորը՝ էստեղ. աչքներիս առաջ երեք որբ Դսեղա աղջիկը թողեց, հինգ երեխա՝ շարմաղ Ներսեսը… բայց էս ամբողջ Ծմակուտում նրա ընտանիքից լավ հյուրատուն կա՞ր – նանի շուրջը կազմակերպված մի պուճուր պետություն էր:

– Ամեն մարդու ուրախությունն իրենից է գալիս, Աղուն ջան. բախտավոր է՝ ուրիշներով չի բախտավոր, դժբախտ է՝ մեղավորն ուրիշները չեն:

– Իմ երեխան գոմում է ծնվել:

– Իմո՞ք որտեղ են ծնվել:

– Ես քաղաք տեղից էի եկել, դու՝ Հովիտից:

– Քաղաքից մենա՜կ դու ես եկել:

– Իմ հոր պալատները – իմ մարդի գոմը:

– Դե լավ, քեզ բարի ճանապարհ, իմ ճաշն էլ հիմա վառվեց:

– Շնորհակալ եմ, Արուս ջան:

– Դու քաղաք տեղից էիր եկել, ես Հովիտից – Հովիտ մարդիկ չեն ապրում:

– Երանի քե՜զ: Մարդիկ գնում են էսենտուկի, Օդեսա, արտասահման են գնում մարդիկ, դու՝ «Հովիտ ապրողները մարդ չե՞ն»:

– էսենտուկի ու արտասահման բացքամակ հիմարներ չկան, էլի:

– Ախչի, գործի՞դ գնա:

– Քո հորաքույր Մանիշակի հացը մի անգամ կտրում էին ու հարյուր տարի չէին մոռանում: Նրա հացում աղ կար: Քո լեզուն քո թշնամին է:

– Էդ մեկը ճիշտ է, իմ հացում աղ չկա:

– Կառնեն ճաշասենյակն էլ, սառնարանն էլ, գորգը ոտքների տակ էլ կգցեն ու վրան երեխային փիշիկ անել կտան ու քեզ կասե՞ն դու ով ես:

– Ճիշտ է, արմատահան լինի իմ լեզուն:

– Կտեսնենք:

– Դու ճիշտ ես, Արուս ջան, փոքրը էսօրվանից է ասում, թե լավ են արել, որ իմ անունը առնաուտ են դրել:

Հարսն ու տղան կռվեին, մազերը շտկելով հարսը այն սենյակից այս սենյակ գար.– Մամա, էս տանը ես էլ չեմ ապրի… էս անամոթին ասա…– և ինքը գրապահարանի մոտից կանչեր որդուն այս սենյակից այն սենյակ.– Այ տղա, է՛յ, սի՛մոնացու, թևիցդ կբռնեմ ու դուրս կշպրտեմ, վա՛լոդացու…

Երբ Հովհաննես Թումանյանը գրում էր, գրագետները քիչ էին, քչերն էին գրում, ճանաչվելը հեշտ էր Հովհաննես Թումանյա՛ն, Հովհաննես Թումանյան, Հովհաննես Թումանյան – մի տասը գրաճանաչից մեկն է եղել ու հիմա արծան էլ ունի, տուն-թանգարան էլ ունի… Ա՛յ, Հովհաննես Թումանյան, գայիր ժուռնալիստ աշխատեիր, տեսնեի անունդ որտե՞ղ է հոլովվում: Հիմա բոլորն էլ կարդում են, բոլորը կարող են գրել, Վազգենը Արմենակիս գրածը չի հավանում, ասում է՝ «ես իրենից լավ կգրեմ», կա՞րող էիր, Հովհաննես Թումանյան, հազարի մեջ աչքի ընկնել այնպես, որ արծան ունենայիր ու օրորոցդ էլ պահեին. «Էս էն օրորոցն է, որի մեջ օրորել են Հովհաննես Թումանյանին»: Ահա իմ մայրական սիրտն ասում է, որ Արմենակը արծան է ունենալու: Նրա գրելու շնորհքը Վանքերից է գալիս ինձանով. ես Վանքերի աղջիկ եմ, իմ հայր Իշխանը ասողխոսող մարդ էր, իսկ Օմակուտի կողմը բերանը կապած է. նրա հորեղբայր Ադամը ընդամենը գլխարկ է ուզելու՝ երեք օր մտածում ու այդպես էլ չի կարողանում արտահայտվել արագ և ամբողջական: Բացի այդ, Արտաշես Արզումանյանն էլ Վանքերից է: «Իմ լեզուն իմ թշնամին է» – իմ լեզվի շնորհիվ է աչքի ընկել իմ որդին: Մի լեզու ունեի, մի խեղճուկրակ ամուսին և մի կարպետ: Գնա, Արուս ջան,

լուրը տար Ծմակուտին, Ծմակուտով՝ Հովտին, Մանաց քաղաքին ու Վանքեր գյուղին, որ Իշխանի դուստր Աղունը իր որդի Արմենակի ամուսնությանը նվիրաբերում է երեսուն հազար ռուբլի փող և իր մայրական հպատակությունը նրա գործին ու լավ ապրելուն:

Արծանը պետք է դնել Վանքեր: Բայց մի արծան էլ պետք է դնել հին գոմատեղը. այստեղ Աղունը տանջանքով մեծացրել է Հովհաննես Թումանյանի և Արտաշես Արզումանյանի նման մարդու: «Իսկ տիկին Սոֆին դեռ երկար մնաց ջահել, կրակոտ, փարթամ, և դեռ շատերին փոխեց, և այդպես էլ չպառավեց, և այդպես էլ մեռավ՝ որովհետև մեռածները գերեզման են ունենում, իսկ նա չունի: Երևի հալվել, ներծծվել է աշխարհին և աշխարհը որոշ չափով սոֆիացրել»: Մեռնեմ ճարտար լեզվիդ – «աշխարհը որոշ չափով սոֆիացրել»: «Որոշ չափով»: «Ներծծվել»: «Ներծծվել»:

– Սերո՛…

Հովհաննես Թումանյա՞նն է նշանավոր թե Արտաշես Արզումանյանը: Արտաշես Արզումանյանը թռել էր Ամերիկա, որպեսզի պատերազմ չլինի: Ասում էին պատերազմ էր լինելու՝ Արտաշեսը չէր թողել: Այդ օրերին ռադիոն ու թերթերը բոլորը միաբերան ասում էին «Արզումանյանը, Արզումանյանը, Արզումանյանը», և ինքը Արմենակին ասաց.– Ինչո՞ւ չես ուզում դառնալ շրջկոմի քարտուղար:– Խմած էր, մրթմրթում էր՝ չե՛մ փոխի, չե՛մ փոխի: Հայաստանում կա հազար գրող ու ժուռնալիստ, տեղից ելնողը գրում է: Մուրադենց Գիքորն էլ է բանաստեղծություններ գրում: Ադամն էլ էր ուզում իր պատերազմական կյանքից գրել. այնտեղ Մանեն ու հարևանները ծեծում էին տորքը, այնտեղ խաշած կարտոլը սառչում էր նրա դեմ, իսկ Ադամը գրիչը թաթախում էր ու մտածում, թաթախում էր ու մտածում: Թուղթը պոկել էր տետրակից, դրել թաց մոմլաթի վրա, գրիչը թաթախում էր ու մտածում: Ինքը ծաղրեց.– Հորեղբայրը գիրք է գրում, մեծ փող է ստանալու:– Հորեղբայրը նեղացավ. սառած կարտոլի հետ թանաքն ու թուղթը թողեց սեղանին ու գնաց տաշել սկսեց իր սայլը: Ու դրանից հետո նա ու իր որդի Վազգենը, նրանց հետ էլ Մանեն, Արմենակի գրածը չեն հավանում: Արմենակը Արտաշես Արզումանյանի պես էր լինելու՝ սև կոստյումը հագին երբեմն գյուղ գար, գյուղացիները նայեին մի քիչ հեռվից, իսկ Արմենակը նրանցից ոմանց բարևեր ձեռքով: Մեղք է էն երեխան. ծուխը սենյակը լցրած՝ գրում, գրում, գրում է, առավոտը թթված վեր կենում, կարդում ու պատռում: Իսկ դու Արուսիին պարծեցիր, թե նրա մի գիշերը հազար արժե: Ոչինչ,

որդիս, տանջանքը մարդու համար է, իսկ քո արյան մեջ կա տանջանքին դիմանալու ընդունակություն. քո մայրը բաժանվեց մի կարպետով, իսկ հիմա կորածների մեջ չի: Սկզբում տանջվում են վերջի համար: Արզումանյանը որ Արզումանյան է՝ կնոջ թաղմանը չկարողացավ Ամերիկայից գալ: Չեն տանջվում միայն գողերը և անասուն մարդիկ կան՝ անհասկացողները: Աշխարհի կեսը գողությամբ է ապրում, կեսը՝ աստծո ու մոր տված շնորհքով: Լավն այն է, որ ունեցվի լավ ապրելու հետ մաքուր անուն էլ: Փողով կարելի է մաքուր անունի հասնել, բայց բոլորը կասեն՝ ահա այս մարդը փողով մաքրեց իր անունը: Հայրդ փայտ է կրծում, դու՝ թուղթ – իսկ իմ եղբայր Վալոդը քառասուն տարեկան եղավ՝ ոչ գլխի ցավը ճանաչեց, ոչ թևի: Մաքուր անունը մաքուր անուն, բայց աշխարհը լիքը հեշտ գործ է – պիտի դառնայիր ղեկավար աշխատող: Կյանքը մի անգամ է լինում ու պիտի կենտրոնում լինել: Իսկ որ ճիշտ ասենք՝ ինձանից հետո ջրհեղեղ: Վանքերի կնյազ Նիկոլը արյուն խմելով է հարբել, իմ պապ Բեգոն՝ քաղցով: Կնյազ Նիկոլին անիծում էին, իմ պապ տիրացուին՝ օրհնում: Հող ու մոխիր: Իսկ որ անկեղծ ասենք՝ հետն ով ինչ տարավ՝ տարավ. նա իր կշտությունը տարավ, նա իր քաղցը: Այդ արծանը, մարծանը, հիշելը, միշելը սուտ բաներ են – աշխարհը մեզ համար մի անգամ կա ու դրանից հետո փակվում է, վսյո, մեխեցին՝ պրծավ, քեզ մնում են քո տեսածը, սիրածը, կերածը, վայելածը: Իսկ հետո թե քո մասին ինչ կասվի՝ պարապ մարդկանց զրույց է: Իմ հեր Իշխանը գողանում էր – իմ հորեղբայր Վաղարշակը անկարող էր և այդ պատճառով էլ ասում էր՝ «ամոթ է, Իշխան»:

– Գո՛րծ գտիր, գո՛րծ գտիր, գո՛րծ գտիր…– ծամածռվելով, Օմսկուտից Երևան, հղեց մայրը որդուն:– Թուղթ ով ասես կմրոտի, հրեն Մուրադենց Գիքորն էլ է բանաստեղծություն գրում, գո՛րծ գտիր:

«Տպեն՝ քեզ համար մատանի եմ առնում»:– Իսկ եթե չտպե՞ն: Սերմ է, էլի, գցում ենք, կամ կհնձենք, կամ կարկուտը կտանի, կամ մորեխատար կլինի, կամ կմրկի, կամ դեզի մեջ կծլի: Ձուկը ջրում՝ առևտուր չեն անում: Գարնան ճուտը ուրուրինն է, աշնանը՝ մերը: Բոբիկանում են ջրին հասնելուց հետո: Այսօրվա կոպեկը վաղվա հազարի հետ չի կարելի փոխել: «Տպեցին՝ մատանի եմ առնում»:

– Գործ գտիր, գո՛րծ…– կրակի վրա շան լափը խառնելով՝ զզվելով ծղրտաց նա: «Այ մեր, երեք ռուբլի փող տուր, էգուց հոնորարն ստանամ՝ հինգը կտամ:– Այ մեր, երեք էլ տուր՝ քեզ վեց ռուբլի կլինեմ պարտք, հոնորարն էսօր չտվեցին:– Հացի եմ գնում, այ մեր,

երեսուն կոպեկ…»:

– Տո որ քեզ ուղարկում էին անասնաբուժական՝ ինչո՛ւ չգնացիր, հը՞: Էդ է՞լ էր ծեծով լինելու: «Պի-յե-սեմ գը-րում»: Պի-յես գը-րիր, գյուղի լակոտները բեմից ծնոտները ծռեն, ժողովուրդն էլ ծիծաղի, Սիմոնն էլ ուրախանա, դու էլ՝ «հա-ցի եմ գը-նում, այ մեր…»:

Գլխացավը բռնեց: Քունքերն ափերով սեղմած՝ նա որոնել սկսեց կուչ գալու մի տեղ: Հեռավոր կայծակների պես լուռ՝ ուղեղի փափկությունը ցավը հերկում էր: Կափարիչը հիմա-հիմա անաղմուկ ելնելու էր տեղից. և տաք ուղեղը կաթան փրփուրի պես շատանալու և ծավալվելու էր: Գլուխն ափերի մեջ պահած՝ նա ուսով հրեց խոհանոցի դուռը, և կոտորակվող ճռճռոցը մոտիկ կայծակի պես քանդուքարափ արեց ուղեղը: «Դպրոցի համար թենիս եմ սարքում»:– Վայ մամա ջան, գլուխս խորովում ե՜ն…Վայ մամա ջան, ես ի՞նչ անեմ, գլուխս խորովում են…– Մթի մեջ նա տեսավ շերտավոր կարպետի չորությունը նրանց տված թախտի վրա և նրանց տված մութաքան և զգաց մութաքայի կոշտությունը և մոմած թղթի եռանկյուն կոշտությունը մութաքայի մեջ:– Գիրկապ լինես դու, Արո՜ւս:– Անկողինների ծալքը մեծ սենյակում էր: Մի ուժեղ փափկություն սեղմած պահեր գլուխը: Սեղմե՜ր, պահեր գլուխը: Նա դուրս եկավ, և արևը հանկարծ վառվեց, կուրացրեց ու հանգավ: Գլուխը ձեռքերով բռնած՝ նա տեսավ, որ տաք մոխիր է մաղում: «Վայ մամա ջան, ուղեղս խորովում ե՜ն… Կանցնի, հիմա կանցնի»: Բազրիքի դուռը դեմն էր, պետք էր ծնկով հրել: Հետո արդեն՝ ծալքը և բարձերը: Օժիտակալը փակում էր մեծ սենյակի մուտքը – ինչպե՞ս էր անցնելու: Դեմ ընկնի օժիտակալին ու գլուխը դռնով խփի: Նա օրորվում էր բազրիքի դռան մոտ և վախենում էր նրա ճռճռոցից: Հիմա տրաք-տրաքելու էր շան հաչոցը: Հիմա աքաղաղը սղոցելու էր կափարիչը:– Վայ մամա ջան, մի օգնական չունեմ…

Նա պիտի փակեր ականջները, բայց մոռացավ: Արևի մեջ, կապույտ բազրիքի մոտ կանգնած՝ նա օրորվում էր, չէր օրորվում, իրեն հրում էր դեպի մեծ սենյակի ծալքը և մոռանում էր գնալ: Ձեռքերը փխրորեն բարձրացրած՝ նա նազանքով օրորվում էր և մրմնջում.

– Ախր ինչի՞ս է պետք, ինչի՞ս… Ախր ինչի՞ս է պետք, ինչի՞ս… Ախր ինչի՞ս է պետք, ինչի՞ս… Սերո՜…

– Դե թող սպանի, ինչի՞ս է պետք էստեսակ կյանքը,– հարբածի պես գլուխը կրծքին՝ բողոքեց նա:

Տանը նա ծալքի վրա ընկավ և ինքն իրեն ասաց.– Չէ, էդ դու չես,

էդ քաղաքավարություն չի,– և բարձը տարավ դեպի թախտը և գլուխը բարձի փափուկ մթության մեջ թաղած՝ նա ասաց բոլորին, բոլորին.– Ինչ ուզում եք եղեք՝ առողջ եղեք… Ա՛յ ցավ, ի՞նչ ես ուզում ինձանից:

Եվ ականջ դնելով ցավին, նա տեսավ, որ ցավը հիմա դուր է գալիս տաք մոխրի պես:– Ես քո գլուխը հողեմ,– մրմնջաց նա որպես փորձությունն անցըրած և միանգամից կարծես գայթեց ու ընկղմվեց արևի տակ գոլ ջրի մեջ:

Իբր թե չորս կովի տեր՝ իբր թե սարում էր: Կանաչ ու արև էր: Իբր թե չորս կովն էլ կթի էին, չորս հորթ էր կապած մի ցցից:– Երազ եմ տեսնում,– մրմնջաց նա և տեսավ շարունակությունը. ինքը որդուն պատմում էր, թե մի ժամանակ երազում շատ էր թռչում, հիմա էլ չի թռչում: Կանաչ ու արև էր, որդին ասաց իրավարի.– Որ ուզենաս՝ հիմա էլ կթռչես:– Եվ որդին թևին արավ ու թռավ:– Արի, հեշտ է, արի,– մաքուր, ուրախ կանչեց որդին:– Էլ սիրտ ու ցանկություն չի մնացել, կովերը կթելու են,– դերասանավարի տխուր՝ պատասխանեց ինքը,– բայց, մեկ էլ, ինքն էլ էր թռչում: Երկուսով թռչում էին ուրթի, գյուղի, խոտհարքների վրայով:– Մեծ կնիկ ես՝ երեխայի երազներ ես տեսնում,– մրմնջաց նա և իրեն ասաց, որ Սիմոնն ուշանում է, եթե որևէ գործից ինքն ուշացել է՝ միշտ Սիմոնի պատճառով:– Ժամացույցը սրանց ցեղի համար չի,– ջղայնությամբ մտածեց նա և իրեն ասաց, որ չպետք է ջղայնանա:– Քնիր, քնիր, մի կես ժամ աչքդ կպցրու՝ մի ամիս քեզ բավական է:

Սիմոնը քաղաք պանիր ծախելու էր գնացել, կովը ծնելու վրա էր, գյուղացի ու հասկացող Ադամը նայեց՝ «էս կովը քսան օր դեռ ունի», իսկ ինքը չհավատաց Ադամին, բայց քնեց: Գիշերվա էն դառը կեսին Իշխանի ձայնը կանչեց.– Ա՛ղունիկ, Ա՛ղունիկ, Ա՛ղունիկ…– ինքը վեր թռավ ու վազեց գոմ՝ Արմենակը գոմում էր, կովի մոտ տնքտնքում էր, հորթը թարս էր գալիս: Մի երկու անգամ ետ մղեցին, մինչև ճիշտ եկավ:– Դու էդ ինչպե՞ս զարթնեցիր, Արմենակ,– հարցրեց ինքը:– Երազում Իշխան պապին տեսա, վրաս գոռգոռաց, թե կով է ծնում, այտա, տասնչորս տարեկան ես՝ քնել ես, կով է սատկում, այտա:- Արմենակը չհավատաց, որ մորն էլ Իշխանի ձայնն է արթնացրել: Իսկ սրանք, Սիմոնն էլ սրանց հետ, ծաղկեցրի՞ն. «Իշխանն ասել է՝ ճակատը ծաղիկ հորթ է ծնվում, այտա, վեր կաց, Աղունիկ, Սիմոնը պանիր ծախելու է գնացել, կովը դու պիտի ծնեցնես, Աղունիկ»:

Բարձը տեղը դնելուց հետո նա հայելու դեմ շտկեց քունքի մազը

և ուզեց հիշել, թե ձեռքին ինչ գործ կար գլխացավից առաջ: Եվ պատշգամբ ելնելով, նա ասաց հաշտվողի պես.

– Խեղճ հերս միայն Սիմոնի դեմ զորու չեղավ: Թենիս է շինում՝ թենիս է շինում: Թենիսի սեղան են տվել՝ թենիսի սեղան է շինում:

Սիմոնը կապրի հարյուր տարի: Սիմոնը կապրի հարյուր տարի – մեզ մեր հիսունը բավական է: Ագռավն ապրում է հինգ հարյուր տարի, ուրուրը… ինչպես է՞ր… բազեն: Ագռավն ապրում է հինգ հարյուր տարի, բազեն՝ քառասուն: «Պաահ, հինգ հարյուր տարի սատկած լեշ ուտե՞մ,– պատասխանեց բազեն»:

Կապերը կտրտելով շունը հաչում էր դեպի ներքև: Անասուն չկար, մարդ չկար, Ադամը տուն էր մտել քնելու,– ինչո՞ւ էր հաչում: Հա՛, շան լափը կրակին է: Մի օր էլ կխփի, կսպանի այդ գլխացավը – պիտի բուժվել:

– Այ շուն, ի՞նչ ես ուզում դու քեզանից:

Ներքևում Ադամի տունն էր, ծորն էր, քարկապն էր, կաղնին էր, մարդ չկար, դիմացը՝ անտառն էր: Դիմաց անտառի բացատում մի սև կով էր երևում: Կապն արձակի՝ շունը կթռչի ծվատելու էստեղից դիմացի անտառ: Աղունը լափ լցրեց գուռի մեջ, բայց շունը ծառս լինելով կտրտվում էր դեպի դիմացի անտառ: Այս դռան շները թշնամի են ամեն մի շունչ արարածի: Սրանից առաջ եղածը սրտի պայթյունից սատկեց – շուն չէր, մոտոր էր, եռում ու պայթում էր ինքն իր մեջ: Իսկ նրա առաջի Չամբարը իրեն մենակ տվեց ոհմակի մեջ, պատառոտեց ու պատառոտվեց: Այս դռան շները դիմանում են չորս-հինգ տարի: Մինչև հիմա մի յոթ շուն է եղել, երբ Ադամինը երկրորդն է, սկեսրոջ դռանը մի Բասար էր ու մինչև հիմա մի Բասար է: Բարի, հանգիստ, ալարելով – շուն չի, էշ է:

Շունը ականջները ցցեց ու սպասեց՝ քարափի ոլորանում երևաց Սիմոնի կեսը: Սիրտ պատռելու չափ դանդաղ աչքառ ելավ լրիվ ու արահետի վրա օրորվեց իր գայթող քայլվածքով: Դանդաղ գալիս էր. տուն է, էլի, կհասնենք, էլի: Պատերազմի հաշմանդամ Ոսկանը, երկու շիշ օղու գրազով, ուսին դրած Մանացից Վանքեր է հանել երկու փթանոց աղաքար – սրա քայլվածքի՛ն նայիր:

Նրա մոր նման ձեռքը ճակատին՝ Աղունը ասաց նրա մոր պես հոգածու.

– Կա՞մաց արի, ոտքերդ կցավեն, կամաց արի…

Սիմոնը կանգ առավ: Մեծ գլուխն ուսին՝ քարափի ետևից դուրս եկավ, կանգնեց ու նստեց Սերոն: Անձրևներից առաջ և խմելուց հե-

տո Արմենակը ծռմռվում է ոտքի ցավից. պատճառն այս լավ հայրն է, որ երեխային երեք-չորս տարի պահեց ռետինե տրեխների մեջ: Ինքն ասում էր.– Էդ անտեր ռետինը էդ երեխային սպանում է՛,– Սիմոնը՝ «մաշվել է՞»:

– Այտա, բան էիր ասո՞ւմ,– կանչեց Սիմոնը քարափի արահետից, կանգնած տեղից:

– Մի քիչ էլ հանգստացիր, հետո կասեմ,– ցածր ասաց Աղունը և գոռաց.– Շա՛տ ես շուտ գալիս, արի մի քիչ էլ էստեղ պառկիր, հետո էլ՝ տեսնենք:

Սիմոնը դարձյալ սպասեց:

– Երևա՛ն եմ գնում, շտապում եմ, ձի է պետք, ձին ձորում կապած է, պիտի բերվի,– բացատրեց Աղունը:

Սիմոնը հասկացավ և շուռ եկավ ու իր գայթուն քայլվածքով գնաց արահետով ետ: Վայ էն ոտքին, որ չհասկացող գլխի ձեռք է ընկել. միանգամից չէր կարող ձոր իջնել, ձին բերել հետը – մեկը պետք է, որպեսզի թելադրի:

– Էդ սառը գետնին մի նստիր, վեր կաց, Սերո…

Երեխան ծույլ-ծույլ օրորվեց, բայց երբ Աղունը ճաշը կրակին դրեց ու անցնում էր խոհանոցից մեծ սենյակ՝ նա դեռ նստած էր:

– Էդ սառը գետնին մի՛ նստիր ասացի:

– Սառը չի:

– Սառն է, սառը, վեր թռիր:

– Դու գեներալ ես, ամեն ինչ գիտես:

– Ոտքդ ցավում է՞, Սերո ջան:

– Քո ինչ գործն է:

– Դե որ իմ ինչ գործն է՝ սատկիր:

Վայ թե սա էլ հոդացավ ունի, մեկ-մեկ նվում է. էս ի՞նչ կրակ է, էս ի՞նչ աստծո անհաջողություն է էս տան գլխին: Ինչի՞ս է պետք թե թերթում գրել են անունս ու գովել են, թե կողքից ասում են կեցցես՝ երբ իմ մեջ ուժ չկա ուրախանալու:

– Հիմա որ եկա հա՛… Վե՞ր կաց էդ գետնից: Էդպես:

«Քանի դեռ խանգարիչներս չեն եկել՝ ինձ հաշիվ տամ: Ես գնում եմ Երևան: Էս՝ ես եմ, էս՝ բեռներս. սա՝ օժիտը՝ ամեն ինչ ամբողջական. երկու բարձ, երկու վերմակ, երկու ներքնակ. սավանների փողը պետք է առանձին դնել. սրանք՝ կարպետը և գորգը. այո, կարպետը և գորգը. այս՝ երկու կտոր (կայարանը լիքը ժողովուրդ – աղջիկ ես՝ բեռներդ ական պահիր). խնձոր, ձու՝ չորս կտոր: Պանիր, կարագ՝

վեց կտոր: Ղաուրման՝ յոթ, մեղրը՝ ութ. ձեռքիս մածուն-մուծունը՝ ինը: Երևան եմ գնում, ինը կտոր բեռ ունեմ: Պանիրն ու կարագը խուրջինի ակներում՝ դարձավ մեկ կտոր – ութ կտոր, մածուն-մուծունը պանրի վրա՝ յոթ կտոր, մեղրը կարագի հետ խուրջինի մի ակնում՝ վեց կտոր, խնձորը մնում է առանձին, ձուն՝ առանձին: Վեց կտոր, վսյո՛: Եթե ինձ չշաղեն՝ վեց կտոր բեռ ունեմ: Հիմա գնացքներում գողությունները քչացել են, էգուց Երևան եմ: Վսյո՛»:

Ի՞նչ է պակաս: Պակաս է մեքենա և տոննա: Գոդի Արտաշը քոչում էր Կիրովական՝ դղրդաց հինգ բեռնատար ավտո: Ադամն ասաց. «Մեր կոլխոզն էդքան ապրուստ է ունեցել՝ ես անտեղյա՞կ»: Մուրաբան, թքուն, կարտոլը կուղարկեմ ձմեռնամուտին: Ավելուկ: Ավելուկը՝ հիմա չմոռանամ: Ասում են Արզումանյանը Մոսկվա քաղաքում շատ է սիրում ավելուկ: Ավել-պակաս չկա՞: Իմ աղքատ մարմնի համեմատ՝ պակաս ոչինչ էլ չկա, իսկ ավելին՝ ավելի է ամենավերջին ձուն էլ, որովհետև հնարված է անհնար տեղից: Վսյո՛: Ինչ էի ավելացնելո՞ւ: Անկարևոր մի բան էի ավելացնելու, ի՞նչ էի ավելացնելու:

– Սերո ջա՞ն… Մի բան էր միտս, մոռացա, Սերո ջան:

– Ի՞նչ:

– Չեմ հիշում, գլխիս խելք չի մնացել:

– Հետդ տար՝ ասեմ թե ինչ ես մոռացել:

Նա թևերը կանթեց, նայեց որդուն, նայեց, հանկարծ սկսեց անձայն ծիծաղել:

– Ի՞նչ է, չես տանում, հետն էլ ծիծաղում ե՞ս:

– Դուք էլ որ չլինեիք՝ ես ինչի՞ համար էի:

Խրախուսված երեխան ուզեց պնդեցնել տեղը.

– Չեմ խանգարի, ինձ համար կողքիցդ կգամ:

– Հաա՞ որ:

– Մի բան էլ ես կօգնեմ:

– Վայ թե չօգնես:

– Ես բեռներին կնայեմ, դու կգնաս ջուր խմելու:

– Ճիշտ է:

– էլի քեզ հետ ետ կգամ, Երևան չեմ մնա:

– Ասում եք ու չեք անում, եսի՞մ:

– էն անգամ բա չեկա՞:

– Ես էի լաց լինում:

– Բա՝ դեռ չէինք հասել, ասացիր գնանք:

– Բա՝ մեր տան գործերը ո՞ւմ թողնեինք:

– Բա՝ չեկա՞ր տեսար խոզերը ական են, հավերը ական են, շունը սոված չի:

– Հա, դու ու քո հերը շանը լավ էիք յուղ կերցրել:

– Ես մեղավոր ե՞մ, Նազիկը երկու անգամ էր աղ գցել ճաշի մեջ:

– Պրոֆեսոր Սերո ջան, ի՞նչ է նշանակում… ի՞նչ է նշանակում ներծծվել:

– Որ ասեմ, հետդ կտանե՞ս Երևան:

– Որ ասես՝ կտանեմ:

– Օրինակ՝ ինչպե՞ս ներծծվել:

– է՜, քիչ ես կարդում, չես կարդում: Քո ախպերը քո տարիքին ասում էր Աուգուստ Բեբել: Քո տարիքին, քո հորեղբայր Հակոբն էլ բանակից եկած՝ հետը գրազ բռնեց, որ Մաքսիմ Գորկին մահացել է հազար ինը հարյուր երեսունվեց թվին ու ճիշտ դուրս եկավ: Ես լամպը հանգց-նում էի, ինքը վառում էր, ես հանգցնում էի, ինքը վառում էր:

– Իա՜… ներծծվելը էն է ներծծվելն է, էլի:

– Ինչպե՞ս է ներծծվելը:

– Ծծվել, ներծծվել, ծծան, ներսծծվել: Ծծիչ, ներս ծծիչ: Տանում ե՞ս: Մարգը ո՞նց է ջուրը ծծում:

– Պրոֆեսոր Սերոն:

– Սխալ է՞:

– Տիկին Սոֆին հապա ինչպե՞ս է հալվել, ներծծվել աշխարհին, աշխարհը մի քիչ սոֆիացրել:

– Տիկին Սոֆին ի՞նչ է:

– Տիկին Սոֆին կին է:

– Եսի՞մ: Երևի սխալ է գրած:

– Ինչպե՞ս է սխալ գրած, պրոֆեսոր Սերո: «Երևի»:

– Թվաբանության խնդիրը ինչպե՞ս է սխալ լինում:

– էդ՝ ախպորդ գրածն է:

– Բա դու ո՞նց ես կարդացել: Տառերը ճանաչում ե՞ս:

– «Երևի»: Ախպորդ բոլոր գրածներն իմ պատմածներն են, պրո-ֆեսոր Սերո: Ախպերդ ասում է ինչը որ իմ պատմածն է՝ գովում են, ինչը որ ինքն է ավելացնում՝ չեն գովում: Տառերը չեմ ճանաչում: Սեպ-տեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր – դեկտեմբերից չքողեց դասի գնամ իմ դարպասեցի մերացուն՝ «անինքյունակ ա»: Ինքն ինքյունակ էր, մինչև հիմա Իշխանին Իխշյան է ասում. Իխշյան ճան…

Երեխան փորձեց մտքում, փորձեց կիսաձայն, բարձր – չէր

լինում:

– Ի՞նչ է, դժվար անուն է, էլի,– ինչ-որ մարտական, ինչ-որ բողոքող՝ հանկարծ հայտարարեց նա:

– Որովհետև, Սերո ջան, Ադամի ցեղից ես: «Գը… գը… գը…» – Գլխա՞րկ:– «Հա»:

– Դե արի արտասանենք, տեսնենք ով չի սխալվի:

– Սիրտ չունեմ:

– Որ իմանայիր…

– Ե՞ս չգիտեմ: Ես բանաստեղծ եմ: Ես մի գյուղի չափ խոսք ու տրամաբանություն ունեմ, ես Վանքերի ցեղից եմ:

– Դե որ բանաստեղծ ես՝ արի արտասանենք, տեսնենք ո՞վ շատ կարտասանի:

– Ուրիշների՞ գրածները, ես թութա՞կ եմ: Ես թութակ չեմ, ընկեր Սերո:

– Վուեյ,– սրանցավարի հեգնեց երեխան,– բա էդ մենք թութակ ե՞նք, որ դպրոցում բերանացի ենք անում:

– Թութակ եք, մի բան էլ պակաս եք:

– Բա որ… բա որ ես չեմ սովորում՝ ինչո՞ւ ես ծեծում:

– Որպեսզի մարդ դառնաս, գրիչ վերցնես – եղան չվերցնես ձեռքդ:

– Ով որ եղան է վերցնում՝ մարդ չի՞:

– Մարդ է, դու էլ եղան կվերցնես, Սերո ջան, մի ղեկավար էլ հետը, որպեսզի քեզ բզի՝ թե էս խոտը էստեղ դիր, էս դեզը լավ ծածկիր, որպեսզի մեջը ջուր չառնի, եզներին շուտ խոտ տուր, որպեսզի կովերին չուշացնես, որպեսզի թրիքը ժամանակին դուրս թափես:– Նա, ծնոտն ափի մեջ, դարանած սպասեց: Երեխան մտածում էր, պատկերացնելով տեսնում էր ու հանկարծ բողոքեց.

– Թրիքը ես դուրս չեմ թափում:

– Կթափե՞ս:

– Չեմ թափի:

– Խելոք ես՝ կթափես: Աշխօր կգրեն, կգովեն, մի կիլո կարտոլ կտան, կբերես հորդ կտաս, հերդ կուրախանա… Կուտեք ու կպարեք: Հը՞:

Ուսերը նեղ, գլուխը մեծ ու վիզը բարակ՝ երեխան տնկվեց նրա դեմ, դողաց, դողաց ու ծղրտաց միանգամից, հաչելու պես.

– Չե՛մ թափի: Քեզ ասացին չեմ թափի: Քեզ ասացին ինձ հետդ տար Երևան:

Անձայն ծիծաղելով, նա երեխային քաշեց գոգը և նրա մեծ գլուխը գոգում շոյելով թե կշռելով ասաց.

– Չես թափի, իսկ ի՞նչ կանես:

Երեխան անճարպիկ դուրս պրծավ նրա գրկից, կանգնեց նրա դեմ և ասաց աչքերը չոր ու փայլուն.

– Ինձ պետք չի քո սուտ սերը, ինձ տար Երևան:

– Գնացեք, ճամփան բաց է, ինձ էլ թողեք էս քարի տակին մենակ:

– Քո ճամփան էլ է բաց, դու էլ գնա:

– Երևան քաղաքում էլ անգրագետ չկա, ինձ են սպասում:

– Ինչո՞ւ ես մենակ մնում, բոլորն էլ էստեղ են. էլի:

– Ապրես: Բոլորի լավություններին էդպես կպատասխանես:

– Ի՞նչ ես ասում, չեմ հասկանում:

– Ինչը ձեզ ձեռնտու չի՝ մի հասկացեք:

– Ի՞նչ ես ասում, է, չեմ հասկանում:

– Լավ, թրիք թափելուց հրաժարվեցիր՝ հասկացանք, գնացիր Երևան՝ շատ բարի, Երևան ի՞նչ ես անելու: Մի մտածված պատասխան տուր՝ քո մերը թող ուրախանա: Քո մերը դատարկ խոսքից ուրախացող է:

– Դպրոց եմ գնալու:

– Քեզ ո՞վ է պահելու էնտեղ:

– Արմենի տանը:

– Էն հարսը թևիցդ կբռնի ու դուրս կշպրտի:

– Վուեյ:

– Այո: Քիչ առաջ մեռնում էի, մի օր էլ կարող է չխնայի՝ էլ վեր չկենամ: Ի՞նչ ես անելու: Հարսն էլ դուրս է շպրտել: Անելի՛քդ:

– Մեծանամ՝ կասեմ:

– Իմ մերը չսպասեց իմ մեծանալուն, երեք ամսական էի՝ հանգավ, իմ մերացու դարպասեցին ինձ դարձրեց ջրկիր, տուն ավլող, տորք ծեծել էլ չէի կարող, անինքյունակ էի – ի՞ն-չե՛ս դա՛ռ-նա՛-լո՛ւ:

Երեխան լաց էր լինում: Քոր էր գալիս և ուռչում էր իր կոկորդն էլ: Եվ բռնությամբ ժպտալով, նա ասաց երեխային.

– Քո հորեղբայր Ադամը պսակվելու տղա էր՝ իմացած ոտանավորը չէր կարողանում արտասանել՝ լաց էր լինում, ասում էր ծանր է, է՜… Հիմա քեզ համար էլ է ծանր, Սերո ջան, սրանց ցեղն ես:

Երեխան ասաց մտածկոտ, կասկածելով ու չկասկածելով, որպես վերջին հույս.

– Բա հայրի՞կը:

– Հայրիկդ հետդ կապրի հարյուր յոթանասուն տարի: Հայրիկդ ասում էր Արմենին ուղարկենք կոլխոզ, լավ աշխօր կա ոչխարում: Քեզ էլ կուղարկի թրիք թափելու: Ամեն մարդ էն է դառնում, ինչ որ ուզում է: Ճանապարհները շատ են, կամքը՝ մեկ: Ամեն մարդ գնում է իր ընտրած ճանապարհով – դու ի՞նչ ես դառնալու:

– Հիմա՝ չգիտեմ: Հիմա, էս րոպեիս՝ չգիտեմ:

– Քո տարիքին Արմենը պիես էր գրել,– հանկարծ գոռաց նա:– Ասում էր դառնալու եմ դրամատուրգ: Դարձա՞վ – դարձավ:

– Արտասանիր – արտասանեմ:

– Հա-ա՞: Արտասանիր – արտասանեմ:

– Մի հատ ես – մի հատ դու, մի հատ ես – մի հատ դու:

– Շատ բարի: Կհիշեցնես, ավելուկ եմ վերցնելու: Ես քեզ լսում եմ, ընկեր Սերո:

– Մի ասա ընկեր Սերո:

– Չեմ ասի, շատ բարի:

– Հովհաննես Թումանյան. Չարի վերջը. որ շփոթվեմ՝ չխանգարես, ես էլի տեղը կգցեմ:

– Չարի վերջը Հովհաննես Թումանյա՞նն է գրել թե Ղազարոս Աղայանը:

– Մի խանգարիր, Հովհաննես Թումանյանը: Հովհաննես Թումանյան. Չարի վերջը.

Լինում է մի սար,
Էն սարում մի ծառ,
Էն ծառում փըչակ,
Փըչակում մի բուն,
Բընում երեք ձագ,
Ու վըրեն Կկուն:

– Կո՛ւկու, կուկու, իմ կուկուներ,
Ե՞րբ պիտի դուք առնեք թևեր,
Թըռչե՞ք, գընա՞ք, ուրախանա՞ք…
Երգում էր մարիկ Կըկուն,
Մին էլ, ըհը՛, Աղվեսն եկավ.

– Էս սարն իմն է,
Էս ծառն իմն է,
Ծառում փըչակ կա,
Փըչակում մի բուն,
Բընում երեք ձագ,
Ու վըրեն Կըկուն:

– Կո՛ւկու, կուկու, իմ կուկուներ,
Ե՞րբ պիտի դուք առնեք թևեր,
Թըռչե՞ք, գընա՞ք, ուրախանա՞ք…
Երգում էր մարիկ Կըկուն,
Միհ էլ ըհը՛, Աղվեսն եկավ…

էս ինչո՞ւ չի առաջ գնում… Դո՛ւ խանգարեցիր…

Նա դարձյալ անձայն ծիծաղում էր, երեխան թշնամանքով բողոքեց.

– Ի՞նչ է, դու ինձանից լավ ես արտասանո՞ւմ:

– Ես չեմ արտասանում, իմ գործը լափ եփելն է՝ եփում եմ,– ասաց նա:

– Բա ինչո՞ւ ես ծիծաղում:

– Ծիծաղո՞ւմ եմ: Այո, ծիծաղում եմ:

Ավարտական վերջին քննությունից, Հովիտից, աղջիկը փախավ կիրովականցի դասատուի հետ. իրենք թեկուզ մի թեթև բարկացան, բայց դա լավ էր եղել ավելի, քան բոլոր խնամախոսներով ու նշանդրեքներով ամուսնությունները. տղան Կիրովական տուն ուներ, ճարպիկ էր՝ կարողացավ կնոջը տեղավորել դպրոցում ջոկատավար և մանկավարժական հեռակա ինստիտուտ, միայն թե գնալ-գալ չունեն. արհեստական հավ էր, ձու ածավ, էլ հետը գործ չունի. դե էդպես էլ պիտի լիներ, ո՞ր աղջիկն է ծնողինը, միայն թող վատ չապրեն՝ գլխացավանքը պակաս լինի: Սպասում էին Արմենակին՝ նամակը Սիբիրից եկավ: Տանը սարսափելի լռություն էր: Թերթերն իրար ետևից բերում էին Արմենի անունն ու ակնարկները, թերթերն աշնանը գովեցին Արմենին – Արմենը էլ իրենցը չէր: Արմենին տեսել էին Երևան– Թբիլիսի գնացքի ռեստորանում, իսկ այստեղ տանը լռություն էր: Դրած թթուն իզուր էր, եփած ճաշը անտեղի էր, ամբողջ խնձորը կերան Ադամի թոռները, իսկ մեղրը այդպես էլ սառավ, տաքացավ, սառավ, մինչև որ Սիմոնը կարագի հետ Կիրովական ծախեց թե տվեց խնամիներին:– Բերելու եմ, Սիմոն:– Խանութից շաքար ու օճառ էր առնում, Վարդանենց Արտոն ասաց.– Մեկն էստեղ ձմերուկի կորիզ է կուլ տվել,– և նայեց չքերին, խաղալիքներին, Աղունին, չքերին: Ու խանութի ամբողջ ժողովուրդը ծիծաղեց, լավ ծիծաղեց.– բայց բերելու եմ, Սիմոն, ունենալու եմ:– Բեր,– մի տեսակ կռվելով՝ ասաց Սիմոնը,– ունեցիր:

– Ծիծաղում եմ, որովհետև ես իմ շան լափը եփում եմ, դու քո բանաստեղծությունը չես սովորում:

– Բա քո շան լափին կաց, ինչո՞ւ ես ինձ վրա ծիծաղում:

– Հա-ա՞:

– Դե որ էդքան լավ գիտես, արտասանիր, էլի:

– Ես անգրագետ կին եմ:

– Որ անգրագետ ես՝ մի ծիծաղիր:

– Տո ես ձեր գլուխը հողեմ, էդ ո՞վ է անգրագետ:– Քունքի մազը նա աղջկավարի ականջի ետևն անցըրեց:– Հովհաննես Թումանյան. Թմկաբերդի առումը:

– Պա՜հ, պահ, պահ:

– Հա-ա՞:

Հեյ՜, պարոններ, ականջ արեք
Թափառական աշուղին…

– Մենք էդ չենք անցել:

– Ես էլ չեմ անցել:

Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տղերք,
Լավ ուշ դրեք իմ խաղին…

– Բա երրորդ դասարանում էդ անցնում ե՞ն:

– Ես զրո դասարանցի եմ:

Մենք ամենքս հյուր ենք կյանքում
Մեր ծննդյան փուչ օրից,
Հերթով գալիս անց ենք կենում
էս անցավոր աշխարհից:
Անց են կենում սեր ու խնդում,
Գեղեցկություն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ:

– Գահն ի՞նչ է:

– Թագն է, թագավորությունն է, հարստությունն է, գեղեցկությունն է:

Նադիր շահը զորք հավաքեց,
Զորք հավաքեց անհամար,
Եկավ Թմկա բերդը պատեց
Ինչպես գիշերն էն խավար:
– Հեյ՜, քաջ Թաթուլ,– կանչեց շահը,-
Անմա՞հ էիր քեզ կարծում,
Եկ, բերել եմ ես քո մահը,
Ի՜նչ ես թառել ամրոցում:

– Մի՛ պարծենա, գոռոզ Նադիր,-
Պատասխանեց էն հսկան,–
Գլխովը շատ ամպեր կանցնեն,
Սարը միշտ կա անսասան:
Ասավ, կանչեց յուր քաջերին,
Թուրը կապեց հավլունի,
Թռավ հեծավ նժույգ իր ձին
Դաշտը իջավ արյունի:
Իրան, Թուրան ողջ եկել են՝
Թաթուլն անհաղթ, աննկուն,
Ջորք ու բաբան խորտակվել են՝
Նրա բերդը – միշտ կանգուն:

Ջորավար հերդ ժամանեց: Միասին կապրե՞ք հարյուր տարի:

– Հետո ի՞նչ եղավ:

– Երկար է, ժամանակ չունեմ: Ավելուկը չմոռանամ:

«Էսպես անցան շատ տարիներ,
Տխուր աղջիկն արքայի
Նայե՞ց, նայե՞ց սարերն ի վեր,
Ճամփաներին ամայի,
Հույսը հատավ… ու լաց եղավ.
Էնքա՞ն արավ լաց ու կոծ,
Որ լիճ կտրեց արտասուքը,
Ծածկեց քաղաքն ու ամրոց.
Ծածկե՞ց, կորա՞ն, ինքն էլ հետը…
Այժմ էնտեղ տրտմաշուք
Խոր Փարվանա լիճն է…»:

Չեղուն բարձրանալիս, սանդուղքների վրայից նա նայեց՝ տանձենու մոտ Սիմոնը գալիս էր ձին քաշելով դանդաղ ու Մուրադենց տղերքի պես ծնկները ծալվելով: Բայց սիրտ չկար բարկանալու: Աշխարհը տխո՞ւր, տխուր էր: Ոստակալած տանձենին էլ, նրա միակ կանաչ պատվաստն էլ, մի տեսակ փոքրացած Սիմոնն էլ, աղոտ փայլփլող ձին էլ, ժայռն էլ՝ որ պիտի փլվի ու չի փլվում ու չի փլվում, ամեն ինչը տխո՞ւր, տխուր էր:

– Ծուղրուղու-ղուուուուու…

Երեխա էինք, աղջիկ էինք, հարս էինք, դեռ երեկ էր՝ կարոտում ու սպասում էինք ինչի՞: Մի լավ բանի սպասումից սիրտներս թպրտում էր ինչո՞ւ: Աքաղաղը կանչում էր լուսամուտի տակ՝ ասում էինք հյուր է գալու: Սիրտներս հոգնե՞ց թպրտալուց, էլ չի խփում: Օֆ, հյուր էր գալու, հյուր էր գալու, հյուր էր գալու, սիրտներս պատռեց լավի կա-

րոտից, հյուրը եկավ՝ ղազախեցի չարչին իշով, նռնով ու ոջիլը շալակին: Օֆ, պատերազմ էր՝ մաճ էինք բռնում ու լաց էինք լինում, կալ էինք կալսում, պարկ էինք քարշ տալիս, հունձ էինք անում, եզ էինք պայտում, երգում էինք ու լաց էինք լինում, կարոտում էինք ու սպասում էինք ինչի՞: Թպրտաց, թպրտաց ու հանգավ մորթած հավի պես: Օֆ, երանի կանաչ գերեզմանոցում ննջողներին:

– Մնաք բարով դուք, արոտներ սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն…

հետո՞: Շարունակությունը մոռացել եմ: Հետո՞:

Մնաք բարով դուք, արոտներ սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն…

Սրանից գերազանց եմ ստացել, բայց շարունակությունը չեմ հիշում, ինչի՞ց է:

Նա չարձագանքեց երեխային: Ավելուկը ձեռքին սանդուղքի վրա նստած՝ նա ասաց գլուխն օրորելով.

– Չեմ գնում, չէ:

Եվ դարձյալ տխուր էր աշխարհում ամեն, ամեն ինչ: Ախ, երանի նրան, ով մի անդարձ մեծ կորուստ ունի, կարոտում է ու անհնար է կանչել, կանչվել, զզվել ու զզվեցնել: Երանի գերեզմանաքարերին:

Մնաք բարով դուք, արոտներ սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն:
Մենք ձեզ մոտ կգանք նորեկ գարունքին,
Երբ զարթնեն ուրախ երգերը կրկին,
Երբ որ սարերը զուգվեն կանաչով,
Երբ որ ջրերը վազեն կարկաչով:
Մնաք բարով դուք, արոտներ սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն:

Մի երգիչ տղա ուզեցինք՝ էդ էլ չեղավ: Մեծ բան էինք ուզել – մի ձեն էինք ուզել:

– Այ հեր, բա… ներծծվելը ներս ծծվելը չի՞:

– Ինչը չի ներսծծվե՞լը:

– Ներծծվելը:

Սիմոնը նստեց կոճղին ու ոտքով սապոգը հանեց:

– Հը՞:

Սիմոնը գլխով հարցրեց, թե երեխան ինչ է ուզում:

– Ներծծվելը ներսծծվելը չի՞:

– Երևի:

– Սիմո՜ն:– «Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն… Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն»:

– Ի՞նչ է, ախչի:

– Սիմոն, բանաստեղծներն ինչո՞ւ են շուտ մեռնում:

– Շուտ են մեռնո՞ւմ:

– Շուտ են մեռնում, ասում են սրտի լարը կտրվում է:

– Դե մինչև մեռնելը ապրում են՝ իրենց բավական է, էլի:

– Ասացիր, էլի:

– Դե բա ի՞նչ էի ասելու, լավ են անում՝ որ մեռնում են:

– Սրախոս-սրախոս՝ եկավ:

– Ի՞նչ ես ուզում ինձանից, ախչի:

– Ինչո՞ւ ուշացար:

– Ոտքով եկա:

– Էնտեղից էստեղ:

Սիմոնը նայեց ու լռեց:

– Այ քեզ տեղն է՜, այ քեզ տեղն է՜… Որ գնում էիր՝ քեզ ասացի՞ն ձիով գնա: Ավտո էր տեսել, շոֆերի կողքը դուրս էր եկել:

Սիմոնը հանեց մյուս սապոգն էլ, ոտքերը դրեց սապոգների ճտքերին ու թաթերը շարժեց:

– Բա դու ճամփորդ ունեիր, քեզ չասացի՞ր ուշանում եմ: Հիշում ե՞ս մորաքրոջս թաղումը, հիշում ե՞ս, որ քո պատճառով ուշացա ու չգնացի:

– Ես կարծում էի գալիս էլ ավտո կպատահի:

– Կարծում էիր:

– Գնալիս ավտո կար, ես կարծում էի գալիս էլ կլիներ, իսկ դու գիտեի՞ր որ չի լինելու: Եթե գիտեիր՝ ասեիր:

– Ես քեզ ասացի ձիո՛վ գնա:

– Չին՝ ես հասկանում եմ, իսկ որ ավտո չէր լինելու, դու էլ գիտեիր՝ ասեիր:

– Հա, տունդ էլ մի կարգին տեղ սարքած լինեիր… Էս քարի տակին ես պիտի իմանայի, որ Հովիտից էստեղ ավտո չի գալու:

– Իսկ ե՞ս որտեղից իմանայի:

– Խելքի՛ց:

– Չկա, չունեմ:

– Դրա համար էլ էդ վիճակին ես:

– էլի սկսեցի՞ք, այտա,– ծղրտաց երեխան:

– Դու երեխա ես՝ քո երեխայությանը կաց:

Փոքր եղբոր դռնից պառավը թոնթորում էր մերթ անհասկանալի, մերթ լսելի. «էն տղի երեսը կերավ… Կրակն է ընկել… էն տղին սպանեց թողեց: Արմատահան լինի դրա լեզուն: Վերջ չկա, պատիվ չկա, ամոթ չկա: Այ տակռապոկ լինի քո լեզուն, տակռապոկ: Այ ախչի…»:

– Դու քո թևերն էդտեղից մի՛ կրակիր… Սրախոս եք, կաք, չվերջացաք:

– Ես Երևան եմ գնում, ինձ տանում ես Երևան:

– Ա՛ռ,– անդաստիարակ տղամարդու պես բութը մատների արանքը անցըրեց Աղունը, և դա այն էր, ինչը շարժում էր Սիմոնի գլխի որդերը: Սիմոնը շպրտեց սապոգը, կացինը այգի շպրտեց, թքեց ու մտավ տուն:

Նա մի պահ շփոթվեց, մի պահ կարծես թե զգաց, որ վատ բան է արել, հետո իրեն արգելեց փափուկ ու նահանջող լինել.– էդ եք,– ասաց դեպի թափով վրա եկած դուռը,– քանդեցեք, սարքել եք՝ հիմա էլ քանդեցեք:– Գործ՝ կար. ավելուկը պետք էր տեղավորել. կարելի էր նաև ձին բարձել ինքնուրույն. թող ներսն ամաչի: Պիտի հանել վանդականախշ մեծ շալը: Ձեռքի փողը: Երկու հատ հնգանոց, մի հատ երեքանոց, մի հատ մեկանոց:

– Սերո,– մտասույզ հարցրեց նա,– երկու հատ հնգանոց, մի հատ երեքանոց, մի հատ մեկանոցը ինչքա՞ն կանի:

Սերոն չկար: Սերոն գոմի սրահում լաց էր լինում: Երբ մոտեցավ՝ նա գրկեց սյունը, իսկ երբ ուզեց զոռով քաշել՝ Սերոն պառկեց գետնին ու ոտքերով ծեծեց գետինը:

– Հորներդ էդպես պաշտպանեցեք գազաններից,– և նա արտասուքով ու կատաղությամբ լիքը՝ եկավ իր բեռներին. մեկանոցը՝ շոֆերի համար, գնացքի տոմսն արժե երեք ռուբլի յոթանասունհինգ կոպեկ, երեքանոցը քիչ է տոմսի համար, հնգանոցը՝ շատ. պետք է սկզբից ամեն ինչ դասավորած ունենալ. հնգանոցները՝ անձեռնմխելի. շոֆերը հիսուն կոպեկ ետ է տալու, քանզի ավտոն արժե հիսուն կոպեկ. շոֆերի տված հիսուն կոպեկը երեքանոցի հետ՝ անում է գնացքի տոմս: Վայ թե սխալ է:– Սերո…– Հին փողով՝ գնացքի տոմսն արժեր երեսունյոթ ռուբլի հիսուն կոպեկ: Հին տասանոցը հիմա մեկ ռուբլին է, գնացքի տոմսն ուրեմն ի՞նչ արժեցավ: Իմ հայր Իշխանն ու իմ մերացու դարպասեցին և կռվում էին և հաց ուտում – սրանց ցեղը նուրբ է, ոչ կարողանում է հաց ուտել, ոչ էլ

կռվել։– Սերո… Ա՛յ, կգնամ Երևան, էլ չեմ գա:

– Չգա՛ս:

– Չեմ գա, կապրեմ Արմենի մոտ:

– Ասացի՝ չգաս:

– Հա, Արմենակն էլ էր ասում, իսկ հիմա որ բեռ-բեռ տանում եմ՝ էդ կարելի է, էդ լավ է: Դե լավ, հիմա խոռովելու ժամանակ չի, վեր կաց:

– Չեմ վեր կենում:

– Մի կտոր գաթա տամ՝ խոռվածությունդ կանցնի՞:

– Քեզ լինի քո գաթան:

– Վեր կա՞ց…

Շունը հաչեց, նրանց շունն էլ էնտեղից մի երկու բերան ալարելով, պառավն սկսեց թոնթորալ: Աղունը նայեց դեպի նրանց տուն, հետո իրեն ասաց, որ ինքը հերոս է, որովհետև չի պատասխանում պառավին: Ինքը տուն ունի, գործ ունի, գործի է գնալու:

– Այդպես,– փաղաքշանքով ասաց Աղունը և երեխայի շորերը թափ տվեց,– հեղափոխվել է քո տատ Արուսը, հանկարծակի հեղաշրջվել է. Արմենի դեմքը ջնջխվել էր, ինքը գոմի դռանը՝ խլացել էր, հիմա խուլ՝ քեզ ասում եմ էդ կեղտի միջից վեր կաց՝ լսում է, ականջները սրվել են: Գնացքի տոմսը եթե եղած լինի երեսունյոթ ռուբլի հիսուն կոպեկ, հիմա ի՞նչ կարժենա: Թվաբանությունից ախպերդ էլ էր թույլ: Հորդ ասա, եկեք հաց կերեք:

Սիմոնը մի օր սկսեց նրա եփած ճաշերը չհավանել: Սա կարտոլով ճաշ է՝ աղի ես արել. սա ձու է՝ պինդ ես խաշել. սա փլավ է՝ աղի ես արել. սա խոզի գլուխ է՝ լավ չես խանձել. սա ձվածեղ է՝ մեղր բեր, մեղրով ուտեմ, սա ցամաք կարտոլ է՝ կլպում են, աղով են եփում: Ո՞վ: Սա մածուն է՝ կաթի վրա արաժան են լցնում, էդպես են մերում: Ո՞վ, է, ո՞վ: Բաժակն ափսեով մատուցիր: Ճաշի ափսեի տակ փոքրիկ սփռոց փռիր: Հացը դանակով կտրտիր, տանձից-խնձորից չկա՞: Միսը աղում են, կոտլետ են անում: Ո՞վ, է, ո՞վ: Էլ ո՞վ – լիրբ Սոնան: Աղունը մայիսին սարն է գնացել, կռվում է գայլի ու անձրևի հետ – հունիսին զավթել է Սիմոնին: Հունիսը, հուլիսը, օգոստոսը, սեպտեմբերը: Մեղրամառ են արել: Չուն պինդ ես խաշել, փլավն աղի ես արել, մածունի վրա արաժան չես լցրել – տո ես ձեր գլուխը հողեմ, էդ ձեր մեղրը, էդ ձեր ձուն, էդ էլ ձեր գյուղխորհուրդը ու գյուղով մեկ ձեզ խայտառակելը – գնացեք ձվածեղ կերեք:

«Քո բռնած գործե՞րը: Արի կեր, միսը աղացել եմ, կոտլետ եմ արել քեզ համար, սառչում է»:

Երեկ իրիկուն էլ ճաշ չէր դրել, բեռները կապում էին: Մի րոպե մտածելով, նա փռնում փշրված գաթայի կեսը դրեց Սիմոնի ճաշի մոտ, կեսը՝ Սերոյի: Եվ որովհետև հիմա նրանց համար լավ բան էր արել և որովհետև գնացողն ինքն էր, ուշացողն ինքն էր, գործի իրավասուն ինքն էր՝ մեծ սենյակում չխնդրեց նրանց, այլ հրամայեց.

– Ուտում եք՝ կերեք, չեք ուտում՝ ճանապարհ դրեք, շու՛տ:

– Իմ արևը, մեղք եմ, Աղունիկ, իմ արևը:

– Ես մեղք չեմ, կեղտոտ գուլպաներով գոմի դռնից եկեք, ձեզ տվեք գորգին: Մաքրողը կմաքրի:

Սիմոնը նայեց գորգին, ոտքերին – Աղունը դարձյալ ճիշտ էր. և շատ սրտնեղեց, քանի որ մեծ իրավացին ինքն էր, բայց փաստական ճիշտը՝ Աղունը: Ու միշտ այդպես է եղել, միշտ, միշտ:

– Ես՝ ներողություն,– ասաց,– ես՝ ներողություն:

– Սերո:

– Ես գալիս եմ Երևան:

– Ոչ մի Երևան: Ճաշի՛դ, շուտ: Բրթիր, բրթած կեր:

– Չեմ բրթում:

Նա վերցրեց հացը և ինքը բրթեց:– Կեր: Գաթան՝ վերջում: Ինչքա՞ն հանեցիր, ինչքա՞ն մնաց, ամուսնյակ ջան: Գաթան, ասացին, վե՛րջո՛ւմ:

– Փող չկար, եղածը վերցրի:

– Ճաշը չեմ ուտում:

– Ինչքա՞ն:

– Յոթ հարյուր:

– Ինչքա՞ն յոթ հարյուր, յոթ հազա՞ր:

– Յոթ հազար:

– Ինչքա՞ն էի տանելու:

– Ասում էիր տասը:

– Փո՛ղ չկար:

– Ինչքան կար՝ վերցրի:

– Ամբողջ Հովտի բանկում փող չկար:

– Ամբողջ Հովտի բանկը էդ ի՞նչ է:

– էդ էն է, որ ծաղկած ծառին էլ գնաս՝ քեզ համար կչորանա:

Գդալը ձեռքին՝ Սիմոնը մի րոպե պաղեց, հետո երեխային ասաց.

– Ճաշդ կեր, Սերո:

Երեխան սկսեց ուտել, բայց Սիմոնը չէր կարողանում, չէր լինում, չէր ուտվում, չէր ուտվում: Կուրծքը նեղանում էր ու կոկորդը փակ-

վում: Արմենակը Սերոյի հասակին էր՝ հարցը մի անգամ շատ թունդ դրվեց: Խոտ էր հնձում, Արմենակը ջուր էր բերում, խոտ էր հավաքում, և ասվեց, որովհետև չէր պահվում. դու համարյա թե մեծ ես, Արմեն, ասաց ինքը, իմ տեղն էլ շատ է նեղ, ուզում եմ մորդ դուրս անեմ: Արմենն ասաց հա: Հետո ասաց չէ: Հետո գնաց ջրի, եկավ ասաց հա: Հետո ասաց՝ սա մեղք է, ի՞նչ կանի ինքը առանց մեզ: Տուն հասան ուշ երեկոյին, գիշերվա կեսին, ու թարսի բան էր՝ նա ճուտով սուպ էր եփել, լոբի էր տապակել, մեղր ու թեյ էր դրել սեղանին և բարի՜ սպասում էր նրանց: Եվ այնքա՜ն կին էր, այնքա՜ն մայր էր: Նա նրանց.– Շո՜ւտ,– քշեց տաշտակ ու երկուսին լողացրեց մի տաշտակի մեջ: Ու քշելով անկողին.– Քըշշ, քըշշ, քըշշ,– նա նրանց լավ ծածկեց, լամպը իջեցրեց, ու դուրսը լվացք էր անում: Սիմոնը Արմենին մյուս օրն էլ գործի տարավ, թեկուզ դժվար էր արթնանում,– որովհետև տանը նրանք մենակ կմնային ու կխոսեին երեկվա զրույցից:

– Բանկում ինչքան որ կար՝ վերցրել եմ,– ասաց Սիմոնը,– թող հաց ուտեմ:

– Կեր,– ասաց նա,– հավ էլ եմ տալու: Ինչքա՞ն էի տանելու, ինչքա՞ն է պակաս:

– Երեք հարյուր:

– Ինչքա՞ն երեք հարյուր, երեք հազա՞ր:

– Երեք հազար:

– Ներողություն,– ասաց նա,– չես կարո՞ղ պարտքդ Սաքոյից առնես:

– Սաքոն սարում է, նրա տալիքն էլ վաթսուն ռուբլի է:

– Վեց հարյո՞ւր:

– Վեց հարյուր:

– «Վեց ու յոթ»,– հաշվեց նա:– Ամեն կնիկ իր տան գործերը գիտի. Սաքոն սարում է՝ Լուսիկը տանը կլինի: Եթե լրիվ չի ունենա, թող երեք հարյուրը տա, երեք հարյուրն էլ հետո կտա – ես գործ ունեմ՝ գնամ իմ գործին:

– Եթե երեք հարյուր տա՝ կլինի յոթ հարյուր երեսուն ռուբլի:

– «Յոթ, երեք»,– հաշվեց նա:– Ի՞նչ անենք, որ անգրագետ եմ, ինչո՞ւ ես խաբում:

– Ի՞նչ եմ խաբում:

– Յոթ, երեք՝ տասը:

– Սաքոն տալիք է վաթսուն ռուբլի, վաթսունի կեսը երեսունն է,

բանկից հանել եմ յոթ հարյուր, երեսուն էլ՝ յոթ հարյուր երեսուն:

– Սերո, թուղթ ու մատիտ բերեմ՝ հա:

Գդալը ձեռքին՝ Սիմոնը սառավ:

– Հիմա հավ եմ տալու,– ասաց նա,– թվաբանությունից հիմար եմ:

– Հին ու նոր փողերը խառնում ես,– ասաց Սիմոնը:

– Ինչ որ է, հազիվ առիթ է, պարտքդ ուզիր:

– Հիմա չունի, ոչխարը ծախի՝ կտա:

– Մեր ոչխարը խուզելու մնաց:

– Էսօր կխուզեմ:

– Բա որ,– ասաց Աղունը,– նա Կիրովական ոչխար ծախի, Կիրովական քաղաքից փո՞ղ ետ կբերի՝ որ քո պարտքը տա: Դու ետ կբերե՞ի:

– Ինչու չի՞ բերի:

– Կտա, Սիմոն, խելք կառնի, չիթ կառնի, կոշիկ կառնի:

– Այո,– ասաց Սիմոնը:

– Բա ի՞նչ ենք անելու:

– Հաց ենք ուտելու,– ասաց Սիմոնը:

– Հացը չի փախչի: Պարտքը:

– Հիմա չունեն:

– Օ՜ֆ-օֆ, ծաղկած ծառին գնաս՝ կչորանա:

Երեխան գլուխը բարձրացրեց՝ գդալը ձեռքին հայրը սառել էր. հիմա հոր ափսեն ետ էր հրվելու, դուռը շրխկալու էր, մայրը ասելու էր «էդ եք»: Կտրուկ շուռ գալով դեպի մայրը, զույգ ձեռքով ափսեն շպրտելու բռնած՝ երեխան ծնոտով ցույց տվեց դուռը:– Շո՛ւտ:

– Էլ չեմ խոսի, լավ,– խելոքացավ նա:– Ձեր արդար հորը պաշտպանեցեք:– Եվ ձեռքերը կրծքին ծալած, նա կուչ եկավ, դարձավ մի բուռ, հնազանդ, ճնշված, խեղճ, խելոք, լսող, անլեզու և ճորտ: Գաթա է թխել. հավ է փետել-եփել, լիտրը լիտրին գցելով ոչխարի պանիր է արել, խանութից մի կերպ - մի կերպ պոկել է տվել առաջին տեսակի ալյուր, որպեսզի սրանց ցորենը հաց դառնա – ո՞վ է հարցնում թե, Աղուն, ի՞նչ ես ուտում: Վեց հարյուր, երեք հարյուր, չորս հարյուր, տասը, քսան, քսանհինգ՝ ինքը առնել է տվել նրա պարտքերը – ո՞վ է ասել ապրես: «Մարդիդ երեսը ուտում ես»: Եկեք դուք լիզեք, մի կերեք: Որբ, անօգնական, անընդունակ, առանց սովորեցնողի, խոզի հետ, կովի, լվացքի, ջրի, ճաշի, շան լափի հետ՝ ինքը գործել է չորս գորգ – «գիծը ծուռ ես գնացել»: Նա լաց եղավ և

որպեսզի իր արտասուքով,– սրանք զգայուն են,– չփչացնի սրանց ախորժակը, վեր կացավ ու, մի բուռ դարձած, գնաց դեպի դուռը: Բայց որպեսզի սրանք՝ աշխատավորները, կարգին վայելեն, նա պահարանից սեղանին դրեց հավը: Եվ դուրս գնաց հնազանդ-հնազանդ, տան ծառայողի պես՝ որ լիքը սեղան է գցում և դատարկ սեղան է հավաքում:

– Քո մայրն է,– ասաց Սիմոնը,– արեցիր, մյուս անգամ չանես:

– Քո էլ կինն է, մի ժամ առանց կռվի ապրեցեք:

– Ճիշտը ինքն է:

– Ճիշտը ինքն է, ճիշտը ինքն է՝ ամեն ժամ կռիվ:

– Կեր: Ինչ որ ասում է՝ լսիր, ճիշտը ինքն է:

– Դե դու էլ ձիով գնայիր Հովիտ:

– Կարծեցի ավտո կպատահի, ավելի շուտ կգամ:

– Ոտը չեմ ուտում:

– Կուտե՞ս փափկամիս:

– Ատամներիս արանքում մնում է:

– Դու էլ մի ծամիր:

– Հը-հը-հը-հը… Ո՞վ է թութ կերել, հետո էլ վարունգ կերել, հետո էլ ուռել:

– Վրացոնց Ավագը:

– Ռիտայի պա՞պը:

– Այո… Ռիտայի:

– Ինչքա՞ն էր կերել:

– Մի փութ՝ մի փթանոց դույլ:

– Հետո ի՞նչ էր եղել:

– Ճաշի վրա չի կարելի ասել:

– Ինձ ուղարկիր քաղաք,– պահանջեց տղան:

– Հունվարի արծակուրդին միասին կգնանք:

– Չէ, միշտ:

– Յոթերորդը վերջացնես՝ կգնաս:

– Յոթերորդը վերջացնեմ՝ կգնամ ու կգնամ: Ես հիմա եմ ասում:

– Բա մենք էստեղ ի՞նչ անենք մենակ:

– Իմ գործը չի:

– Բա ո՞ւմ գործն է:

– Արմենին ինչո՞ւ եք ուղարկել:

– Կարծում էինք կգնա ու կգա, էն էլ գնաց ու չեկավ:

– Ես ու Արմենը քաղաքում կլինենք, դուք՝ էստեղ: Ես մեկ-մեկ

կգամ:

– Յոթերորդը վերջացրու, տեսնենք գլխներիս ինչ է գալիս:

Սիմոնը, հոգնած ու խուլ, հնձից եկավ տուն՝ լույսերը վառվում էին, շունը փաթաթվեց ոտքերին, այգում քչքչում էր առվի ջուրը, բուխարու մեջ մարմրում էր թեյի կրակը, բայց տունը լո՜ւռ: «Աղջկա հետ էլի կռվել է»: Սիմոնը հազաց ու ներս մտավ՝ աղջիկը գիրք կարդալով համերգ չէր լսում: Աղունը նստել էր գզրոցների տակ ու լաց էր լինում:– Կռվել ե՞ք:– Փախել է Կիրովակաա՜ն:– Բա քննությո՞ւնը:– Գերազանց է ստացել ու դասատվի հետ փախել է՜էէ:– Սիմոնը նստեց թախտին ու խուլ սպասեց: Ոչինչ չէր պատահում: Լույսը վառվում էր, գորգը կախված էր պատից, դուրսը խլթխլթում էր թեյամանը, պատուհանի գոգին աղջկա գրքերի դասավորությունն էր, գզրոցների դեմ քիթը վեր էր քաշում Աղունը:– Հետո,– ասաց Սիմոնը,– կարգին տղա՞ է, թե՞ լածիրակ-մածիրակ է:– Պատմության դասատո՜ւն է,– հեկեկաց Աղունը:– Դե լավ, լաց մի լինի:– Երեկ հետը կռվել էի, ասաց էլ տուն չեմ գա, էս չորացած լեզվով ասացի իմ ուզածն էլ էդ է,– աղջկա նկարի վրա օրորվեց Աղունը: Սիմոնը տնքալով թիկնեց մութաքաներին և խուլ ու հոգնած ասաց.– Արմենակը գա՝ մի բան կմտածենք.– ու այդպես էլ քնեց մութաքաների վրա, իսկ առավոտյան աղջկա մահճակալը տխուր ու դատարկ էր: Արմենն այդ ամառ արձակուրդի չեկավ, Սիբիրից երբեմն կատակներ էր անում՝ «առանց հոնորարի մի տող էլ չեմ կարողանում գրել, դրա համար էլ նամակ քիչ-քիչ եմ գրում»: Թերթերում լինում էին նրա հոդվածները, որոնք այնքան էլ լավը չէին, բայց այդ աշնանը նրան գովեցին: Ասաց նոյեմբերին մի հինգ օրով կգա, բայց նոյեմբերին հեռախոսով հոդվածներ էր հաղորդում Բուլղարիայից թե Չեխոսլովակիայից: Աղունը երեսունյոթ տարեկան էր, Սիմոնը՝ քառասունութ: Աբել ապին ու Արուս նանը Հակոբին ունեցան՝ երբ Ադամի կինը կար, Սիմոնն էլ մի տասնութքսան տարեկան տղա էր: Ամոթ չէր լինի: Կատակողները մի քիչ կկատակեն, հասկացողները կհասկանան, որ բուի պես ապրելը դժվար է: Իսկ ընդհանրապես՝ երեխան այս տան համար է և ոչ թե կատակողների կամ հասկացողների: Մի քիչ ամաչելի էր Արմենից,– նրան տեսել էին Թբիլիսի-Երևան գնացքում աղջիկների ու տղաների մի մեծ խմբի հետ, ձեռքերն աղջիկների վզներին,– բայց Արմենն էլ եթե մտածողություն ունի, թող կարողանա մտածել ծնողների մասին:– Բեր,– ասաց Սիմոնը, դու երեսունյոթ տարեկան ես, ես՝ քառասունութ:– Սիմո՜ոն,– Ցից-քարի

գահերից կանչեց Փիլոն,– աչքալույսն ի՞ինչ, աչքալույսն ի՞ինչ: Հնձվորները վրա տվեցին թե՝ Սիմոն, պիտի պարես. Սիմոն, պիտի պար գաս, թղթակից տղա ես ունեցել: Քունքերը ճիփ-ճերմակ, մազերը ցանցառ՝ Սիմոնը մի երկու շարժում պար եկավ, բայց ամաչելով ծիծաղեց:– Այտա, ամոթ է:– Հետո Սիմոնին առաջ գցեցին ու քշեցին մինչև ծորքի տակը: Հետո ասացին պիտի հնձես տակնիվեր ու իրենք էլ շարվեցին նրա ետևից, ապա մածուն ու մեղր խմեցին նորեկ թղթակցի կենացը և Սիմոնին վազեցրին ջրի: Իսկ Վարդանենց շաշ Արտոն կպավ թե՝ ինձ պիտի շալակես էստեղից մինչև ծորքի գլուխը, բայց Մուշեղը Արտոյին բռնեց, ու Սիմոնին Արտոյի շալակը տվեցին: Ամբողջ օրը կատակ ու ծիծաղ էր, բայց վերադարձին Սիմոնն ասաց. «Չէ, էս մեկը մեզ համար է. էն մեկը աշխարհին, էս մեկը՝ մեզ:– Եղբոր ետևից կթռչի՞,– ասաց Մուշեղը,– քաղաքի տերը չմեռնի»: Լուսին չկար, անտառը ցեխի պես մութ էր, իջնում էին գայթելով ու զգույշ: Գյուղի գլխին անտառից դուրս եկան՝ Վարդանենց շաշ Արտավազդը արահետից մի կողմ քաշվեց ու թլիկ-թլիկ հրահանգեց. «Դիվիզիա, ստա՛նավի՞հս,– և մեկ-մեկ ճանաչելով անցնողներին, ծիծաղելով հայհոյեց.– Սրա մերը… բոլորդ կույր ու կաղ թոշակառու եք, մեջներիդ իբր ջահելը ես եմ, ես էլ անընդունակ եմ, քաղաքում իմ դնչին ոչ մի կնիկ քացի չի տա»: Ճամփաբաժանում Սիմոնը նրանց կանչեց մի-մի բաժակ խմելու: Եվ երբ անցնում էին Նիկալ պապի տան ձորը, ասաց. «Անկեղծությամբ, էս մեկը գյուղի համար է ստեղծված:– Ոչ ոք էլ իր երեխայի վատը չի ուզի,– ասաց Մուշեղը, և Սիմոնը պատասխանեց.– Իսկ իր վատը կուզի՞:– Երեխա-երեխա զրույց եք անում, աշխարհը կարծես թե ձեր ուզելով է. աշխարհ է, իր համար գնում է, էլի»: Սիմոնը ետ նայեց՝ Վրացոնց Արշակ քեռին ջրի մյուս կողմն էր, կռացած փնտրում էր առվի վրա անցնելու տեղ: Լույս դառնաս: «Աղունիկ ջան, ո՞նց ես,– կամաց հարցրեց Սիմոնը:– Էն ո՞վ են:– Տղերքն են, կանչել եմ մի-մի բաժակ խմեն:– Ի՞նչ տղերք:– Դե տղերքն, էլի, հնձվորները:– Տնաշե՞ն,– ժպտաց Աղունը, և Սիմոնը չհասկացավ, թե նա ինչու է ասում տնաշեն:– Տղերքին ճանապարհեմ,– ասաց Սիմոնը, լիտրանոցը տարավ փոքր սենյակ՝ լույսի տակ տղերքը ջարդվածի պես թափվել էին,– չսափրված, կնճիռ-կնճիռ, ճաղատ-կիսաճաղատ, մի աչքը կույր, ֆսֆսան, անատամ, մի երկու ատամով, Վարդանենց Արտավազդը՝ ծնոտը մի կողմի վրա,– նստած տեղները քնում էին, և Սիմոնը հասկացավ, թե Աղունը ինչու կլիներ ասած տնաշեն:

– Ախչի, էսքան էս ի՞նչ ես տանում:

– Համմե՞,– արհամարհեց նա:

– Ասում եմ էսքանը ո՞նց ես տանելու:

– Ես քար եմ:

Սիմոնը գոմի դռանը ձին թամբեց, բերեց կապեց սյունից.

– Բարձե՞նք:

– Եթե քունդ չի տանում:

– Դժվար բեռ է: Ադա՜մ,– կանչեց Սիմոնը:

– Ո՜չ:

– Ի՞նչը ոչ:

– Մի կանչիր: Ես կամ:

«Ի՞նչ է, Սիմո՜ն»:

– Սել ես սարքո՞ւմ:

«Կամաց-կամաց»:

– Դեսն արի:

Փոքր եղբոր դռանը պառավը գոհացավ:– Իրար օգնեցեք, իրար պաշտպանեցեք, իրարից խորհուրդ հարցրեք,– մրմնջաց պառավը:

– Աղունիկ:– Սիմոնը մեծ սենյակ մտավ՝ Աղունը հագնվում էր:– Փեշդ ես հագնո՞ւմ:

– Այո, Սիմոն:

– Բա փեշով դժվար չի լինի՞:

– Դու քո գործին կաց, մի ձի բարձել է՝ եղբորդ էլ կանչիր, փոքրին էլ կանչիր, Մուրադենց էլ կանչիր, գուցե հաջողվի:

– Խոսում ես, չես թողնում մարդ իր մտածածը ասի:

– Քո եղբայր Ադամի մտածածը հասկանալու համար մի աքցան է պետք ու մի տարի ժամանակ:

– Ասում եմ նամակ գրենք, թող ինքը գա իր բեռները տանի:

– Ապրես:

– Կամ թե չէ՝ ես տանեմ, քեզ համար ծանր կլինի:

– Գնաս մի ամիս նստես, գաս՝ հարսն ի՞նչ աղջիկ էր – աղջիկ էր, էլի. Արմենն ի՞նչ էր անում – անում էր, էլի, կտորեղեն էիր առնելու, ո՞ւր է – կառնենք, էլի: Դո՛ւ տար, Սիմոն:

– Ախր հետո գալու ես հիվանդանաս:

– Իմ հիվանդությո՛ւնն էլ րոպեական է, էդ դուք եք, որ տնքում ու վռչում եք տարիներով:

– Էս է, որտե՞ղ ես պահելու:

– Ինչքա՞ն է:

Սիմոնը սկսեց հաշվել: Մեկ-մեկ, դանդաղ, հարյուր-հարյուր առանձնացնելով, շփոթվելով և սկսելով նորից:

– Ախպերդ գալիս է, վերջացրու,– շշուկով ասաց նա:

– Յոթ հարյուր:

– Յոթ հազա՞ր:

– Հա: Որտե՞ղ ես պահում:

– Էդ քեզ չի վերաբերում,– շշուկով ասաց նա:

Պատերազմի ժամանակ գնացել էին Թիֆլիս տղերքին տեսնելու – սրանց մայր Արուսն էր, կարմիր Սաթոն, ինքը, Եգորի Սիրուշը: Մանացի մոտերքը գալիս էին՝ գնացքի լույսերը հանգան ու մի կնոջ ձայն ծղրտաց ու աղերսեց. «Երեխեքիս ապրուստը տարան, վա՜յ երեխեքիս թողեցին անհաց, վա՜յ երեխեքիս զրկեցին»: Մեկը սեղմվեց վագոնի պատին, ու այդտեղ Աղունին կարծես թե հուշեցին, որ դա իր եղբայր Վալոդն է: Աղունը լուցկի վառեց, դեմ արեց նրա աչքերին ու ասաց. «Վալո՞դ»: «Աղունի՞կ,– ասաց նա և փչեց լուցկին,– էս ի՞նչ ես անում էստեղ»: «Էդ ի՞նչ ես քարշ տալիս,– Աղունը վրա քշեց ու ձեռքը գցեց պարկին,– հիմա քեզ կտամ միլիցիայի ձեռը, խուլիգանի մեկը»: Մթի մեջ ուրիշ ձեռքեր էլ էին քաշում պարկը ու նրանք շատ էին, ու էն ժամանակ գնացքում դանակով մարդ էին սպանում: «Իշխանին կասեմ, Վալոդ, փողոցային լրբի մեկը, մեղք է», խնդրեց Աղունը: Վալոդը ծիծաղեց. «Արա քույրս է… Աղունիկ… չես իջնո՞ւմ Մանաց… Իշխանը քեզ համար օճառ է առել», ու մինչև գնացքի կանգնելը ցած թռան թե անցան մյուս վագոն: Էն կինն էնքա՜ն էր շնորհակալ, էնքա՜ն էր շնորհակալ…

– Էս ինչքա՞ն է, երկու հնգանոց, մի հատ երեքանոց…

– Տասը, տասնչորս:

– Տոմսի փողն առանձնացրու: Էս երկո՞ւսը: Երեք, մեկ – չո՞րս:

– Կոպեկներ է ետ տալու, բայց ախր բեռը շատ է, բեռան համար վայ թե առանձին վճարելու հարց առաջանա:

– Հսկողությունը խիստ է՞:

– Եսի՞մ, Աղուն,– բարկացավ Սիմոնը,– էստեղից կայարան՝ ես շա՞տ գիտեմ խիստ է թե խիստ չի:

– Դե լավ, մի դժվարացրու,– շշուկով ասաց նա:– Ուրեմն տոմսի փողը էս է: Ախպերդ գալու լավ ժամանակ գտավ: Գրպաններիդ մեջ կոպեկներ չկա՞ն:

– Որտեղի՞ց էին լինելու:

– Եսի՞մ, առևտրական մարդ ես: Ախպորդ առաջ գնա, երեխային

էլ ներս ուղարկիր: Սերո՛…

Սիմոնը դարձյալ սրտնեղեց.– Այտա, կամ ես գնայի, կամ թող ինքը գար իր անտերների ետևից, երեսուն տարեկան մարդ է:

– Փայտ չի կրծում, գրում է, Սիմոն, գրագետը դու ես՝ ես եմ քեզ բացատրում:

Սերոն իր կոպեկներին ինքնահոս գրիչ էր առել, գրիչը կորցրել էր:– Ոչինչ, էս տներին-դռներին լավ կնայես՝ քեզ համար ախպոր նվիրած մի ինքնահոս գրիչ կբերեմ:– Իսկ էդ անտեր բկի կոճակը խեղդում է. աղջկան հազար անգամ խնդրեց շորի վիզը լայն բռնել: Բրդե ժակետի էլ թևատակերն են փոթվում. թե՞ շապիկի թևքերն են վերև քաշվել: Այդ քաղաքացիք այդ ինչպե՞ս են այդպես մազը մազին և նեղ և ազատ հագնվում: Եթե նեղ լինի՝ ինչպե՞ս ազատ կլինի: Նշանակում է՝ շատ ճիշտ են հագնվում: Չէ, նեղվածքը բկուռուցքի պատճառով է: Երբ որ Երևան հարսնով տուն կունենա, մի ձմեռ մի քսան օրով կնստի հիվանդանոցում, հարսը քիչումիչ ճաշեր կբերի, ինքն այնտեղ շալ կգործի և կզրուցի: (Արա՛ղը: Արաղը դրած է կես հավի մոտ: Հոնի է – գնացքի քաղաքաբնակ ուղեկցորդները շա՞տ են հասկանում թե տանձինը որն է, հոնինը՝ որը. հոնի է, և բեռների շատության հարցը լուծվեց): Ամենադժվարը կոշիկի հարցն է. ոտքը ոտք է դարձնում կոշիկը, բայց առանց ասֆալտի կոշիկը մի բան չի, ու այդպես էլ իր ոտքերը մնացին գյուղական: Հիվանդանոցում կհագնի տնային փափուկ մաշիկներ: Ասել էին՝ էս Ծմակուտ գյուղում ներկայումս ամենասիրունն ո՞վ կլինի, որոշել էին, որ բոլոր աղջիկների ու հարսների մեջ ամենասիրունը Սիմոնի Աղունն է, մյուսը՝ Լևոնի աղջիկ Ելենան. ասել էին՝ բայց եթե հաշվենք, որ Աղունը երկու երեխայի մայր է, ապրել է գոմում, նրա սկեսուրը Արուսն է եղել, իսկ Լևոնի աղջիկ Ելենը արևի երես տեսած չկա,– որոշել էին, որ ամենասիրունը Աղունն է, իսկ թե Լևոնի Ելենը սիրուն է թե սիրուն չի՝ այդ կերևա երկու փոր ծնունդից և վատ ամուսնու ձեռք ընկնելուց հետո:

Նա քթի մուրը սրբեց և հիշեց Վանքեր գյուղը, վանքի աղբյուրը, երեկոն այգեմիջյան ճանապարհին և իրեն՝ դույլերով: Արզումանյանի եղբայրը հեծանիվ էր քշում. Իշխանի դռանը կանգնել էին շարմաղ Ներսեսը և սև Սիմոնը: Պատերազմի ժամանակ Արզումանյանի եղբայրը շրջկոմի քարտուղար էր, մեքենայով Ծմակուտ էր եկել, գոդի Արտաշի հետ նստել էր գրասենյակում, և կանանց մեկ-մեկ ներս էին կանչում ու լեզվանիներին անպատվելով խելոքներին

հորդորելով համոզում լավ աշխատել: Շողերի հետ Արտաշն ասել էր. «Աղունը թող ներս չգա»: Աղունը աղջկան տվեց Շողերին ու ներս գնաց՝ գոդի Արտաշը ասաց.– Սա կծան է, մի քիչ զգույշ, ընկեր Արզումանյան:– Արզումանյանի փոքր եղբայրը նայեց ու տեղից վեր թռավ:– Վայ, Աղավնի ջան, էդ դու ե՞ս,– ու Արտաշը շատ ամաչեց:

– Ես պատրաստ եմ:

– Քթիդ մուրը Երևան կսրբես:– Սիմոնն Ադամի հետ բեռները հակ էր անում:

Նա ներս գնաց, քթի մուրը սրբեց և դուրս բերեց պատասխանը.

– Չեզ նման սև լինեի՝ քթիս մուրը չէր երևա:

Բեռը վերցնելիս Սիմոնի գլխարկն ընկավ ու բացվեց ջղային մեծ գլուխը. կարմրել ու սևացել էր Սիմոնի ճակատը, և բեռան տակ նա ճղատվում էր. Ադամը իր հակը տանում էր հանգիստ ու դանդաղ, Սիմոնը խփվեց բազրիքին, ծնկեց ու տնքաց: Հակերը հավասար չէին արել. Սիմոնը կոտրվում էր իր հակի տակ – Ադամի գրկին երեխայի բեռ էր: Սրանց բռնած բոլոր գործերն այդպես են. ծիաբեռը ճանապարհին մինչև մի յոթ անգամ չքանդվի՝ կլինի՞: Ղազախից ցորեն բերելիս մի կողմը քանի հակել էր՝ մյուս կողմն Ադամը քար էր դրել: Բեռան կեսը քար էր:

«Քեզ զսպիր, քեզ զսպիր,– մրմնջաց Աղունը,– գուցե իրենք հասկանան, ի վերջո մարդահաշիվ են»:

Չիու քամակն անցան, Ադամը պտտվեց մյուս կողմ, իր հակը դրեց թամբին և բռնած սպասեց Սիմոնի դնելուն, որպեսզի շտկեն,– իսկ Սիմոնը չարչարվում ու չարչարվում էր և չէր բարձրացնում:

– Հը՛,– սպասեց Ադամը:

Սիմոնը զոռ արեց և մի կերպ առաջ բերեց իր հակը: Ու մեղավոր-մեղավոր ժպտաց.

– Էսքան էս ի՞նչ ես դրել, Աղունիկ:

– Ջարդելի՛ք, մինչև Գոմեր ճանապարհին ջարդելիք ու դենթափելիք:

Շարժահարելով ու կախվելով՝ բեռը կիպ նստեցրին թամբին, Սիմոնը կողքեկողք ընկնելով գնաց դեպի կոճղը ու մի տեսակ կարծես թե վրիպեց: Մի տեսակ՝ կոճղը կարծես չէր գտնում: Ուզում էր նստել՝ կոճղը կարծես տակից փախչում էր: Ադամը երկու կողմից ու ետևից բեռը տնտղեց ու ասաց.

– Լավ է նստել, ախպեր, որ պարան էլ չգցենք՝ չի հակի: Ճիշտ՝ էսքան էս ի՞նչ ես տանում, այ ախչի:

– Ձեր կարծիքով դա ճի՞շտ բեռ է,– հանգիստ հարցրեց Աղունը:

Ադամը եկավ, տնքաց ու տարավ օժիտակալը, դրեց հակերի արանքում.– Մեր կարծիքը… զրո,– պարանը վերևից շպրտեց ու տակից դուրս քաշեց,– Վանքերն ի՞նչ կարծիքի է,– և ձգեց պարանը:

– Վանքերն էն կարծիքին է, որ էդ բեռը Գոմեր չի հասնելու:

– Քար կդնես,– ասաց Ադամը:

– Հա, քանի հակի՝ քար կդնեմ:

Իսկ Սիմոնը մի տեսակ հանգած նայում էր կոճղի վրայից: Սերոն տարավ դրեց գլխարկը, նա շտկեց գլխարկը գլխին և շատ նմանվեց Ասորենց Մացակին, որովհետև շալվարի կոճակներն արձակված էին ու գլխարկի հովարը ականջի կողմն էր:

– Ախչի,– ասաց Սիմոնը,– մեկ էլ եմ ասում, դու էս բեռը տանող չես:

– Սերո, ձին քաշիր: Վսյո: Դուք էլ նայեցեք ձեր կապած բեռին ու զարմացեք:

Այդպես: Երեկոյան կուտեն մնացորդ հավն ու հացուպանիրը: Վաղը կուտեն այսօրվա ճաշի կեսը: Վաղը առավոտյան հավերը ձու ածած կլինեն, կուտեն երկու-երկու հատ: Մյուս օրվա ճաշը կեփի Ադամի հարս Նազիկը, իսկ մյուս օրը ինքը կլինի իր տանը՝ իր տան գործերին: Վսյո: Բաց դուռ չկա, շունը կապած է, ռադիոն անջատած է. երջոյին հոնի արաղից պիտի մի բաժակ խմեցնել՝ հաշվիչը դարձնի չպտտվող, Սերոն արդեն քարափին էր հասնում՝ բեռն ուղիղ էր ու չէր ճոճվում: Սիմոնը ցանկապատն անցել էր, գնում էր ձորի պռնկով ու, մի տեսակ, կարծես անընդհատ սայթաքում էր դեպի ձորը: Ադամը կանգնել էր իր հավիտենական սայլի կողքին:

– Ինձ համար ի՞նչ էիր բերելու:

– Տաք-տաք գլխարկ:

– Ապրես,– ծիծաղեց Ադամը:

– Գնացի՞ր, անփորձանք գնաս, անփորձանք գաս, քեզ հաջողություն,– ձորի մյուս կողմից կանչեց սկեսուրը:

– Քեզ էլ ողջություն: «Աչքերդ չռած նայիր՝ տես ով է գնում, ով է գալիս»:

Փիլոյի տունն անցան, Մուշեղի տունն էլ անցան՝ Սոնայի ավերակն էր: Լիրբ Սոնան խելագարվեց ու մեռավ Կիրովականի հիվանդանոցում, տղաները Գրոզնի են: Տղաները լավ են ապրում, բայց Սոնան չտեսավ նրանց Գրոզնին: «Քեզ իմ անեծքը տարավ, որովհետև ես արդար էի, դու՝ շան պես մեղավոր»:

Արահետի հետ եկող ցանկապատի գլխին, գետնախնձորների և մի երկու բալենու ետևում Աթոյենց Ստեփանի տունն ու քարհանքն էր. նրա տղա Արեստին քարհանքի մոտ մի բնում ապրեց, ապրեց, ապրեց ու դեռ ապրում է: Քարհանքն էլ իրենցն է, քարհանքի տեր են:

Վարիչ Ռուբենի տունը երկհարկանի է, բազրիքները ներկված են կապույտ, բայց վարիչ Ռուբենը ահով սպասում է Արմենի ֆելիետոնին, քանզի բարձրագույն կրթության վկայական չունի և թենիս-մենիս, նստարան-մստարան է նորոգել տալիս Սիմոնին ու փող է դուրս գրում:

Քոչարի Հրանտը Կիրովական ավտո է առել. ճանաչում է եղբայր Վալոդին, եղբայր Վալոդը՝ նրան, իրար հավանում են, գյուղ գալիս Աղունի և Սիմոնի առողջությունը հատուկ կերպով է հարցնում: Արմենի և Վալոդի շնորհիվ:

Համբո հորեղբայրը մի ժամանակ լավ թափ է վերցրած եղել տներ սարքելու իմաստով, բայց նրա թափը զավթել է Մանիշակ հորաքույրը: Նկուղային մի ընդարձակ հարկ էր լինելու, դրա վրա՝ երեք սենյակ, բայց տանիքը ձևերով էր լինելու, ապակիներով՝ ամառվա համար: Մի սենյակը մի կերպ սվաղել, մտել են մեջը է՛է քսանութ թվականից, իսկ տունը կա էդպես կիսատ ու տանտիրոջ պես մեծախոս-մեծախոս:

– Գնում ես երեխային տեսնե՞ս,– եռանկյունի աչքերը ջրոտ՝ հարցրեց Համբո հորեղբայրը:

– Այո, հորեղբայր: Դո՞ւ երբ ես քոչում: Տղերանցդ ուղարկել ես ու էդպես մենա՞կ…

– Ա էդ քաղաքում ի՞նչ կա, է… Աշխատողն աշխատում է, հասկացանք, բա ծերե՞րն ինչ են անում: Ոչխար չունեն, խոզ չունեն, ձի չունեն – ինչո՞վ են պարապում:

– Պահակություն:

– Էս է պալատներիս պահակ եմ, էլի:

– Չգիտեմ, հորեղբայր, չգիտեմ,– ասաց Աղունը,– մերն էլ երևի էս է, որ բուի պես էստեղ վայենք:

– Գնաս բարով, երեխային ասա թող մեր ազգի պատիվը բարձր պահի:

«Ազգ էլ լինեք»:

Սումբաթի դռնից ծիկրակեց նրա անող-դնող Գոհարը: Արուսն արդեն լուրը տվել է: Գոհարը տարին մի գորգ է կտրում: Մի ձմեռ

Աղունն ուզեց նրան և՛ օգնել, և՛ սովորել, նա ասաց. «Ես անհասկացողների հետ գլուխ չունեմ»: Աղունն արհամարհեց նրանց տունը և բարձր-բարձր զրուցեց սևքարեցի պառավի հետ.

– Պատի մի մեծ գորգ, մի հատ էլ՝ թախտի, կարպետը չհաշվենք, երկու ձեռք անկողին – ավելին չէի կարող: Ով որ դրանից շատ է տվել, թող պարծենա: Սառնարան: Ճաշասենյակ:

Գերեզմանոցի ձորում գալիս էր փոքր Սիմոնը: Աշխատող մարդ է, բայց իր առողջության արժեքն էլ հասկանում է: Հնձի ու ցանքսի ժամանակ փայտը ձեռքն է առնում՝ ոտքս ցավում է, գյուղամիջում պտտվում, երբեմն մանրիկ պաշտոնների տեր է դառնում, իսկ որպես փայտագործ՝ Սիմոնի կեսը չարժե, բայց փողոտ գործերը միշտ նրան են ընկնում: Գայլի պես մի շաբաթում վերջացնում է ու էլի ձեռնափայտը վերցնում – ոտքս ցավում է: Սիմոնը սրտնեղում է, բայց Աղունը գիտի, որ այդ այդպես էլ պիտի լիներ, քանզի մենք իրար բարևում ենք, ինչպեսություն ենք հարցնում, բայց բարին պահում ենք մեզ և մերը մե՛ր ինչպեսությունն է, և չի կարելի արհեստը տալ ուրիշի, էն էլ էս մի բուռ գյուղում: Մի առանձին ծեծ էլ դրա համար կերավ:

– Երևան ե՞ս գնում:

– Հա, տեսնենք:

– Հաջողում:

– Դուք լավ լինեք:

– Մենք կամաց-կամաց ապրում ենք:

Իսկ վիզը միշտ լիքն ու կարմիր է, նրանց տանը կռիվներ չեն լինում, թեպետ հենց նրա տանն էր կռիվ լինելու, քանի որ գոդի Արտաշի հետ նրա կինն էր կապվել Հայրենական մեծ պատերազմի ժամանակ և ոչ թե մենք:

Հորաքույր Մանիշակի տունը հիմա հարազատ ու խեղճ է, որովհետև Ներսեսը բանակից չեկավ, իսկ նրա ժառանգները թեկուզ աշխատասեր են, բայց չունեն Ներսեսի ճարպկությունն ու ռխավոր պաշտոնասիրությունը: Արմենակը նրանց մի թեթև օգներ, մի պահեստապետից-բանից դառնային:

Մելքումենց Իվանը աղջիկներ է բուծում ու ծիծաղկոտ-ծիծաղկոտ, սիրուն-սիրուն տալիս Ծմակուտ, Հովիտ, Կիրովական: Սեդան մի քիչ ավելի կրթված լիներ՝ հենց հիմա թևից կբռներ ու կտաներ Երևան հարս. նա և բարի է, և գյուղացի, և ունի քաղաքի գեղեցկություն: Նա չէր թողնի, որ Արմենը մոռանար Ծմակուտի իր մորը:

Նաև՝ եսի՞մ ինչ սիմոնացվի բաժին է դառնալու հովիտներում այս լույսի պես աղջիկը:

– Աղջիկ ջա՞ն:

Նա քամուն ցորեն էր տալիս, մղեղի ու հատիկի ետևից նայեց ոսկի մազերով ու ժպտաց, ու մտավ Աղունի սիրտը: Ու լխտիկ թևերը վար բերելով, վիզը թեքած նայեց կապույտ մաքուր հայացքով:

– Եսի՞մ,– ասաց Աղունը:

Նա մղեղ ու ցորեն հինեց արևի մեջ և շողք ու խշշոց մաղեց Աղունի սրտի վրա:

– Քեզ ցանկանում եմ մի լա՜վ ամուսին,– ասաց Աղունը: Հին օրերի արևի մեջ Շողերը ցորեն էր քամհարում, արծիվը պտտվում էր լազուրի ու ամպերի մեջ, հետո Շողերը վար դրեց աշտարարը, եկավ շրխկոցով խփեց-փռեց պառավին:

– Քեզ արժանին Ծմակուտ ու Հովիտ չի, աչքդ Երևանի վրա պահիր,– ասաց Աղունը:

Նա թույլ-թույլ ծիծաղեց, նրա ուսերը թրթռացին, և Աղունը խեղդվելով մտածեց, որ գեղեցիկներն անբախտ են լինում, իսկ ճշմարիտ մեծ սերը լույսի պես իջնում է ծիու փքիրի վրա: Արզումանյանի եղբայրը կին բերեց ռաստովներից եսիմ ում, և Արմենակին չանթել է երևանցի մի սվաղած սևը:

– Կամ թե չէ՝ գնա համալսարան, Արմենիս կասեմ կօգնի՝ կընդունվես:

Կապույտ աչքերի մարմրոցով նա տաքացնում ու տաքացնում էր Աղունի սիրտը:– Ա՜յ ախչի,– կանչեցին,– այ ախչի, ուշանում ես,– կանչեց Սիմոնը:

– Քեզ մի լավ ամուսին եմ ցանկանում, աղջիկ ջան:– Եվ մի անգամ էլ ետ նայելով, Աղունը նրան տեսավ բոբիկ ոտքերը ցորենի մեջ, ցորենը մինչև ծնկները, ծփացող չիքը,– և Աղունը մտածեց, որ համալսարաններում վկայական են տալիս և ոչ թե խելք, որովհետև խելքը սովորովի չէ, այլ բնականից, և դրա համար էլ լինում են վկայական ունեցող ավանակներ և չունեցող իմաստուններ:

Սիմոնը կանգնել էր դպրոցի մոտ, պտտածողի սյունը բռնած, ձին կապած էր զուգափայտերից, տաբատը մաշելով Սերոն ուզում էր բարձրանալ պտտածողին, փաթաթվել ու կպել էր սյանը, Սիմոնի գլխարկը թարս էր դրած, մեծագլուխ ու սև՝ Սիմոնը նայում էր մոտեցող Աղունին:– Ամուսինս հիմա թռչելու է, բռնելու է, մարզանք է անելու պտտածողի վրա,– չարախնդաց Աղունը:– Հավատալի է,

սիրուհի էր պահում, գլխարկն էլ՝ ճիշտ էր դնում:

– Այտա, արագ արի, արագ,– սրտնեղելով բարկացավ Սիմոնը:

– Մի հատ թռիր մարզանք արա՝ տեսնեմ,– կանչեց Աղունը:

– Քո լեզվիդ տերը մեռնի, քո լեզվիդ,– քրթմնջաց Սիմոնը, հեռացավ պտտաձողից, չիմացավ ինչ անի, թշնամանքով նայեց պտտաձողին և սրտնեղած թքեց:– Գյուղամեջ չկա, ամոթ չկա:

Աղունը ճանապարհին չէր:

– Ո՞ւր գնաց, այ տղա, մերդ:

– Չտեսա:

Սիմոնը հանկարծ հասկացավ, որ Աղունը մտել է Սաքոյի տուն՝ պարտքը առնելու: Դարձյալ ամոթ էր, որովհետև Սիմոնը երեկ էր հասկացրել, որ իրեն փողը հիմա պետք է, իսկ նրանք չունեին: Նրանք հիմա ի՞նչ կմտածեն ընտանիքում Սիմոնի դերի մասին:

– Ճիշտ եմ ասում, քո լեզվիդ տերը մեռնի, քո լեզվիդ, ճիշտ եմ ասում…– քրթմնջալով դեսուդեն ընկավ Սիմոնը:

Քիչ հետո Սաքոյի Լուսիկն ու Աղունը երևացին նրանց տան անկյունից, գնացին դեպի խանութ: Սիմոնը կարծում էր Աղունը հիմա ամաչելով ետ կնայի՝ նա չէր նայում, զրուցելով գնում էր Լուսիկի հետ:– Ա՛ղունիկ,– կանչեց Սիմոնը: Նա ետ չնայեց, ձեռքով լսած լինելու նշան արեց ու զրուցելով շարունակեց ճանապարհը դեպի խանութ:– Էս ձին մեղք է, ա՛յ ախչի…

Խանութից դուրս եկավ շուտ, եկավ արագ-արագ և ծեծի սպասող երեխայի պես ժպտում էր:

– Ախչի, կարողացա՞ր,– զարմացավ Սիմոնը:

– Ինչո՞ւ էիր ասում վաթսուն է:

– Ախչի, հինգը Մուշեղին պարտք եմ անցյալ տարվա հունվարից:

– Ինչո՞ւ էիր պարտք վերցնում, առևտրական ամուսին ջան:

– Ախչի, Արմենակի մասին ռադիոն հոդված էր հաղորդում, տղերքը բռնեցին թե՝ մի կոնյակ ես առնում:

– Էդ շալվարիդ բերանը փակիր, էդ գլխարկդ ուղիղ դիր: Սերո ջա՞ն: Երկու օրով քեզ նշանակում եմ մեր տան միևիստր, գործերդ էնպես դասավորիր, որ գամ տեսնեմ էն ճաշը դեռ էնտեղ է, իսկ մուրաբայի հախից եկել ես: Տո՛ւն: Ինքնահոս գրիչդ բերում եմ, հունվարին էլ մի շաբաթով երևանցի ես:

– Մինչև Գոմեր հետներդ գամ, հայրիկի հետ ետ կդառնամ:

– Գա՞, Աղունիկ:

– Ի՞նչը:

Ինքը իր ասածին չհավատալով՝ երեխան սրանցավարի ժպտում էր:

– Մինչև Գոմեր գամ, հայրիկի հետ ետ կդառնամ:

– Թռիր տուն, շուտ: Հավերը, շունը, ոչխարը հանդից գալու, խոզը հանդից գալու՝ «մինչև Գոմեր հետներդ գամ»:

– Ես ձեր խոզարածը չեմ: Կարծես ես իրենց խոզարածն եմ: Իրենք գնում են Երևան, ես, «հավերը, շունը»,– Սերոն լաց լինելով ետ էր գնում, Սիմոնը խղճահարվելով նայում էր նրա ետևից, իսկ Աղունն արդեն քաշում էր ձին:

– Արի, լավ, ուշացնում ես, շուտ,– ջղայնացավ Աղունը:– Քո ցեղական լացն է, նորություն չի:

Սիմոնը վերցրեց ձեռնաբեռը և իջավ կարճ արահետով: Խաչմերուկում սպասեց, ձիու սանձերը կապեց թամբին, ձին առաջ գցեցին, իրենք գնացին ետևից, և Սիմոնն ասաց.

– Երեխայի հետ կոպիտ ես վարվում:

– Քո մեր Արուսը ձեզ քորել է՝ ահա թե ով եք դուք, ես Արմենակին ծեծել եմ՝ ահա թե ով է նա: Արագ արի:

– Ախչի, էսքան բեռը ո՞նց ես տեղ հասցնելու:– Սիմոնը ուսը գցեց ձեռնաբեռը և եկավ դարձյալ մի տեսակ ոտքերը տակից փախցնելով:

– Այ մարդ, էդ ո՞նց ես քայլում:

– Քեզ նեղություն է տալի՞ս:

– Էդ բկիդ կոճակն արձակիր: Տեսա՞ր փոքր Սիմոնի առողջությունը:

Կամրջի մյուս կողմը, ճանապարհի գլխին, մի աղջիկ էր նստած. մի տղամարդ փորի էր պառկել նրա կողքին: Տղան գլուխը թեքեց և ուսի վրայով նայեց սրանց: Սիմոնը դոփդոփելով կամուրջն անցավ, ետևից անաղմուկ գնաց Աղունը – Վրացոնց նորահարսն ու մի տղամարդ էին. տղամարդը շուռ եկավ ու վրա նստեց՝ Վրացոնց Արշակի Սուրենն էր:

– Կռվում ե՞ք, թե արդեն հաշտվում, այ տղա,– կանչեց Սիմոնը:

– Չի լինում, Սիմոն քեռի, չեմ կարողանում կռվել:

Սիմոնը ծիծաղեց ու թաքուն մտքից կարմրեց:– Համով է՞,– ծիծաղելով հարցրեց Սիմոնը:

– Համովը՝ դեռ համով է, համը տեսնենք երբ է դուրս գալու:

– Մի շտապիր, ինչո՞ւ ես շտապում,– բեռը մեջքին շտկելով ասաց Սիմոնը:

– Էդ ո՞ւր եք գնում էդպես տնով-տեղով:

– Արմենակն էդ ցավից ազատ է, գնում ենք գլուխը յուղենք գանք:

Սուրենն ու Սիմոնը ծիծաղեցին, Աղունը կանչեց դեպի կարծես թե խռով հարսը.

– Սուտ է ասում, աղջիկ ջան, դրանց տղերքը լավ տղերք են: Ջոկել ես:– Եվ աննկատ հրելով Սիմոնին, Աղունը ցածրաձայն ասաց.– Իսկ որպես հայր՝ դու քո հայրական բարձրության վրա չես:

Նրանք զրուցելով գնացին:

– Ի՞նչ բարձրության:

– Հեղինակազուրկ ես:

– Ինչո՞ւ եմ հեղինակազուրկ:

– Շուտ-շուտ արի՝ ասեմ: Քո անունը լսելիս Արմենը պիտի դողար, եթե միհիստր էլ լիներ՝ քո խոսքը նրա համար օրենք էր լինելու, բայց հետդ մի րոպե կկանգնի՞, կխոսի՞:

– Երեսուն տարեկան մարդ է, էդքանն ինքն էր հասկանալու:

– Չհասկացողին հասկացնում են:

– Հիմա էլ Արմե՞նը դարձավ չհասկացող:

– Որոշ հարցերում: Որոշ հարցերում ծնողի խոսքը օրենք է:

– Աղջկա հաշվով ես ասո՞ւմ,– կանգ առավ Սիմոնը:

– Թեկուզ՝ աղջկա:

Սիմոնը նեղսրտեց.

– Այտա… այտա, նրա տեսածն իմ տեսածից շատ է, ինքն աչք չունի՞:

– Աչք ունի, բայց Իվանի Սեդային չի տեսել:

– Դարբնի՞… Ա դե հիմար-հիմար քիչ խոսիր, է:

Դարբնի աղջիկը արևի մեջ ցորեն ու ոսկի էր շաղում, կանգնել էր ցորենի մեջ ոտքերը բոբիկ, թևերը բարձրացրել էր ու ցորեն էր հինում իր բարձր հասակով մեկ: Կույտը հասել էր ծնկներին, մղել էր նստել կույտից կարպետի վրայով մինչև ցանկապատ, հին ջինջ արևի մեջ ուրախություն ու լաց էր սփռում Ծովինարի հարսանիքը:– Դպրոցում ո՞նց էր սովորում,– հարցրեց Սիմոնը:

– Էս տարի նոր վերջացնելու է, տասներորդում է:

– Վայ թե ճիշտ ես ասում, Աղունիկ:

– Ես միշտ էլ ճիշտ եմ ասում. էն է որ՝ ասողին լսող է պետք: Կրթվածությունը կրթվածություն, քաղաքավարությունը քաղաքավարություն, բայց գյուղում գյուղացի էր լինելու, քաղաքում՝ քաղաքացի: Գյուղի աղջիկը հեշտ է քաղաքացի դառնում, բայց քաղաքինը

գյուղացի… Մի ոտքը Ծմակուտ է լինելու, քանզի ամեն ինչին չի կարելի փող տալ: Քաղաքը լիքը գրող ու մինիստր է, իսկ Ծմակուտ մինիստր է, գրող է, խմբագիր է թե կոմպոզիտոր՝ մի Արմենակ է: Մեծ անունը մեծ ծախսեր է պահանջում, իսկ եթե մեծ ծախսերը բացակայեն՝ անունն էլ կփոքրանա: Ինքը քեզ սիրում է, «հերս, հերս», բայց դու ինքնուրույն խելք չունես, թե չէ վաղուց համոզած կլինեիր: Դրա համար էլ ասո՛ւմ եմ, որպես հայր՝ դու էս տանը ձայնազուրկ ես: Այ մարդ, էդ ոնց ես գալի՞ս…

– Ո՞նց եմ գալիս:

– Տակուգլուխ ես անում:

Սիմոնը հավասարվեց: Շտկեց բեռը մեջքին և սրտնեղեց.

– Հեր օրհնած, գնալու ես, գաս ու հիվանդանաս:

– Հովտից իրո՞ք ոտքով ես եկել:

– Չէ, հատուկ սավառնակով:

– Քո խելքը՞…

– Կասես՝ որ դպրոցից հեռացրել էին, որ մի շաբաթ դասի չէիր գնում, որ գրքերդ մատուռում պահում էիր ու ոչխարածների հետ քարշ գալիս, որ էն է ոչխարած էիր դառնում – հերդ վեր կացավ ու հիվանդ-հիվանդ գնաց Հովիտ ու յոթ քրտինք փոխեց Հովտի ճանապարհին ու Խաչատրյանի դռանը, կասես՝ եթե դու լավ զավակ ես ու մենք էլ քո ծնողներն ենք՝ դեռ էդ վիճակում ենք, մտածիր:

– Հա-ա՞… հա-ա՞… որ էդքանը հասկանում էիր՝ մի բերան էլ դու ասեիր անասնաբուժականի մասին: Որպեսզի քեզ սիրեն, իրենց կամքով ես գնում: Կուրանամ ես, գրում է, գրում է, գրում է՝ կոպեկի գին չունի, գիշերվա գրածն առավոտը պատռում է: Ուզում է մեծ գրող լինի, ու չի հասկանում, որ ինչը հնարավոր չի՝ հնարավոր չի: Էդքան գրող կա, նրան ո՞վ ճանապարհ կտա:

– Ռադիոն որ հաղորդում էր, ռադիոյի ասածով կարծես թե մեծ գրող էր, Աղունիկ:

– Երեխա-երեխա մի խոսիր, հենց ապրես: Տուն չունի, տեղ չունի, ոչ հերն է մի բան, ոչ մերն է գրագետ, ինքն էլ բարակ երեխա, «մեծ գրող էր, Աղունիկ»: Այ մարդ, քայլվածքդ աչքիս մի տեսակ շատ է փոխվել, էդ ո՞նց ես քայլում:

– Ծերացել եմ, Աղունիկ, ծերացե՞լ:

– Ջահելությունիցդ շատ խնդացինք, հիմա էլ «ծերացել եմ»: Դու որ մի ռխավոր մարդ լինեիր՝ գիտե՞ս ինչ կանեիր: Ասա՝ ի՞նչ: Քո սիրած մայր Արուսը, երբ երեքդ էլ բանակում էիք, հասնում էր էստեղ,

ոտքերը հանում էր ու բոբիկ-բոբիկ գալիս է՜ր, գալիս էր, գալիս էր… Հա, ասա՝ ի՞նչ: Լսիր ու վրաս գոռա: Մի երկու ոչխար կմորթեիր, միսը աղուսոխ կդնեիր, մի քառասուն գարեջուր ու մի քանի հատ կոնյակ կբերեիր Հովտի խանութից, ասա՝ այո՛: Հովտի փոստից կզանգահարեիր Երևան՝ «էդ խմբագիր-մմբագիր, տպող-մպողներիդ հավաքիր, բեր էստեղ. ասա հայրս հրավիրում է»: «Հայրս ձեզ կանչում է գյուղավարի պատվելու»: Դրանից հետո տղայիդ արածը արած կլիներ և ոչ թե «մամա, հացի փող տուր»: Մտածիր: Հը՜…– ետ նայելով՝ նա տեսավ Սիմոնի խեղճ ժպիտը և հասկացավ, որ դա այդպես էլ կլինի:– Այ մարդ, բեր էդ բեռը կամ ես տանեմ, կամ ձիուն կապիր… Ռռռռռ…– Որ դա այդպես էլ կլինի. ոչխարը կմորթեն, կհամեմեն ու կսոխեն, Սիմոնը կգնա Հովիտ, վերադարձին ավտո չի լինի, շշերի մոտ Սիմոնը կկանգնի մի օր, երկու օր, Սիմոնը կբերի շալակով (որովհետև ձին տված կլինի ուրիշի), կողերը ջարդելով ու մինչև պոչուկը քրտնած՝ Սիմոնը կբերի գարեջուրը, իսկ նրանք կգան, կլակեն, կթափեն, կջար-դեն, կերգեն, կգնան ու չեն տպի, քանի որ Արմենի կողը հաստ է և մարդամոտ չէ:– Ո՛չ, ոչ մի ոչխար. Արտաշես Արզումանյանը Վանքեր գյուղից Մոսկվա քաղաք հասավ իր խելքով: Ոչ մի տարբերություն աղջկա և տղայի միջև. տասնութ տարեկան դարձավ՝ աղջկան մարդի ես տալիս ու դրանից հետո նա մարդինն է. տղան տասնութ դարձավ՝ պիտի տաս կյանքին, թող գնա իր տեղը գտնի: Վսյո՜: Նրա փառքն իմը չի, որպեսզի նրա հաջողությունը իմը լինի: Վսյո՛:

Մատուռի մոտ նա ձայնը ցածրացրեց. խոսեց շշունջով, և չէր հասկացվում՝ աղոթո՞ւմ է թե խմբագիր-մմբագիրների հետ վիճում: Որդին ու դուստրը ծիծաղում էին նրա աղոթելու վրա, որովհետև նա կարող էր վիճել, ճվճվալ, ապացուցել իր արդարացիությունը և աստծո սխալականությունը և ոչ թե վախենալ աստծուց և աղերսել:

– Աղոթում ե՞ս,– ժպտաց Սիմոնը:

Նա սայթաքելով բարձրացավ մատուռի դուռը, արագ համբուրեց մի քանի խաչքար, մի թեթև խաչակնքեց ու ետ դարձավ:

– Օգնելու զորություն ունեցողը քիչ է, բայց ով ասես կարող է խանգարել: Եսի՞մ: Վանքերի սուրբ Սարգսից հետո չարժե սրան բանի տեղ դնել, բայց դե եսի՞մ: Քո մերն էն ցույց տվածս տեղից բոբիկ գալիս էր, լուսնահարի նման գալիս էր, բոխենու մոտից ծնկասող գալիս էր ու գետինը լիզելո՜վ պտույտ էր գալիս շուրջը: Ադամիս համար՝ երեք պտույտ, Սիմոնիս համար՝ երեք պտույտ, Հակոբիս հա-

մար՝ երեք: Իսկ տավարը գոմում՝ ծարավ, սոված, տակը մաքրելու: Առատ-առատ աղոթում էր, իսկ խամ երինջը ծնել էր ու հորթը տրորել:

– Դու չէի՞ր աղոթում,– նեղացավ Սիմոնը:

– Հա, ձեր մայր Արուսն էլ էդ կարծիքին էր, որ երեխաներին ծաղկի մեջ տապակվելիս պիտի թողնեմ ու գամ Ծմակուտի ավերակին աղոթեմ: Արմենի աչքերը քսան օր կպած էին, մի տոպրակ ցորեն ունեի, ձեր ջրաղացը սառել էր, բերի Գոմեր՝ Հովտի ջրաղացը սառած էր, տարա՜, Սիմոն ջան, Դարպասի ջրաղաց, ու Փառանձեմը մեր տան դուռը բաց էր թողել, իբր թե կարտոլ պիտի խաշեր՝ ջուրը ցամաքեցրել-վառել էր, հոտը գցել էր տուն, վառարանը ծուխ էր տվել, երեխեքը Փառանձեմին ասել էին մեր տնից գնա, նա էլ խռովել-գնացել էր, վառած կարտոլի հոտի վրա մերունը ներս էր մտել, տունը ծխով լցվել էր, երեխան՝ ջղային, կատաղած՝ պոկոտելով աչքերը բաց էր արել, վառարանը ջրով հանգցրել էր, խոզը տնից դուրս էր արել, իսկ խոզը՝ սովա՜ծ, դռնից չի հեռանում: Երեխան պառկում է, խոզը ներս է մտնում. էդ ամբողջ օրը էդ աչքերը կպած երեխան խոզը դուրս է անում՝ էդ սոված խոզը ներս է գալիս: Գնացի տեսա, Սիմոն ջան, իմ էդ կատաղած Արմենը կացինն առել է, յոթ տարեկան, ու շեմքին նստել, սպասում է խոզը մոտենա՝ որ կացնով խփի: Կույր-կույր, կույր-կույր, կույր-կույր…

Աղունը մի երկու կաթիլ լաց եղավ, հետո հանեց փեշը, բաճկոնը և՝ ջղային ու մի տեսակ զզվելով՝ հրահանգեց.

– Տղամարդ ես, տո՛, շուտ-շուտ արի… Աղոթք էի անելու Ծմակուտի հավաբնին: Ձեր մայր Արուսը աղոթեց, աղաչեց ու ձեզ երեք-երեք ետ բերեց ողջ-առողջ, հիմա կաք, տղամարդ եք, գյուղում ասում են Աղունի ամուսինը, Մանեի ամուսինը, «մարդդ կողքիդ կանգնած է»:

– Հենց ապրես,– զզվելով խնդրեց Սիմոնը,– հենց ապրես, ձենդ կտրիր:

– Շնորհակալություն: «Ամուսինդ»: Ու ոչ ոք չի հասկանում, որ մուրճ է գլխիս և ոչ թե ամուսին:

– Շնորհակալ եմ:– Սիմոնը ետ մնաց ու սրտնեղած քքեց: Աղունն ուշադրություն չդարձնելով գնում էր արագ-արագ և խոսում էր:

– Շալվարը վրան բռնող է պետք՝ «ամուսինդ»: «Մի լծի եզները իրար պաշտպանում ու սիրում են, Աղունիկ»: Վանքերի սուրբ Սարգսին տասնհինգ տարի է մատաղ եմ խոստացել, մի օր տեղիցդ

շարժվեցի՞ր թե գնանք, Աղունիկ: Առողջարան եմ ուղարկում: Առողջարան եմ ուղարկում, որպեսզի առողջանա, որպեսզի ուրագը գլխիս առողջ-առողջ վրա բերի: Ինչի՛ համար: Շաբաթ չէր քաշել՝ լիրբ Սոնայի հետ նստել էր կերուխումի – առողջարան եմ ուղարկում: Ամեն մարդ ի՛ր առողջությանն է հետևելու, իր, իր, իր…

– Տո գնա, չեմ գալիս,– Սիմոնը քքեց ու շուռ եկավ դեպի գյուղ:

– Մի՛ արի: Գնա տես ծուն ով է թերխաշ արել, գնա կոտլետ կեր:

– Աղունիկ, որ հասա՝ կտրորեմ:

– Հասիր:

– է… թո՞ւ:– Սիմոնը դոփդոփելով ետ գնաց և շատ էր նման Ասորենց Մացակին, որովհետև գլխարկի հովարը դարձյալ ականջի վրա էր,– իսկ Աղունի սրտին մի կաթիլ դառնաքաղցր լեղի կաթեց… Աղունն զգաց կաթոցի հպումը:

– Ի՛… դա՛ րպասեցի…– ուզեց անիծել Աղունը և բառեր չգտավ, և իրեն ասաց, որ չպետք է ջղայնանա, քանի որ դժվար ճանապարհի վրա է: Աղունը ժպտաց ու հետևեց ձիուն, որի բեռը ճիշտ ու պինդ էր կապած և կարծես թե դրանց ցեղի տղամարդիկ չէին կապել:

Բլրի ոլորանից Աղունը ետ նայեց՝ Սիմոնը նստել էր սալերին ու շատ էր նման Ասորենց Մացակին, որովհետև շորերը գորշ ու հին էին և գլխարկն էլ դրված էր մացակավարի: Նրա համար պիտի մի գլխարկ առնել, հատուկ տեսակի, որ հովար չունենա, ոնց էլ դնի՝ ճիշտ լինի, ու այն ժամանակ Աղունը մի քիչ պակաս կջղայնանա:

– Հիմի չե՞ս գալիս,– ծիծաղեց Աղունը:

Սիմոնը նայեց նրան, գլուխը շրջեց մյուս կողմի վրա ու քքեց: Բայց կարծես թե դեռ նայում էր Աղունին, որովհետև հովարը նայում էր Աղունի կողմը:

– Վեր կաց արի,– կանչեց Աղունը,– քեզ համար մի հատ ինքնահոս գրիչ եմ առնելու:

– Հենց ապրես, ռադ եղիր՝ աչքս քեզ չտեսնի:

– Բա ձեր կովերն ո՞վ կկթի:

Սիմոնը անցողակի նայեց ու չտեսավ նրան:

– Արի, քեզ թերխաշ ձու եմ տալու արաղի հետ, արի,– կանչեց Աղունը:– Խմես ու գժվես,– շշնջաց Աղունը:

– Դե ռա՛դ եղիր, քո դեսն ուղարկողի հերն անիծեմ,– բղավեց Սիմոնը, կարծես վեր էլ թռավ տեղից, բայց հետո դարձյալ նստած էր, և չէր երևում թե ինչ է անում, որովհետև շորերն ու քարը մի գույնի էին:

– «Դե ղադ ղեղի, քո ղե-ղե ղուղի ղե՛ղն անիծեմ», որովհետև

մարդավարի խոսքի անընդունակ եք:– Աղունը քշեց ձին և մտածեց, որ ձեռքի փողից մի քսանհինգ-երեսուն ռուբլի պիտի թաքցնել Արմենից, Սիմոնի համար առնել նոր բաճկոն ու տաբատ: Ոչ այնքան թանկ, ոչ այնքան էժան – գյուղին հարմար մի բան: Ամբողջ գյուղը ման է գալիս բաճկոնավորված, իսկ Սիմոնի հագինը չորս-հինգ տարի եղավ: Ամոթն էլ լավ բան է: Իսկ եթե ինքը Աղունը առողջարանի մասին լուրջ ասաց և ոչ թե պատահական՝ ուրեմն պետք է հարյուրի՛ սահմաններում մի տաբատ ու բաճկոն առնել: Գող ու լիրբ Վալոդն ահա հագուստի պահարանում ութ ձեռք տաբատ-բաճկոն է կախել:– Սա ամառային է, սա ձմեռային, սա աշնանային, քու՛րացու, հավանում ե՞ս,– իսկ Սիմոնի մի զույգ կոշիկը հազար ինը հարյուր երեսունվեց թվականից դեսը յուղվեց ու չորացավ, յուղվեց ու չորացավ, յուղվեց ու չորացավ առանց ոտք տեսնելու:– Ի՞նչ եմ ուզում էդ խեղճից, ի՞նչ,– խեղդվելով գնաց Աղունը,– ի՞նչ կարող է անել, որ չի անում… Ի՞նչ եմ ուզում էդ խեղճից, ի՞նչ…

Բոխու թմբից Աղունը ետ նայեց՝ Մատուռի զառիթափում գայթող քայլերով գալիս էր Սիմոնը: Ճանապարհը կարծես թե դուրս էր պրծնում նրա ոտքի տակից և ամեն քայլափոխում պիտի ընկներ:– Մուրադենց տղերքին ձեռ առնեն ու քայլեն Մուրադենց տղերքի պես: Իմ բախտն է:

Ավետըքի ջրաղացատեղերից Աղունը ետ նայեց՝ Սիմոնը թափ առած իջնում էր Բոխու զառիթափը: Թափ առած իջնում է, թափով բարձրանում է՝ բայց թե ահա կես ժամ է ետ է ընկել ու չի հասնում նրանց ետևից: Աղունը ձին պահեց ու կանչեց.

– Լավ, լավ, քեզ մի՞ սպանիր, կամաց արի: Երևանը տեղից չի փախչի,– մեկուսի ասաց Աղունը.– էնպես էլ կարևոր-կարևոր գալիս է՝ տեսնողը կասի կողոպուտի է գնում: Շուտ-շու՞տ,– ծղրտաց Աղունը:

Սիմոնը դեռ մի քանի քայլ էլ եկավ թափով, ապա դանդաղեց, ապա կանգ առավ: Կանգ առավ ու անշարժացավ ծառի պես, որ կտրված է մինչև վերջին ջիլը, բայց ոտքի վրա մի պահ մնում է: Ուղեղը տաքացավ ու խառնվեց, և սրտից մինչև բերանը դառը դառնացավ: Սիմոնն ուզեց հայհոյել նրա ողջն ու սատկածը՝ չկարողացավ: «Հիմար, հիմարի գլուխ,– շշնջաց Սիմոնը,– ճիշտ եմ ասում»: Դրա համար էլ Աղուննն ասում է, որ նա ու նրա ցեղը չգիտեն մարդավարի խոսել՝ ղռղռում են կամ բառաչում:

– Գոմերում ձին կթողնե՞մ, եթե եկող եղավ՝ կտամ կբերի, եթե

եկող չեղավ՝ Գոմերում կթողնե՞մ, Գոմերում կթողնեմ,– հստակ ու բարձր կանչեց Աղունը,– դու հոգնել ես, մի քիչ նստիր հանգստացի՞ր, հետո կամաց-կամաց կգաս, կամաց-կամաց կգա՞ս,– աշնան պայծառ օրվա մեջ հստակ ու մարդավարի զրնգաց Աղունն իր Վանքերի ձայնով:– Բեռը ճիշտ եք կապել՝ շնորհակալ ե՞մ, շնորհակալ ե՞մ:– Եվ ձին քշեց ու գնաց:

Մի քանի րոպե հետո Սիմոնը կարողացավ հայհոյել նրա ողջն ու սատկածը, հիմարությունը, իր անտղամարդ փափկերեսությունը, Արմենակ որդուն և աշխարհում ամեն ինչ:

Աղունը երեխաների հետ սարում էր՝ խանութում շաքար էին տալիս: Սիմոնը փռնից մի հինգ հաց վերցրեց, գնաց շաքար առնելու, որպեսզի ֆերմայի սայլի հետ սար ուղարկի: Տղերքը խանութում պատմում էին, թե ինչ կատակ է արել Ասորենց Մացակը Կիրովական: Ասորենց Մացակը, Կիրովական, խանութի վաճառող աղջկան ասել է՝ էդ կրծքակալն ի՞նչ արժե, ասել է տասնհինգ ռուբլի, ասել է՝ դատա՞րկ: Շաքարը տալիս էին երեք կիլոգրամից, բայց Սիմոնը բուկը բռնեց, Արտոն նայեց տեսավ Սիմոնն է, ժողովրդին ասաց՝ մեր վարպետն է, բողոքավոր չե՞ք: Ժողովուրդն ասաց՝ տուր, արժե: Հինգ կիլո շաքարն ու հացը սայլի հետ սար ուղարկեց՝ երեկո էր, կինո էին ցույց տալիս: Ակումբավար թմբլիկ Օլյան տոմսերը կտրում էր, ով անտոմս էր՝ նշում էր, որ անտոմս է, որպեսզի կոլտնտեսության դրամարկղից համապատասխանաբար, ուրեմն, գանձել տվյալ անտոմս անձի աշխօրի փողից: Ներս գնալիս Սիմոնը չկարողացավ իրեն զսպել, Օլյային ասաց՝ ախչի, դեռ էնպե՞ս ես,– ու ժողովուրդը մի լավ ծիծաղեց: Դրանից հետո ով ներս էր գալիս, Օլյային ասում էր՝ ախչի, դեռ հղի՞ ես. ախչի, ե՞րբ ես ազատվում. ախչի, էդ քանի՞ ամիս եղավ: Իսկ Օլյան, ուրեմն, հղի չէր, միայն թե, ուրեմն, էդպես կարգին փորուքամակ ուներ: (Հիմա քոչել են ընտանիքով Կիրովական, ու ասում են ավելի է հաստացել): Օլյան վերջը լաց եղավ ու, երբ նստեց Սիմոնի կողքին, Սիմոնը գրկեց նրա ուսը և ասաց, որ ուրեմն կատակ է արել, կատակից լաց չեն լինի: Էդ էլ ծիծաղի առանձին նյութ դարձավ, գոռացին թե՝ Սիմոնն Օլյային գրկեց, Սիմոնն Օլյային մոբիլիզացրեց:

Կինոն վերջացավ՝ մութ ու տաք գիշեր էր, անկողնի պես: Ժողովուրդը ցրվում էր տները, մի կնոջ ձայն մթի մեջ կանչեց. «Վերևի թաղից ո՞վ կա եկող. Սիմոն, չես գալի՞ս»: Մոտեցավ, աչքը մոտեց-

րեց աչքին՝ Սոնան էր։– Սիմոն, դու ե՞ս, վախեցրիր,– ասաց։ Գնացին, կողքներից ուրիշ ոտնաձայն չկար։– Ախչի, մենակ ե՞ս։– Բա ինչ եմ։– Բա երեխեքն ո՞ւր են։– Մեծը սարվոր է, ասաց, միջնեկն ուսումնարանից դեռ չի եկել, փոքրը Օաթեր քեռոնց է գնացել։– Դե ասա ստերջ ես, էլի,– ծիծաղեց Սիմոնը։ Սոնան չծիծաղեց, մթի մեջ քսվեց նրան և ցածր-ցածր ասաց.– Ես քեզ համար Օլյան չեմ, գիտե՞ս։– Գերեզմանոցի ձորում ասաց՝ վախենում եմ, ու Սիմոնի թևը մտավ. փափուկ կրծքերով թե կոնքով հպվեց ու մի րոպե տաքացրեց Սիմոնի գլուխը։– Ես կողքիդ՝ ինչի՞ց ես վախենում։– Կամաց խոսիր,– շշուկով ասաց Սոնան, և Սիմոնը դրանից հետո չկարողացավ խոսել։ Մի խոսքով, Սիմոնն այդ գիշեր տուն չգնաց։ Իսկ աքլորականչին շորերը հագավ ու փախավ։ Սոնան քնած էր մորից մերկ, կեսը վերից վար բաց, աղջամուղջի մեջ՝ թուխ։ «Էս՝ լիրբ է հաստատ»։ Սիմոնն ուզեց նորից հանվել, բայց թե լուսանում էր։ Սիմոնը գնաց, պտտվեց լուռ դռներին, ոտքով ջրի մարգը փոխեց, ուզեց թորխիչը գտնել ու թորխել կարտոլը (Աղունը շնորհակալ կլիներ), բայց լոբուտի կողքին այդպես էլ քնել էր։ Արթնացավ լսեց, որ մեկը տաք ու լուռ քռքռում է շատ մոտիկ։ Աչքերը բացեց՝ արևը խցկվեց աչքերը, Սոնան նստած էր կողքին, ծեղով խտուտել էր Սիմոնի վիզը։ Արևը տաքացրել էր Սիմոնի գլուխը, խանձել էր շորերը. վրա նստեց՝ գլուխը մի թեթև պտտվում էր։ Սոնան լուռ ծիծաղում էր ու նրա կուրծքը թրթռում էր հագուստի հետ։ «Էս լիրբ է՞»։ Սիմոնը գլորեց նրան և թաղվեց արևի ու գլխապտույտի մեջ։

– Դե, դե, դե, դե… անհարմար զգացեք, էլի,– կանչեց Սումբաթի ձայնը. Սումբաթն էն ժամանակ ղեկավար էր։– Օրը ճաշ է դարձել՝ դեռ տանն եք, անհարմար զգացեք, էլի, դե-դե-դե-դե…

– Գնում եմ, գնում,– ասաց Փառանձեմի ձայնը,– էն է գնում էի՝ երևացիր։ Հիմա շարժվում եմ։

Սումբաթը կանգնած էր Մուրադենց թմբին, և նրանք այդպես անշարժ երկար մնացին լոբուտի մոտ, քանի որ թմբի ուղիղ դիմացն էին և եթե շարժվեին՝ Սումբաթը կտեսներ նրանց լոբուտի մոտ պառկած։ Թեթև տնքոցով լոբու մարգը ծծում էր ջուրը, կարտոլը ծաղկում էր արևի տակ, խնձորները լռիկ սպասում էին տերևների մեջ, ծիծեռնակը ճռվողում ու սուրում էր երբեմն շատ ցածր, համարյա թե քսվում էր նրանց, հետո միանգամից ճկում ու թեքում էր սլացքը։ Անտառը դանդաղ մթնում էր անցնող ամպերից ու դանդաղ բացվում։

– Դե լավ, շոգ է, խեղդվեցի…

– Փառանձեմի ետևից էլ չես հասնի:

– Փառանձեմի գլուխն էլ հողեմ, Սումբաթի գլուխն էլ:

Նա հավը բնից թռցրեց, բերեց ձվերը, կրակ վառեց, յուղ հանեց Աղունի կճուճից ու գովեց Աղունին այն բանի համար, որ հիմա հունիս էր, իսկ Աղունը դեռ ուներ անցյալ ամառվա յուղ. փափուկ յուղուծու արեց ու հաց տաքացրեց: Մառանում հանկարծ մեղր գտավ շշի մեջ ու եկավ, պնդացրեց ձվածեղը, մեղր լցրեց ձվածեղի վրա: Եվ նստեց Սիմոնի դեմ ու լաց եղավ.

– Կնոջիցդ վախենում եմ:

– Մեջքդ նրա մեջքից հաստ՝ ինչո՞ւ ես վախենում:

– Մարդն իրենն է, ես էլ էսպես անտեր շան պես սրա-նրա դռանը:

– Դե եթե էդպես ամոթի ներկայությունը կար՝ չանեիր էդ բանը:

– Որ քո կինն ամեն օր է անում, էդ լա՞վ է, օրենքո՞վ է:

Նա ասաց, որ դեռ պատերազմից առաջ հատակի տախտակ են սղոցել ու մինչև հիմա գոմի ծածկի տակ դարսած է, իսկ տան հատակն էդպես էլ մնում է տախտակելու, ի՞նչ է որ, մի երկու շաբաթվա իրիկուն-առավոտում կարվի: Եվ այդ հարցը Սիմոնի սրտին անհարմար նստեց. ուրեմն աշխարհը հաշվով է՞: Ամառվա այդ խիտ ժամանակ, գիշերը կարճ, գնա ու ուրագին արա: Թխկթխկոցն էլ հասնի սար՝ Աղունին: Աղունն էլ մի շտապ-շտապ մեջտեղ քաշի փողի հարցը: Դե հիմա արի բացատրի Աղունին, թե Արտոն ութ հարյուր չէր տալիք, այլ հազար հարյուր, Մուշեղը իր հերթին հազար հարյուր, իսկ ինքը դսեղեցի Մաթևոսին դեռ շատ վաղուց պարտք էր վեց հարյուր ռուբլի և հիմա Մուշեղից ու Արտոյից վերցրել ու տվել է դսեղեցի չգիտեմ ում՝ որպեսզի հանձնի Մաթևոսին:

– Չէ, Սոնա, դժվար հաշիվ է:

– Դե ես էլ կտամ փոքր Սիմոնին:

– Ի՞նչ անեմ, Սոնա, տուր:

Իրիկունը Սիմոնը գյուղամեջ էր իջնում՝ Սոնան տախտակը շրխկոցով դուրս էր տալիս գոմի ծածկից և բարձր-բարձր ասաց.

– Վարպետ, էգուց սկսում ե՞ս:

Հնձվորը հանդից վերադառնում էր, նրա տան մոտ էր, «էս՝ վերջնակա՞ն լիրբ է»,– մտածեց Սիմոնը, մոտիկ բանջարանոցում Աթոյենք բուկլիցում էին իրենց կարտոլը:– Հա՛, սկսո՛ւմ եմ, ուզում ես՝ հենց գիշե՛րս,– չար և ուրիշ մտքով ասաց Սիմոնը:

– Դե ժամանակն ամառ է, բա իհարկե գիշերները:

Սիմոնը ճանապարհի տակ նստեց, սպասեց բրիգադի անցնելուն, որպեսզի այդ լրբին մի երկու տեղին խոսք ասի, իսկ Սոնան կանգնել էր ձեռքերը կոնքերին ու թաքուն ծիծաղում էր: Սիմոնի մոտենալու հետ նա ձեռքերը վար բերեց ու, երբ Սիմոնը կիպ մոտեցել էր՝ նա նայում էր խռոված աղջկա նման: Նա Սիմոնին թողեց ճանապարհին ու գնաց կանգնեց դռանը. Սիմոնը գնաց դուռը՝ նա մտավ տուն: Մտավ տուն ու դերասանի լաց դրեց:– Ես մեղավո՞ր եմ, որ քո կնոջ մարդը եկել է, իմը չի եկել:

Եվ առհասարակ այսպես եղավ. Սիմոնը գյուղամեջ չգնաց. տախտակը կրեց դուռը և պատշգամբում դազգահ կապեց. տախտակի կեսը ռանդեց և կեսգիշերին գնաց քնեց տանը. առավոտյան սեղանին հաց ու հավ էր դրված. Սիմոնը կերավ ու գնաց կոլխոզ. իրիկվա կողմ անձրև սկսվեց ու այդպես էլ չդադարեց. թաց ու ոտքերը ցավելով՝ Սիմոնը գնում էր տուն – Սոնան տարավ մերկացրեց, անկողին մտցրեց մերկ, որովհետև տանը տղամարդու մեծ չափսի փոխնորդ չկար, և լվաց ու չորացրեց նրա փոխնորդը. և արդուկեց, և արդուկած փոխնորդը տաք էր:

Անձրևները շարունակվեցին երեք օր, և դա թեկուզ մեղվի և առհասարակ բերքի համար վատ էր, բայց ընդհանրապես լավ էր, որովհետև Սիմոնը միայն մեկ գործի էր: Անձրևը շրխկոցով խփում էր դիմացի անտառին, ձորը լցվել էր մեծ ջրի խշշոցով, աշխարհը մի տեսակ խուլ ու փափուկ էր, Սիմոնը չոր ծածկի տակ ռանդում, կտրում ու մեխում էր: Իսկ Սոնան նստում էր ցած աթոռին և երբեմն ծիծաղում էր, բայց ավելի հաճախ լաց էր լինում, որովհետև եղանակը անձրևային ու սրտնեղիչ էր, և, նաև, եթե պատերազմ չլիներ՝ Սոնան էլ կունենար իր սեփական ամուսինը:

Այդ օրերին երկու անգամ միս եղավ. մեկ՝ Սոնայի փոքրը Ծաթերից բերեց քեռու ուղարկածը, մեկ էլ՝ անձրևների պատճառով Խնձոր եզը սայթաքել ու ընկել էր Կիրքարից:

Անձրևներից հետո միջնեկ տղան եկավ ուսումնարանից, և ամոթ էր, որովհետև նա տասնվեց-տասնյոթ տարեկան տղա էր և կարծես թե հասկանում էր՝ որովհետև ամաչում էր, և այդ պատճառով էլ մի երկու օրից գնաց իբր Դիլիջանի ընկերների մոտ, բայց իրականում Կիրովական սիրած աղջիկ ուներ, նրա մոտ էր գնացել, այդպես էլ աղջկա ծնողները վերցրել ու նրան ամուսնացրել էին իրենց աղջկա հետ, իրենց սենյակներից մեկը տվել նրան և աշխատանքի տեղավորել: Իսկ Սոնայի փոքրը, որ հայր չէր տեսել, քանի որ օրորոցում

էր եղել՝ հորը տարել էին բանակ,– շան լակոտի պես փաթաթվում էր Սիմոնի ոտքերին, ամբողջ օրը նրա և նրա գործիքների հետ էր. Սիմոնն ու Սոնան ասում էին արհեստի սերն է, բայց արհեստինը չէր, այլ՝ հոր կարոտը, քանզի հիմա էլ, երբ Գրոզնուց պատահում է գալիս է, միամիտ մաքուր սրտով հարցնում է Սիմոնին. «Հիշում ե՞ս, հայրիկ, որ մեր տունը տախտակում էիր… որ իմ խեղճ մերը դեռ կար… հիշում ե՞ս, հայրիկ…»:

Այն օրերին, երբ դեռ հատակի գործը դեռ չէր վերջացրել, սարից լուր բերին, թե Աղունը հովիվների հետ կռվել է անվայել խոսքերով, քանի որ Աղունի ջղային շունը հովիվներին դուր չի եկել, և հովիվները խեղճ ջղայինին տվել են ֆերմայի ամբողջ երեսուն գամփռի ռեխը: Եվ խորհրդածություն եկավ այն մասին, թե լավ կլիներ այլևս չբարձրանալ սեփական տուն, և առհասարակ լավ վարվեցին Եգոր և Հմայակ եղբայրները՝ բանակից հետո իրենց կանանց դուրս գցելով և բերելով նոր կանայք, քանի որ այս պետության մեջ այնքան էլ կարիք չկա երեխաների որբության մասին մեծ մտահոգություն քաշելու, և ահա Սիրուշ կնոջից Եգորի Հրաչիկ տղան Կիրովական տուֆ քար է տաշում և գործից հետո հագնում սպիտակ վերնաշապիկ և սև կոշիկներ: Եվ առհասարակ մարդուս բախտավորությունը իր տան խաղաղությունը և հարգանքն ու սերն է միմյանց նկատմամբ, որ բացակայելով բացակայում է ժայռատակի այդ ավերակում:

Տղերքը որոշ բանի հոտ կարծես թե առել էին, և հնձի տեղը ծիծաղեցին, և Եգորն ասաց.– Հը, Սիմոն, բարի լինի, գեղեցկացել ես, հո առողջարան-մառողջարա՞ն չես գնացել:

Սիմոնը ամաչեց, բայց ծիծաղեց ու պատասխանը տվեց ըստ արժանվույն.

– Բա ի՞նչ ես կարծում:

Կանայք որ՝ հաստատ հասկացել էին: Լաչառ Շուշանը ջուր էր բերել, կանգնեց տղամարդկանց մեջ ու կանչեց.– Ո՞ւմ սիրտն է վառվում,– և ընդհանրապես ամաչկոտ Մարոն կանչեց կանանց խմբից.– Սիրահարների՞ սիրտն է վառվում,– և լաչառ Շուշանը ջրամանը ձեռքին եկավ դեպի Սիմոնը, ծիծաղելով եկավ դեպի Սիմոնը, ջրամանը տվեց Սիմոնին ու քոքռում էր, խուլ ու ներսում քոքռում էր մադյան ձիու պես:– Սեպերդ ինչի՞ ես բաց արել,– բարկացավ Սիմոնը, իսկ նա դարձյալ ծիծաղում էր: Հետո, կանանց վրա երգեցողություն էր իջել. նստում էին հանգստանալու ու երգում էին, սարից իրիկունն իջնում ու երգում էին, ձորից երամ-երամ բարձրա-

նում էին դանդաղ ու երգում էին,– և դա այն տարին էր, որ Եղըշի Արուսյակ քրոջ հարսանքով ներքևի գյուղերից բերել էին ու շատ էին երգում թիֆլիսյան «Սուլիկո» քաղցր երգը,– և մեղադրելու չէր, որովհետև համարյա թե բոլորն անմարդ էին, քանի որ Շուշանի Անդրեն խփվեց Պրագայում, Մարոյի Աշոտը զորակայանից ուզեցել էր փախչի՝ Մանացի ձորում բռնել ու գնդակահարել էին 1942-ին, շատերը կորել էին անհայտ, և կանայք մտածում էին, թե նրանք հիմա Ամերիկա հեռու երկրում փողկապավորված կարոտում են Օմակուտ գյուղի իրենց կանանց, բայց Սիմոնը լավ գիտի, որ բոլոր անհայտ կորածները խփվել են Կերչ քաղաքում:

Կարտոլի բերքահավաքին Աղունը Սոնային ուզեցել էր ծեծի՝ լաչառ Շուշանը բահն առած վրա էր քշել. «Այ ախչի, է՞յ… գլուխդ աշխատո՞ւմ է թե չէ: Հիտլերի դեմ մերոնք որ զոհվեցին՝ մենակ մեզ համար չզոհվեցին, ու ձերոնք էլ որ էդպես ողջ-առողջ եկել են՝ մենակ ձեզ համար չեն եկել, է՞յ…»: Եվ ինչպես էլ մտածում ես՝ այդ այդպես է և միայն այդպես է:

Աղունը և դիմեց գյուղխորհուրդ և լռեց ու միաժամանակ սիրովացավ: Տեղը պնդացրեց ժայռատակի այդ ավերակում, որպեսզի հետո վրա տա ավելի չար ու սուր:

– Գյուղի ամուսինը: Գյուղի հանրային ամուսինը:

– Գնա, հանրային,– ասաց,– սիրուհիդ մեռել է, տախտակավորիր:

Եվ՝ փառք աստծո, աստծուն հազար փառք, որ Կիրովականից դագաղով էին բերում, քանի որ անհարմար էր գնալ թաղմանը, որովհետև Աղունը չէր ամաչի ու կգար կաներ որևէ տգեղ անհամություն, այնինչ՝ դեռ դագաղն էլ ինքն էր սարքելու, քանի որ փոքր Սիմոնը այդպիսի դեպքերում գլուխն ազատում է, որովհետև չի կարելի դագաղը փողով սարքել: Ղազախից ֆերմայի համար քսան ձիաբեռ գարի էր բերվելու: Սիմոնը գյուղամիջում էր, ինքն իր կամքով լուռ խառնվեց գնացողներին ու երեք օր բացակայեց: Ձիերը լղար էին, սարերում դեռ քամի ու ձյուն կար, ձորի ճանապարհը դեռ ցեխ էր – լավ տանջվեցին, քանի որ քսան ձիուն ուղեկցում էին Սիմոնով հինգ մարդ: Կեսգիշերին ձիերն ախոռավորվեցին, պարկերը քաշեցին պահեստ, ցրվեցին տները:

Գյուղը քնած էր մեծ կարմիր լուսնի տակ, բույրերը թեև գարնան էին, բայց ցուրտ էր և սրսուռ ցեխ: Ձնծաղիկների խմբերը նայում էին լուսնալույսի միջից, շները մրափ էին մտել, բլրալանջի գերեզմանոցը նայում էր կարծես սուր ու լուռ: Սիմոնը մի քիչ սպասեց գերեզ-

մանոցի տակ,– այնտեղ թաղված էին կայծակնահար Եղիշը, պապ Հովհաննեսը, հորեղբայր Հովսեփը, հորեղբայրներ Եսային, Ասատուրը, Ակոփը. «Բոլորիս տեղն էլ էդ է,– ասաց Սիմոնը և գնաց իր ճանապարհը,– ու երանի ձեզ և ոչ թե մեզ, ներողություն իհարկե, վատ խոսք ասացի»: Այնտեղ էին թաղված Սաթոն, Շողերը, Մանիշակ հորաքույրը, Ազատը, Արշակը, Նեսոն, Նեսոյենց Արշակը, բոլորը, և բոլորի վրա էլ անունով ու ազգանունով քար կա, Արշակի քարին արոր ու հրացան էլ կա, իբր և հողագործ է և որսորդ, թեև իրականում ոչ որսորդ էր, ոչ էլ կարգին հողագործ… իսկ երեսուներեսունհինգ տարեկան քառասունութ տղամարդ մնաց անգերեզման սառնամանիքներում ու օտար անհայտություններում: Մահը սարսափելի չէ, որովհետև միշտ էլ տանում է մեր կողքիններին, իսկ ինքներս անմահ ենք: Միայն ափսոս է, որ աշխատող մարդիկ այդպիսով քչանում են, իսկ պլանը անընդհատ շատանում է:

Սոնայի տան մոտ Սիմոնը կանգ առավ, արահետը թեքեց, գնաց մոլորվեց գոմի ծածկի մոտ, որտեղ Սոնան շրխկոցով տախտակ էր թափում: Մորից մերկ Սոնան քնել էր վերմակի վրա և աղջամուղջի մեջ թուխ էր: Ինչո՞ւ է աշխարհն այսքան հիմար, անհասկանալի և կեղտոտ: Սիմոնը մեխվել էր Սոնայի տան մոտ, և նեղվածք ու ցուրտ էր, և ձգող ոչ մի տաք անկյուն չկար, քանի որ նա ուզում էր միայն Սոնային, իսկ Սոնան մեռած ու հողավորված էր, իսկ ժայռատակի տունը կոպիտ ու թշնամի էր Սիմոնին:– Սոնա,– բառաչեց Սիմոնը մտքում, որովհետև եթե բարձր բղավեր, հարևանները կարթնանային, շները կհաչեին, Աղունը կգար ու կկատաղեր իր անհամ կատաղությունը: «Սոնաաաա»:

Աղունը հասել էր Գոմեր, իր ասելով՝ տասը ժամ առաջ էր հասել, նստել ու լաց էր լինում, որովհետև ձին բեռան տակ մեղք էր, իսկ ինքը չէր կարող բեռնաթափել: Պարանների հանգույցները մի երկու տեղ թուլացրածի պես էին, մի տեղ կապը խճճել էր, ու նստել լաց էր լինում:

– Բա որ ասում եմ էս բեռը քո տանելու բան չի…

– Իբր թե դու ես մի առողջության տեր… Կգնաս ու կգաս՝ կհիվանդանաս,– լաց եղավ Աղունը:

– Որ ես հիվանդանամ՝ խնամող կա, բա որ դո՛ւ ես հիվանդանում:

– Էն երեխայի դպրոցին մի հետևիր,– ասաց Աղունը,– վատ է սովորում՝ վատ է սովորում: Բոլորը գլխներիս ժուռնալիստ չեն դառ-

նալու:

– Աղունիկ… Ասա՝ թող զագս չգնա, շտապ չի: Լսեցի՞ր:

Ճանապարհի կեռմանում, Հովտի տակ, հանգած շարժիչներով մի պահ շխկթխկաց բեռնատար տաքսին, հետո ծածկվեց ճանապարհի հետ, կարճ զառիվերում ղռղռաց ու մարեց:

– Իմ անունից հատուկ կասես: Կասես՝ խառնված էր, ժամանակ չունեցավ՝ գրությամբ ասելու, բայց քո հերը քեզ հատուկ խնդրեց, որ միառժամանակ զագս չգնաս:

– Թե ինչների՛ս է պետք… Թե ինչներիս է պետք: Ոչ իր էն հազարներից է մի կոպեկ քեզ հասնելու, ոչ էլ անունն է քոնը և ոչ էլ՝ լավ լինի, վատ լինի՝ հարսն է քոնը լինելու: Տվեցիր քաղաքին՝ պրծավ գնաց: Աղջկանիցդ տեղեկություն ունե՞ս: Տղեդ էլ նույնը:

– Հիմար-հիմար քիչ խոսիր:

– Կտեսնենք:

– Այսինքն՝ ինձ հատուկ բախտ է վիճակված:

– Ոչ մեկի գլուխն էլ յուղումեղրի մեջ չի:

– Իմը հատկապես: Շոֆերին ասել եմ, կողքին քեզ համար պիտի տեղ պահած լինի. բեռներդ վերև դնենք, դու շոֆերի կողքին նստիր, հանգիստ կլինես:

– Այո… խելքը՛դ… բեռներս վերև դնեմ՝ հովտեցիք նստելու փափուկ տեղ գտնեն:

Մեքենան արգելակվեց: Բրեզենտի տակ լիքը ժողովուրդ էր: Վարորդը խցից ելավ, եկավ Սիմոնին օգնելու և Աղունին ասաց.

– Դու գնա նստիր կողքիս, տիկին Աղավնի:

Նա հետևեց, որ բեռները զգույշ դնեն վերև և մտածեց. որ այդ՝ Արմենի անունին են հարգանք մատուցում կամ Վալոդ եղբոր, թե չէ՝ ով է հարգում այս փայտ կրծողին, և բեռների ետևից չարչարվելով բարձրացավ թափք:

– Շնորհակալ եմ, տղա ջան, բենզինի հոտը գլխիս է խփում:

– Կասես, իմացա՞ր,– ասաց Սիմոնը:

– Ի՞նչը:

– էն, որ քեզ ասացի:

– Ի՞նչը:

Հանգած շարժիչով՝ մեքենան գլորվեց ձորը, ղռղռաց-ղռղռաց, ետ գնաց ու բարձրացավ – Սիմոնը ձիու կողքին կանգնել էր ու ձեռքը բարձրացրած նայում էր, թե բան էր ասում:

1966